

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ПРАВОВЕДЕНИЕ
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
JURISPRUDENCE

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 3 (24)

ԵՐԵՎԱՆ - 2017

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛՏԱՐԱՆԻ. ՔՐԱՎՈՎԵԴԵՆԻԵ»
«BANBER YEREVANI HAMALSARANI. JURISPRUDENCE»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

Խմբագրական խորհուրդ.

Անտոնյան Յու. Մ. (*Մոսկվա*), Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*),
Գարուգյան Ա. Հ. (*պատասխ. խմբագիր*), Գոնչար Ն. Ա. (*գլխ. խմբագրի տեղա-
կալ*), Գևորգյան Վ. Ա., Դյուրան Բեռնարդ (*Մոնպելյե*), Խարրիևա Տ. Յա.
(*Մոսկվա*), Կուրի Հելմուտ (*Ֆրայբուրգ*), Հայկյանց Ա. Ս., Հարությունյան Գ. Գ.,
Հովակիմյան Ա. Է. (*պատասխ. քարտուղար*), Ղազինյան Գ. Ս., Մեղրյան Ա. Գ.,
Յակովլև Վ. Ֆ. (*Մոսկվա*), Սիմոնյան Ա. Հ.

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

Аветисян Л. В. (*зам. главного редактора*), Айкянц А. М., Антонян Ю. М. (*Москва*),
Арутюнян Г. Г., Габузян А. А. (*ответ. редактор*), Геворкян К. А., Гончар Н. А.
(*зам. главного редактора*), Дюран Бернард (*Монпелье*), Казинян Г. С., Кури Хель-
мут (*Фрайбург*), Мегрян С. Г., Овакимян А. Э. (*ответ. секретарь*), Симонян А. Г.,
Хабриева Т. Я. (*Москва*), Яковлев В. Ф. (*Москва*)

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

Editorial Board:

Antonyan Yu. M. (*Moscow*), Avetisyan L. V. (*Deputy editor-in-chief*), Duran
Bernard (*Montpellier*), Gabuzyan A. H. (*Managing Editor*), Gevorgyan K. A.,
Ghazinyan G. S., Gonchar N. A. (*Deputy editor-in-chief*), Harutyunyan G. G.,
Haykyants A. M., Hovakimyan A. E. (*Executive Secretary*), Khabrieva T. Ya.
(*Moscow*), Kury Helmut (*Freiburg*), Meghryan S.G., Simonyan A. H., Yakovlev
V. F. (*Moscow*)

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՄԱՆՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՄԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՆՈՐԱՍՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ՁԵՎԱԿԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)**

ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ

Մարդու իրավունքների հռչակումից բացի՝ կարևոր է դրանց կենսագործումը, այսինքն՝ ստեղծվեն բարենպաստ պայմաններ դրանք կյանքի կոչելու համար, ապահովվեն դրանց պահպանությունը և պաշտպանությունը, վերացվեն այն արգելքները, որոնք խանգարում են մարդկանց՝ օգտագործելու իրենց հնարավորությունները: Այլ կերպ ասած՝ մարդու իրավունքները պետք է լինեն երաշխավորված: Մարդու իրավունքների երաշխիքները պայմաններ, կառուցակարգեր, եղանակներ ու միջոցներ են՝ ուղղված իրավունքների և ազատությունների կենսագործմանը, դրանց պահպանությանը և պատշաճ պաշտպանությանը¹: Առանց երաշխիքների մարդու իրավունքները կմնան բարի ցանկություն, պատվիրան և չեն կարող կատարել իրենց հասարակական առաքելությունը: Այդ երաշխիքների համակարգում կարևոր տեղ են գրավում իրավականները: Դրանք Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված մարդու իրավունքներն են, դրանց իրականացման կարգը, պահպանության և պաշտպանության իրավական միջոցները, կառուցակարգերը²: Հատկապես կարևոր է պատասխանատվությունը մարդու իրավունքները խախտելու համար: Եթե մարդու իրավունքների այլ երաշխիքներն ուղղված են ընդհանուր բարենպաստ մթնոլորտի ստեղծմանը, կատարում են նախադրյալի դեր, ապա իրավական երաշխիքները կոնկրետ են, ուղղակի, ազդեցիկ ու գործուն:

Մարդու իրավունքների երաշխավորման գործում մեծ է Սահմանադրության դերը, որը պարունակում է բարձրագույն իրավական ուժ ունեցող երաշխիք-հոդվածներ: Ամենից ընդհանուր երաշխիքը սահմանադրական կարգն է, նրա համընդհանուր ճանաչում գտած

¹ Հիմնական իրավունքների ու ազատությունների երաշխիքները **ըստ գործողության ոլորտի**, լինում են՝ ներպետական և միջազգային, **ըստ ապահովման եղանակի**՝ պետական-իրավական և հասարակական, **ըստ ներգործության ձևի**՝ ընդհանուր հասարակական պայմաններ (քաղաքական, սոցիալական, տնտեսական, գաղափարական-կրթական) և իրավական երաշխիքներ (սահմանված են օրենքներով, պարտադիր են, ազդեցիկ և գործուն):

² Իրավական երաշխիքներն իրենց հերթին լինում են **սահմանադրական** (Սահմանադրությամբ ամրագրված) և **չյուզային-օրենսդրական** (տարբեր ոլորտներ կարգավորող օրենքներով ամրագրված):

սկզբունքներն ու նորմերը և, անշուշտ, դրանց անշեղ պահպանությունը: Սահմանադրական այդ երաշխիքից բխում են հիմնական իրավունքների և ազատությունների ապահովման որոշակի հնարավորություններ մարդկանց համար և որոշակի պարտականություններ՝ պետության համար: Մարդու իրավունքների ճանաչումը, պահպանությունը, ապահովումը և պաշտպանությունը պետության պարտականությունն է:

Տեսական այս համատեքստում փորձենք քննարկել ՀՀ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, վեր հանել և համակարգային ու ձևական իրավական մեկնաբանության ենթարկել դրա իրավական այն դրույթները, որոնք նորամուծություն են սահմանադրական իրավունքների ու ազատությունների կենսագործման, ինչպես նաև դրանց սահմանափակման կառուցակարգերում:

Սահմանադրական նորամուծություններից մեկը Սահմանադրության 75 հոդվածում ամրագրված դրույթն է, ըստ որի հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Այս դրույթը մարդու իրավունքների օրենսդրական երաշխիքներից է: Ամեն մի երկրում օրենսդիր մարմինը ապահովում է մարդու իրավունքների իրավական կարգավորումը և պաշտպանությունը՝ օրենքներ ընդունելու միջոցով: Օրենքները որոշակիացնում են սահմանադրական իրավունքների իրականացման կարգը, սահմանում են լրացուցիչ երաշխիքներ դրանց համար: Օրենսդիր իշխանության դերը այս հարցում հատկապես կարևոր է, քանի որ մարդու իրավունքների ապահովման, պաշտպանության հետ կապված գրեթե բոլոր հարցերի կարգավորումը վերապահված է օրենքներին: Ընդ որում, որպես կանոն, բացառապես օրենքներով են սահմանվում մարդու իրավունքներն իրականացնելու, պաշտպանելու պայմանները և կարգը, իրավունքների սահմանափակումները: Այս համատեքստում Սահմանադրությունը ամրագրում է հանրային իշխանության պարտականությունը, որը առաջին հերթին վերաբերում է օրենսդիր մարմնին. հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները պետք է սահմանեն դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Այսպիսով, Սահմանադրությունը պարտավորեցնում է օրենսդիրին ստեղծել հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանադրական չափորոշիչների կենսագործման համար անհրաժեշտ և արդյունավետ կառուցակարգ: Սակայն այդ պարտականության սուբյեկտ են նաև իշխանության այլ մարմինները, որոնցից ամեն մեկն իր իրավասության շրջանակում որոշակի դերակատարում ունի հիմնական իրավունքների և ազատությունների օրենսդրական կարգավորման գոր-

ծընթացում: Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանը տարեկան հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին: Այն կարող է պարունակել օրենսդրական կամ այլ բնույթի միջոցառումների վերաբերյալ առաջարկներ:

Հիմնական իրավունքների ու ազատությունների կենսագործումը, որպես գործընթաց, պետությունից պահանջում է ձեռնարկել օրենսդրական-նորմատիվային և կազմակերպական միջոցներ՝ սահմանադրական նորմերը ժամանակին, համակողմանի և լիակատար իրականացնելու համար: Դա հավասարապես վերաբերում է սահմանադրական բոլոր նորմերին, այդ թվում՝ ինքնաիրագործելի: Վերջիններս հիմնական իրավունքները և ազատությունները առավել ամբողջական իրացնելու համար օրենսդրական կարգավորման կարիք ունեն: Սակայն, բացի օրենսդրական կարգավորումից, հիմնական իրավունքների ու ազատությունների կենսագործման համար անհրաժեշտ են համապատասխան իրավասություն ունեցող մարմիններ՝ օժտված կազմակերպական, իրավական, գործառութային ու ինստիտուցիոնալ անհրաժեշտ լիազորություններով:

Այսպիսով, պետությունը պետք է ունենա մարդու իրավունքների ապահովման (պաշտպանության) սոցիալ-իրավաբանական կառուցակարգ, որպեսզի ապահովի մարդու իրավունքների (ներառյալ դրանց միջազգային և սահմանադրական չափորոշիչների) հարգման և կենսագործման անհրաժեշտ պայմանները: Այդ կառուցակարգի գլխավոր նպատակը հիմնական իրավունքների և ազատությունների ապահովումն ու պաշտպանությունն է: Վերջիններիս ապահովման (պաշտպանության) սոցիալ-իրավաբանական կառուցակարգի գլխավոր նպատակից բխում են հիմնական իրավունքների ու ազատությունների ոլորտի հետևյալ խնդիրները՝ իրավական ամրագրում (ճանաչում), պահպանում, պաշտպանություն, խախտված իրավունքների վերականգնում, բնակչության իրավական մշակույթի ձևավորում: Բոլոր խնդիրները պետք է լուծվեն ներդաշնակորեն: Դրանցից մեկի հետ մնալն անպայմանորեն ազդում է մյուսների արդյունավետության վրա:

Ակնհայտ է, որ հիմնական իրավունքները և ազատությունները առավել ամբողջական և արդյունավետ իրացնելու համար օրենսդրական կարգավորման կարիք ունեն: Դա նախադրյալ է սահմանադրական նորմերի իրավական որոշակիացման, մեկնաբանման ու պարզաբանման, ինչպես նաև կենսագործման միջոցով այն համալիր աշխատանքների համար, որոնք կհանգեցնեն Սահմանադրությամբ ծրագրված սոցիալական արդյունքին: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ կարգավորումը մեխանիկական գործընթաց չէ, ինչպես շատ դեպքերում մեզանում դա արվում է: Որպեսզի նորմատիվ կարգավորումը լինի արդյունավետ և ծառայի սահմանադրական հիմնական իրա-

վունքների ամրագրմամբ հետապնդվող նպատակներին, այն պետք է ներառի մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների՝ 1) իրականացման սահմաններն ու եղանակները որոշելը, 2) սահմանափակման կանոնները, 3) իրացման տարբերակված ռեժիմները, 4) պաշտպանության և պահպանության ընթացակարգերը, 5) խախտման համար պատասխանատվության և հարկադրանքի այլ միջոցները, 6) խախտումների վերականգնման և պատճառված վնասի հատուցման ձևերի ու չափերի սահմանումը, 7) հնարավոր խախտումների կանխման և նախականիման միջոցների թվարկումը³:

Հիմնական իրավունքների և ազատությունների օրենսդրական կարգավորման այս պահանջների պահպանման դեպքում պետությունը կունենա իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրության 75 հոդվածը համակարգային սերտ կապ ունի 80 հոդվածի հետ, որը սահմանում է. «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էությունն անխախտելի է»: Այս իրավական բանաձևը հասկանալու և դրա ու 75 հոդվածում ամրագրված դրույթների կապերը բացահայտելու համար պետք է քննարկել իրավական համակարգում Սահմանադրության դերի, դրա՝ որպես օրենքի գործողության առանձնահատկությունների, Սահմանադրության և մարդու իրավունքների իրավական ինստիտուտի հարաբերակցության վերաբերյալ հարցերը:

Սահմանադրությունը հիմնական օրենքն է կամ օրենքների օրենքը, որն ունի հիմնադիր բնույթ: Սահմանադրության ընդունումը չի նշանակում, որ դրա իրավական գաղափարներն ու նորմերը, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների մասին դրույթներն արդեն իրականություն են: Սահմանադրությունն ամրագրում է հասարակական հարաբերությունների վրա իրավական ներգործության ցանկալի տեսլականը, որի իրականության վերաձելն ու հասարակական հարաբերությունները սահմանադրականացնելը պահանջում են պետաիրավական ակտիվ գործունեություն:

Սահմանադրական հիմնադրույթները և պահանջները սոցիալական պրակտիկայում կենսագործելու բազմափուլ ճանապարհի առաջին օղակն են: Հիմնական օրենքի դրույթների հետագա զարգացումը կատարվում է այլ նորմատիվ փաստաթղթերի միջոցով: Սահմանադրությունն ինքնին առանց այլ օրենքների ընդունակ չէ լուծելու իրավական կարգավորման խնդիրները: Սահմանադրական շատ դրույթների գործողությունը նպատակին է ծառայում ընթացիկ օրենսդրության հետ համալիր, փոխկապակցված: Իսկ վերջինը բարդ և բազմամա-

³ Сե'у Глухарева Л. И. Права человека в современном мире (социально-философские основы и государственно-правовое регулирование). М., 2003, էջ 158:

կարդակ ստորակարգային երևույթ է: Կարգավորման այդ շղթայում (Սահմանադրություն - սահմանադրական օրենք – օրենսգիրք – օրենք - ենթաօրենսդրական իրավական ակտեր - անհատական իրավական ակտեր) վտանգ կա, որ սահմանադրական դրույթները կտարբալուծվեն ընթացիկ օրենքներում, քանի որ վերջիններս, չնայած Սահմանադրության առաջադիմական բովանդակությանը, մի շարք դեպքերում հնարավոր է, որ դրսևորեն սահմանադրական դրույթներին անհամապատասխանություն, դրանցից շեղվելու, դրանց հակասելու միտում: Այդ խնդրի իրականացման երաշխիքն առաջին հերթին ՀՀ Սահմանադրությունն է՝ որպես յուրահատուկ գաղափարական կողմնորոշիչ, բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտ: Այն իրավաբանական հիմք է իրավունքի բոլոր ճյուղերի համար, քանի որ նրա դրույթներն առաջնային, ելակետային և հիմնարար են:

Սահմանադրությունից օրենսդրության շեղվելու խնդրի լուծման՝ համաշխարհային պրակտիկայում տարածված միջոցներից է սահմանադրական դրույթներին անմիջական գործողություն տալը, ինչն էլ արված էր ՀՀ Սահմանադրության նախորդ խմբագրությունների 6 հոդվածում: Սակայն 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը հրաժարվեց այդ դրույթից:

Մարդու իրավունքները ևս ինքնաբերաբար չեն կենսագործվում և որոշակի երաշխիքների կարիք ունեն: Դրանցից մեկն էլ մարդու իրավունքների իրավական կարգավորումն է: Այդ կարգավորման գործում հիմնարար դեր է կատարում Սահմանադրությունը՝ որպես մարդու իրավունքների հիմնական ազգային աղբյուր: Հաշվի առնելով համաշխարհային փորձը, Սահմանադրությունը ամրագրում է մարդու իրավունքների սկզբունքները, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների բավականին լայն շրջանակը, դրանց սահմանադրական-իրավական բովանդակությունը, ինչպես նաև մարդու իրավունքների երաշխիքները: Մարդու կարգավիճակին նվիրված սահմանադրական նորմերի հիմքում դրված են բնական իրավունքի տեսության գաղափարները և միջազգային պայմանագրերում ամրագրված՝ մարդու իրավունքների չափանիշները: ՀՀ Սահմանադրությունը (հոդված 3) հռչակում է՝

ա) մարդը բարձրագույն արժեք է,

բ) մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է,

գ) մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են,

դ) հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Այսպիսով, ՀՀ-ում անմիջական գործողության ուժ ունեն միայն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները: Դա կարևոր երաշխիք է Սահմանադրությունից օրենսդրության շեղվելու խնդրի լուծման համար, որովհետև իրավակիրառական մարմինները որոշումներ կայացնելիս կարող են անմիջականորեն վկայակոչել հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական բովանդակությունն արտահայտող դրույթները որպես անմիջական գործող իրավունք, այլ ոչ թե օրենքի միջոցով, միջնորդավորված-անուղակի գործող իրավադրույթներ: Երկրորդ երաշխիքը նշված խնդիրը հաղթահարելու ճանապարհին հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությունն է:

ՀՀ Սահմանադրության 80 հոդվածը սահմանում է արգելք: «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էությունն անխախտելի է» իրավական բանաձևը, ըստ էության, արգելք է հանրային իշխանության և նրա մարմինների համար: Այդ արգելքից բխում է նրանց հետևյալ պարտականությունը: Հիմնական իրավունքների սահմանադրական դրույթներն իրավական կարգավորման շղթայում (Սահմանադրություն - սահմանադրական օրենք - օրենսգիրք - օրենք - ենթաօրենսդրական իրավական ակտեր - անհատական իրավական ակտեր) որոշակիացնելիս՝ չխեղաթյուրել, չխախտել, բովանդակային առումով շուտ չտալ, չչեզոքացնել դրանց էությունը: Ինչպե՞ս է դա հնարավոր: Օրինակ՝ միավորումներ կազմելու իրավունքը չի կարող ունենալ միայն սահմանադրական կարգավորում: Դա բավականին բարդ և բազմաբնույթ, օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորում պահանջող հիմնական իրավունք է, որի իրավական կարգավորումը պետք է անպայմանորեն որոշակիացվի օրենքներում: Եթե այդ ընթացքում սահմանվի միավորումների որպես կազմակերպությունների գրանցման ոչ թե ծանուցողական-ստուգող, այլ թույլատրական կարգ, ապա այդպիսի իրավակարգավորումը կարելի է համարել հիմնական իրավունքի էության խեղաթյուրում, որովհետև այդ դեպքում միավորվելու հնարավորության կենսագործումը կախված է պետության հայեցողությունից: Իսկ դա մարդու հիմնական իրավունքի էության խախտում է:

Հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանադրական չափորոշիչների կենսագործման օրենսդրական-նորմատիվ համակարգի տարրերից մեկը հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակման կանոններն են: Ինչպես նախկին երկու, այնպես էլ գործող խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը, ելնելով համաշխարհային սահմանադրական պրակտիկայից, սահմանում է իրավունքների և ազատությունների սահմանափակման կարգը և հիմքերը: Սակայն վերջին խմբագրությունը էական նորամուծություններ է կատարել այդ ինստիտուտում: Այդ նորամուծությունները հասկանա-

լու համար փորձենք դրանք ենթարկել համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանման:

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումը, Սահմանադրությամբ ամրագրված և սահմանադրված կոնկրետ իրավունքի կամ ազատության բովանդակության նեղացումը, նվազեցումը, բացառումն է պետության կողմից՝ ինչ-ինչ կարևոր շահերից ելնելով: Հասարակության զարգացումն անխուսափելիորեն ծնում է իրադրություններ, որոնք պահանջում են պետությունից սահմանափակել մարդու իրավունքները: Խնդիրը սակայն այն է, թե ինչ հիմքերով, ինչ ժամանակով և ինչ շրջանակներում կարելի է և պետք է դա արվի: Այս ոլորտում կամայականությունը և չարաշահումներն անթույլատրելի են: Որպեսզի պետությունը չդիմի կամայականության մարդու իրավունքների սահմանափակման հարցում, մշակվել և կիրառվում են որոշակի սահմանադրական չափանիշներ: Սահմանադրության 2-րդ գլխի վերլուծությունը ցույց է տալիս, որ

1) մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները բաժանված են չսահմանափակվող և սահմանափակվող հիմնական իրավունքների ու ազատությունների: Այսինքն՝ կան իրավունքներ և ազատություններ, որոնք ընդհանրապես ենթակա չեն որևէ սահմանափակման՝ ոչ մի դեպքում: Օրինակ՝ կյանքի իրավունքը, իրավահավասարության իրավունքը և այլն:

2) Սահմանափակվող հիմնական իրավունքները և ազատությունները կարելի է անվանել Սահմանադրությամբ սահմանված հիմքերով և միայն օրենքով սահմանափակվող իրավունքներ: Սահմանափակման ենթակա հիմնական իրավունքների և ազատությունների համար Սահմանադրությունը կոնկրետ իրավունքը կամ ազատությունն ամրագրող հոդվածում նախատեսում է այդ իրավունքի կամ ազատության սահմանափակման հիմքերը և կարգը: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 41 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով: Օրենքը պետք է հստակ սահմանի այդ սահմանափակումների իրավական ձևակերպումը և ապահովի սահմանափակման անհրաժեշտության պատշաճ հիմնավորումը: Այլ ակտով սահմանափակման նախատեսումը բացառվում է: Սահմանափակման հիմքերն են՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակները: Սրանք այն դեպքերն են, երբ իրավակարգին սպառնացող վտանգները հնարավոր չէ չեզոքացնել այլ կերպ, քան այդ իրավունքների ու ազատությունների սահմանափակմամբ:

3) ՀՀ Սահմանադրությունը սահմանում է նաև մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակ-

ման որոշակի ընդհանուր չափանիշներ, այն է՝ ա) սահմանափակման համաչափության սկզբունքը, բ) սահմանափակման որոշակիության սկզբունքը, գ) հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Համաձայն Սահմանադրության 76 հոդվածի («Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ»)՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26, 28-30, 35-37 հոդվածներում, 38 հոդվածի 1-ին մասում, 41 հոդվածի 1-ին մասում, 47 հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52 հոդվածում, 55 հոդվածի 2-րդ մասում, 56, 61, 63-72 հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում: Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ չեն կարող սահմանափակվել Սահմանադրության 23-26, 28-30, 35-37 հոդվածներում, 38 հոդվածի 1-ին մասում, 41 հոդվածի 1-ին մասում, 47 հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52 հոդվածում, 55 հոդվածի 2-րդ մասում, 56, 61, 63-72 հոդվածներում նշված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները:

Սահմանադրության 76 հոդվածի իմաստով սահմանափակման հիմքերը երկուսն են՝ ռազմական կամ արտակարգ դրությունը⁴: Սահմանափակման ձևը գործադիր իշխանության մարմնի որոշումն է: Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ գործադիր մարմիններն իրենց ակտերով միջնորդավորում են սահմանափակման կիրա-

⁴ Չինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում Կառավարությունը հայտարարում է **ռազմական դրություն**, ուղերձով դիմում է ժողովրդին և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք (ՀՀ Սահմանադրություն, հոդված 119): Սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, օրինակ՝ զանգվածային անկարգությունների կամ իշխանության մարմինների վրա զինված հարձակումների ժամանակ, Կառավարությունը հայտարարում է **արտակարգ դրություն**, ձեռնարկում է իրավիճակից բխող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին (ՀՀ Սահմանադրություն, հոդված 120): Սահմանադրության համաձայն՝ և՛ արտակարգ դրություն, և՛ ռազմական դրություն հայտարարվելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ՝ որպես գործադիր իշխանության նկատմամբ իրականացվող վերահսկողության ձև: Ազգային ժողովը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերացնել ռազմական կամ արտակարգ դրությունը կամ չեղյալ հայտարարել դրանց իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը:

ռումը կոնկրետ հարաբերություններում: Մակայն այդպիսի սահմանափակման պայմանները, սահմանափակման գործադիր սուբյեկտներն ու օբյեկտները, եղանակներն ու ժամկետները պետք է հստակորեն սահմանված լինեն օրենքով: Սահմանադրության ուժով ռազմական և արտակարգ դրության իրավական ռեժիմները սահմանվում են օրենքով, որն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Գործադիր մարմինները միայն կիրառում են դրանք:

Ռազմական կամ արտակարգ դրության վերաբերյալ օրենքները նախատեսում են հիմնական իրավունքներն ու ազատությունները ժամանակավորապես կասեցնելու (օրինակ՝ հանրահավաքների իրավունք) կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկելու միջոցառումներ: Գործադիր մարմինները դրանք կիրառում են միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը:

Հիմնական իրավունքների սահմանափակման հարցում 2015 թ. սահմանադրական բարեփոխումների նորամուծություններից են հիմնական իրավունքների սահմանափակման երկու սկզբունքի՝ համաչափության և որոշակիության ամրագրումը: Այդ սկզբունքները կարևոր նշանակություն ունեն հիմնական իրավունքների պաշտպանության համար:

Սահմանադրության 78 և 79 հոդվածների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում ամրագրված նորմ-սկզբունքներում իրավունքների և պարտականությունների բաշխման հարցում առկա են որոշակի տարբերություններ: Ընդհանուրն այն է, որ երկու սկզբունք-նորմերի՝ որպես սուբյեկտիվ հիմնական իրավունքի կրողներ են բոլորը: Պետությունը Սահմանադրությամբ սահմանված կարգով կարող է սահմանափակել հիմնական իրավունքները: Մակայն ամեն ոք ունի իրավունք-ակնկալիք, որ այդ սահմանափակումը կլինի համաչափ և որոշակի: Այս իրավունքին թղթակցում է պետության պարտականությունը՝ դուրս չգալ այդ սկզբունքների շրջանակից: Այս ընդհանուր պարտականությունը կրող կոնկրետ հանրային սուբյեկտները, սակայն, տարբեր են: Սահմանափակման որոշակիության սկզբունքից բխող պարտականության կրողն օրենսդիր մարմինն է, որին վերապահելով հիմնական իրավունքների սահմանափակման իրավագործություն, Սահմանադրությունը պարտավորեցնում է ապահովել սահմանափակման որոշակիությունը:

Համաչափության սկզբունք-նորմից բխող պարտավորության կրողը համարվում է ոչ միայն օրենսդիրը (կամ ցանկացած իրավաստեղծ), այլև իրավակիրառող մարմինները՝ գործադիր, իրավապահպան, հսկող, վերահսկող և այլն: Այսինքն՝ հիմնական իրավունքների սահմանափակման համաչափությունը վերաբերում է ոչ միայն օրենսդիրին, երբ որ նա սահմանում է հիմնական իրավունքների սահմանա-

փակման ընդհանուր օրենսդրական նորմերը (օրինակ՝ նախնական կալանքի վերցնելու կարգը), այլ նաև իրավակիրառողներին, ովքեր օրենսդրական ընդհանուր նորմերի հիման վրա ընդունում են հիմնական իրավունքների սահմանափակման անհատական ակտեր (օրինակ՝ կոնկրետ անձի նկատմամբ նախնական կալանք կիրառելու որոշումը):

Հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքն ունի իր տարրերն օրենսդրման ոլորտում: Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների մի մասը ենթակա է սահմանափակման Սահմանադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան և միայն օրենքով: Օրինակ՝ Սահմանադրության 27 հոդվածի առաջին մասի 4-րդ կետը սահմանում է «հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով» օրենքով սահմանված կարգով անձնական ազատությունից զրկելու հնարավորությունը: Սահմանադրական նորմն ամրագրում է ազատությունից զրկելու կոնկրետ հիմք-նպատակ, որի կիրառման կարգը պետք է սահմանվի օրենքով:

Համաչափության սահմանադրական սկզբունքն օրենսդրին թելադրում է, որ տվյալ դեպքում անձնական ազատության սահմանափակման օրենսդրական միջոցներն ընտրելիս դրանք պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Օրենսդիրի կողմից ընտրված միջոցը պետք է համարժեք լինի սահմանափակվող հիմնական իրավունքի կամ ազատության նշանակությանը:

Եթե օրենսդիրի ընտրած միջոցը պիտանի և անհրաժեշտ չէ Սահմանադրությամբ սահմանված նպատակի համար, ինչպես նաև համարժեք չէ սահմանափակվող իրավունքի կամ ազատության նշանակությանը, ապա օրենսդիր իշխանության գործելակերպը կարելի է որակել Սահմանադրությամբ իրեն վստահված լիազորության չարաշահում: Այլ կերպ ասած՝ պետությանն արգելվում է ձեռնարկել կամ ընտրել միջոցներ, որոնք չափից շատ են սահմանափակում հիմնական սահմանադրական իրավունքը:

Այսպիսով, սահմանափակումների չարաշահումն արգելված է: Ենթադրենք, օրինակ՝ օրենսդիրը սահմանում է անձնական ազատությունից զրկելու նախնական կալանքի կարգ, որը կիրառվում է բոլոր հանցանքների համար՝ անխտիր և պարտադիր: Արդյո՞ք պիտանի և անհրաժեշտ է օրենսդիրի տված լուծումը՝ հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակի համար: Անկասկած, ընտրված միջոցը համարժեք չէ անձնական ազատության՝ որպես սահմանափակող հիմնական իրավունքի նշանակությանը, որովհետև այն ենթադրում է բոլոր տեսակի հանցավոր արարքների համար մեղադրվող անձանց կալանավորում, ինչը նպա-

տակահարմար չէ ո՛չ տնտեսապես, ո՛չ էլ պատժական քաղաքականության տեսանկյունից. արարքների մի մասը նույնիսկ ազատագրկամեր չի պատժվում, այլ տուգանքով: Համարժեքությունը թելադրում է, որ եթե Սահմանադրությամբ սահմանված նպատակին, այսինքն՝ հանցագործի փախուստը կանխելուն հնարավոր է հասնել այլ ճանապարհներով, ապա հարկավոր է ընտրել արարքին համարժեք միջոցը, օրինակ՝ գրավը, ստորագրությունը չհեռանալու մասին և այլն:

Այդպիսով, համաչափության սկզբունքը պահանջում է օրենսդիրից չխախտել սահմանափակման չարաշահման արգելքը, իսկ դրա համար սահմանափակման միջոցներն ընտրելիս օրենսդիրը պետք է իրականացնի պարզաբանման եռափուլ գործընթաց

ա) պիտանի՞ է արդյոք ընտրված սահմանափակման միջոցն օրինական հասարակական շահերի (նպատակների) ապահովման համար,

բ) անհրաժե՞շտ է արդյոք ընտրված սահմանափակման միջոցը դրված հասարակական նպատակին հասնելու համար,

գ) համարժե՞ք է արդյոք օրենսդիրի ընտրած, թեկուզև պիտանի ու անհրաժեշտ, սահմանափակման միջոցն այն հասարակական շահին, որը բավարարվում է այդ միջոցի սահմանման օգնությամբ: Այսինքն՝ հանցավորության դեմ պայքարի նպատակը (շահը) նախնական կալանքի համատարած կիրառմամբ պե՞տք է արդյոք գերակշռի անձնական ազատության հիմնական իրավունքի նշանակությանը:

Հիմնական իրավունքների սահմանափակման որոշակիության սկզբունքի սահմանադրական ձևակերպումը պահանջում է, որ «հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»: Սահմանադրական ամբարգրմամբ իրավական որոշակիության սկզբունքը դառնում է իրավական ակտերի սահմանադրականության որոշման չափանիշ:

Իրավական որոշակիության պահանջի իրականացման խնդրին բազմիցս անդրադարձել է ՀՀ սահմանադրական դատարանը, արտահայտելով իրավական հետևյալ դիրքորոշումը. «Որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ կտա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Մեկ այլ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն ընդգծել է, որ «նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը, նրանք պետք է հնարավորությո՞ւնը»:

յուն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»:

Իրավական որոշակիության պահանջից շեղումներ են ոչ միայն կոնկրետ օրենքի ոչ հստակ, երկիմաստ ձևակերպումները, այլև երկու տարբեր օրենքների հակասությունը, ինչը պայմաններ է ստեղծում դրանց կամայական մեկնաբանությունների համար, առաջացնում է հակասական, շիլաշփոթ իրավակիրառական պրակտիկա:

Հիմնական իրավունքների սահմանափակման սահմանադրական դրույթները՝ ամրագրված Սահմանադրության 76, 78, 79 հոդվածներում, սերտ համակարգային կապի մեջ են 81 հոդվածի 2-րդ մասի դրույթի հետ: Սահմանադրության 81 հոդվածի 2-րդ մասն ազդարարում է, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները: Սահմանադրության 81 հոդվածի 2-րդ մասի կարգավորիչ դերը հասկանալու համար այն պետք է նախ դիտարկել Սահմանադրության նշված հոդվածների հետ համակարգային կապերում: Այդ հոդվածների համակարգային-համեմատական մեկնաբանությունը հնարավորություն է տալիս կառուցելու հետևյալ տրամաբանորեն փոխկապված իրավական դատողությունները:

Սահմանադրության 81 հոդվածի 2-րդ մասում նախատեսված դրույթի պարտավոր կողմը Հայաստանի Հանրապետությունն է՝ որպես պետություն: Պետությունն իրավունք ունի Սահմանադրությամբ սահմանված հիմքերով և միայն օրենքով սահմանափակել սահմանափակման ենթակա հիմնական իրավունքները և ազատությունները, սակայն այդ ընթացքում նա պարտավոր է կիրառել միայն Սահմանադրությամբ սահմանված սահմանափակման եղանակները՝ սահմանադրական սկզբունքների հիման վրա: Այդ սահմանափակումները սակայն չեն կարող լինել ավելին, քան ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված սահմանափակումները: Պետության այդ պարտականությանը թղթակցում է անձանց իրավունքը՝ պահանջելու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակման ներպետական ինստիտուտի և միջազգային պայմանագրերով սահմանված կարգի ու հիմքերի համապատասխանություն: Հակառակ դեպքում, այսինքն՝ միջազգային պարտավորությունները գերազանցելու միջոցով շեղումները հիմք են մարդու իրավունքների ու ազատությունների միջազգային մարմիններին դիմելու համար: «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը», «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին համաձայնագիրը» և մի շարք այլ փաստաթղթեր օգտագործում են «սահմանափակում» եզրույթը: «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին համաձայնագիրը» օգտագործում է «պետությունների նահանջը իրենց պարտավորություններից» եզրույթը: «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտ-

պանության մասին եվրոպական կոնվենցիան» օգտագործում է «սահմանափակում» և «նահանջը իրենց պարտավորություններից» եզրույթները՝ համարելով դրանք հավասարաթեք հասկացություններ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի» 15 հոդվածն արգելում է շեղվել կյանքի իրավունքից, խոշտանգումների և ստրկության արգելքներից, չկա հանցագործություն առանց օրենքի կամ միջազգային իրավունքի սկզբունքից:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիրը (1966 թ.)» սահմանում է, որ պաշտոնապես հայտարարված, ազգի գոյությունը վտանգող հանրային արտակարգ դրության պայմաններում մասնակից պետությունները կարող են շեղվել դաշնագրով ստանձնած պարտավորություններից, սակայն խստորեն պահպանելով այն սահմանները, որոնք անհրաժեշտ են և բխում են կոնկրետ իրավիճակից: Նման շեղումները չպետք է հակասեն պետության այլ միջազգային պարտավորություններին (օրինակ՝ միջազգային մարդասիրական իրավունքի ժնկյան նորմերին) և չպետք է ներառեն միայն ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ սոցիալական ծագման վրա հիմնված խտրականություն (հոդված 4): Դաշնագրի պաշտոնական մեկնաբանություններում նկարագրվում են այն պահանջները, որոնք ներկայացվում են հանրային արտակարգ դրությանը: Ոչ բոլոր «արտակարգ իրավիճակներն» են, որ կարող են պետություններին հնարավորություն տալ վերապահումներ կատարելու իրենց ստանձնած միջազգային պարտավորություններից: Արտակարգ իրավիճակն այնպիսի իրական կամ սպառնացող բացառիկ հանրային վտանգի, ճգնաժամի իրավիճակ է, որը ազդում է երկրի կամ տվյալ վայրի ողջ բնակչության վրա, և իրենից ներկայացնում է վտանգ հասարակության կազմակերպված կյանքի համար: Պետությունները ցանկացած իրավիճակում չեն կարող շեղվել դաշնագրով ամրագրված՝ կյանքի խոշտանգումներից, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից և պատժից ազատ լինելու, ստրկությունից ազատ լինելու, մտքի, խղճի և կրոնի ազատության, ցանկացած վայրում իրավունքի առջև որպես անձ ճանաչվելու իրավունքներից, ինչպես նաև պայմանագիրը կատարելու անկարողության համար ազատությունից զրկելու, վատթարացնող քրեական իրավունքի հետադարձ կիրառման արգելքներից:

Բանալի բառեր – *Սահմանադրություն, իրավունքների կենսագործում, կառուցակարգ, անմիջական գործողություն, իրավունքների սահմանափակում, որոշակիություն, համաչափություն, պիտանի, անհրաժեշտ, էության անխախտելիություն*

АРТУР ВАГАРՅАН – *Конституционные нововведения в механизмах реализации и ограничения прав и свобод человека (системное и формально-юридическое толкование).* – В статье рассматриваются положения Конституции

РА в редакции 2015 г. – нововведения в механизмах реализации и ограничения прав и свобод человека. Через системное и формально-юридическое толкование раскрываются содержание таких конституционных понятий, как необходимые для эффективной реализации прав и свобод, организационные механизмы и процедуры, нерушимость сущности положений об основных правах и свободах, соразмерность и определённость их ограничения. Эти нововведения – важные конституционно-правовые гарантии для защиты основных прав.

Ключевые слова: *реализация прав, непосредственное действие, ограничения прав, определённость, соразмерность, пригодность, необходимость, нерушимость сущности*

ARTUR VAGHARSHYAN – *Constitutional Innovations in the Mechanisms of Implementation and Limitation of Human Rights and Freedoms (Systemic and Formal Legal Interpretation)*. – The legal provisions of the Republic of Armenia Constitution with amendments from 2015, which are innovations in regard to the mechanisms of implementation and limitation of human rights and freedoms, are discussed in the Article. In this context, the constitutional concepts “organizational mechanisms and procedures necessary for the effective exercise of rights and freedoms”, “inviolability of the essence of the provisions on fundamental rights and freedoms”, “proportionality of the limitation” and “certainty of the limitation” are interpreted in the systemic and formal legal sense. These innovations in the institutes of the fundamental rights and freedoms are foreseen as important constitutional-legal guarantees for the protection of the basic rights.

Key words: *Constitution, implementation of rights, mechanism, direct action, limitations of rights, certainty, proportionality, suitable, necessary, inviolability of the essence*

**ՆԱԽԱԳԱՀԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՀՀ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

ՎԱՇԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Կիսանախագահական կառավարման ձևից խորհրդարանականի անցնելու անհրաժեշտությունը «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ»-ում հիմնավորվում է կիսանախագահական կառավարման համակարգի պայմաններում իշխանությունների բաժանման և հավասարակշռման ոլորտում առկա հիմնախնդիրներով: Այդ խնդիրների մի զգալի մասի առկայությունը մեկնաբանվում է կիսանախագահական կառավարման համակարգում Հանրապետության նախագահի իրավական կարգավիճակի առանձնահատկություններով: Առանձնացվող խնդիրների մեծամասնությունը ուղղակի կամ միջնորդավորված ձևով առնչվում է հատկապես նախագահի իրավական կարգավիճակին: Հայեցակարգում մասնավորապես նշվում է՝

– Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի ոչ միաժամանակյա ընտրությունների պարագայում առաջնային մանդատ ունեցող երկու ինստիտուտները հայտնվում են հանրային վստահության տարբեր մակարդակներում, և խորհրդարանում Հանրապետության Նախագահին հարող մեծամասնության բացակայության պայմաններում և իրավամտաձողության ներկա դրսևորումների համատեքստում էապես մեծանում է քաղաքական ճգնաժամի ու առճակատման վտանգը,

– Ազգային ժողովում Հանրապետության նախագահի բացարձակ մեծամասնության¹ առկայության և ներխորհրդարանական հակակշիռների բացակայության պայմաններում մեծանում է քաղաքական մենիշխանության վտանգը,

– Հանրապետության նախագահի գործառույթների և լիազորությունների միջև ապահովված չէ անհրաժեշտ համամասնականությունը,

– առկա չէ Հանրապետության նախագահ-Ազգային ժողով, Հանրապետության նախագահ-կառավարություն փոխհարաբերություններում սահմանադրական լիազորությունների հարցով առաջացած վեճերի լուծման հստակ սահմանադրաիրավական կառուցակարգ,

¹ Հայեցակարգում օգտագործված՝ «նախագահի բացարձակ մեծամասնություն» հասկացությունը հայերեն չէ: Ճիշտ կլիներ օգտագործել «նախագահի կողմնակիցների կամ կուսակիցների բացարձակ մեծամասնություն» տարբերակը:

– գործադիր իշխանության ներքին երկվությունը՝ պայմանավորված Հանրապետության նախագահի և կառավարության գործառույթային լիազորություններով, բավարար չափով հստակեցված չէ, որի հետևանքով կառավարությունը ամբողջական ու համալիր պատասխանատվությամբ չի իրականացնում գործադիր իշխանությանը բնորոշ գործառույթները:

Այդպիսով, Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների բաժանման ու հավասարակշռման ոլորտում խնդրահարույց և ոչ կատարյալ լուծումների հանգեցնող՝ Հայեցակարգի ութ կետերում ձևակերպված հիմնախնդիրներից հինգում ուղղակիորեն հիշատակվում է Հանրապետության նախագահի ինստիտուտը, և խնդիրների առկայությունը բացատրվում է նախագահի սահմանադրական կարգավիճակի ամրագրման թերություններով: Եվս մեկ հիմնախնդիր, որի ձևակերպման մեջ թեկուզև ուղղակիորեն չի հիշատակվում նախագահի ինստիտուտը, նույնպես կապված է Հանրապետության նախագահի սահմանադրական կարգավիճակի հետ. իրավական պետության չափորոշիչներին համարժեք չի երաշխավորվում դատական իշխանության հակակշռող դերն իշխանության այլ ճյուղերին²: Հայեցակարգի հեղինակների կարծիքով, հենց կառավարման խորհրդարանական ձևն է ընձեռում քննարկվող և մի շարք այլ խնդիրների արդյունավետ և հետևողական լուծման հնարավորություններ³:

Ուստի խորհրդարանական կառավարման համակարգում Հայաստանի Հանրապետության նախագահի սահմանադրական կարգավիճակին առնչվող հիմնախնդիրների քննարկումը տեսական և գործնական առումով խիստ արդիական է:

Հանրապետության նախագահի կարգավիճակը և գործառույթները տեսականորեն պետք է ամրագրված լինեին փոփոխված Սահմանադրության՝ «Հանրապետության նախագահի կարգավիճակը և գործառույթները» վերտառությամբ 123 հոդվածում: Սակայն այդ հոդվածում Հանրապետության նախագահի կարգավիճակի վերաբերյալ ամրագրված է միայն մեկ դրույթ, որով նախագահին վերապահված է միայն մեկ գործառույթ:

Սահմանադրության 123 հոդվածի 1-ին մասում ամրագրված է միայն, որ «Հանրապետության նախագահը պետության գլուխն է»: Մինչդեռ իրավաբանական գրականության մեջ «կարգավիճակ» եզրույթը բնորոշվում է որպես մարմնի, կազմակերպության, պաշտոնատար անձի, անհատի նորմատիվ իրավական ակտերով սահմանված վիճակ: Կարգավիճակի միջուկն են կազմում տվյալ սուբյեկտի իրավունքները և պարտականությունները (լիազորությունները), ինչպես նաև իրավա-

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», Եր., 2014, էջ 42-45:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 47-52:

բանական պատասխանատվությունը⁴: Հետևաբար, Հանրապետության նախագահի կարգավիճակի բնորոշման համար անհրաժեշտ է բացահայտել նախագահի գործառույթները և այդ գործառույթների իրագործման նպատակով նրան վերապահված լիազորությունների համակարգը:

Սահմանադրության 123 հոդվածի 2-րդ մասով ամրագրված է Հանրապետության նախագահի միայն մեկ գործառույթ՝ «նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը»: Միննույն ժամանակ նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ Հանրապետության նախագահն «իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով»: Սակայն Սահմանադրության տեքստում կամ Հայեցակարգում Հանրապետության նախագահի այլ գործառույթներ չեն հիշատակվում: Հատկանշական է, որ ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամներ և խորհրդարանական կառավարման ձևի անցման հիմնական գաղափարախոսներ Վ. Պողոսյանի ու Ն. Սարգսյանի հեղինակած աշխատության մեջ նույնպես առանձնացվում է Հանրապետության նախագահի միայն մեկ, այսպես կոչված հիմնական՝ Սահմանադրության պահպանման գործառույթ⁵: Մինչդեռ Սահմանադրությամբ պետք է երաշխավորվի «գործառույթ-ինստիտուցիոնալ լիազորություններ» շղթայի ներդաշնակությունը⁶: Ավելացնենք, որ գործառույթների համակարգի բացակայությունը ըստ էության անիմաստ է դարձնում տվյալ պետաիրավական ինստիտուտի գոյությունը:

Իրավաբանական գրականության մեջ մշակված չէ «պետական մարմնի գործառույթներ» եզրույթի միասնական բնորոշում: Հիմնվելով «պետության գործառույթներ» եզրույթի առավել տարածված բնորոշման վրա, որի համաձայն՝ պետության գործառույթները նրա գործունեության հիմնական ուղղություններն են, որոնք արտահայտում են հասարակության կառավարման ոլորտում պետության էությունն ու սոցիալական նշանակությունը, նպատակները և խնդիրները⁷, պետական մարմնի գործառույթները կարելի է բնորոշել որպես այդ մարմնի գործունեության հիմնական ուղղություններ, որոնք արտահայտում են տվյալ մարմնի սոցիալ-նպատակային նշանակությունը, այդ մարմնի

⁴ Տե՛ս, օրինակ, «Конституционное право: Энцикл.словарь» (Отв. ред. и рук. авт. кол. Авакьян С. А.). М., 2001, էջ 559, **Варлен М. В.** Статус парламентария: теоретические проблемы. М., 2011, էջ 28-37, **Մ. Պողոսյան**, Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակի իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Բ. գ. թ. ատենախոսություն, Եր., 2013, էջ 15-18:

⁵ Տե՛ս **Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան**, Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Եր., 2016, էջ 127-128:

⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», Եր., 2014, էջ 28:

⁷ Տե՛ս, օրինակ, **Алексеев С. С.** Право на пороге нового тысячелетия. М., 2000, էջ 113:

տեղն ու դերը պետական մարմինների համակարգում:

Հանրապետության նախագահի գործառույթների բացահայտումը (եթե դրանք առկա են) մեթոդաբանական տեսանկյունից թերևս հնարավոր կլինեն նախագահի սահմանադրորեն ամրագրված լիազորությունների համադրմամբ՝ նրա գործունեության հիմնական ուղղությունները բացահայտելու միջոցով: Սակայն փոփոխված Սահմանադրության տարբեր հոդվածներով ամրագրված են այնպիսի բազմաբնույթ և հասարակական ու պետական կյանքի տարբեր բնագավառներին առնչվող լիազորություններ, որ այդպիսի համադրումը և դրա հիման վրա նախագահի այլ գործառույթների բացահայտումը դառնում են անհնար:

Պետք է արձանագրել, որ Հանրապետության նախագահի լիազորությունների անհաջող ձևակերպումների հետևանքով Սահմանադրության տեքստում տեղ են գտել մի շարք հակասական կամ երկիմաստ լուծումներ:

Այսպես՝ Սահմանադրության 129 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ազգային ժողովի ընդունած օրենքը Հանրապետության նախագահը ստորագրում և հրապարակում է քսանմեկօրյա ժամկետում կամ նույն ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով»: Նախ պետք է արձանագրել, որ իրավաստեղծ, մասնավորապես, օրենսդրական գործընթացը բաղկացած է մի քանի փուլից, և փաստաթուղթը դառնում է նորմատիվ իրավական ակտ (օրենք) միայն բոլոր փուլերը անցնելուց հետո: Սա համընդհանուր ճանաչում ունեցող իրավաբանական արսիոմա է: Տվյալ դեպքում օրենք է անվանվում մի փաստաթուղթ, որը դեռևս ստորագրված չէ, և հրապարակված չէ օրինագիծը: Ավելին՝ այդ փաստաթղթի սահմանադրականությունը ստուգելուց հետո՝ մինչև դրա հրապարակումը և ուժի մեջ մտնելը, կարող է Ազգային ժողովում դրա նոր քննարկման անհրաժեշտություն առաջանալ:

Դեռևս 1982 թ. հիմնավորել էինք «իրավաստեղծ մարմնի կամք» («նորմատիվ իրավական ակտի նախագիծ») և «պետական կամք» («նորմատիվ իրավական ակտ») եզրույթների տարանջատման անհրաժեշտությունը: Իրավաստեղծ մարմնի կամքը դեռևս պետական կամքի արտահայտություն չէ: Երբեմն կարող է անցնել բավականին երկար ժամանակ և առաջանալ նոր իրավաբանական փաստերի անհրաժեշտություն, որպեսզի իրավաստեղծ մարմնի կամքը պետական կամքի արտահայտության հատկանիշ ստանա⁸:

«Օրենք» և «օրինագիծ» եզրույթները նույնականացնելու հետևանքով Հայաստանի Հանրապետության սահմանադրական պրակտիկայում ներմուծվում է նոր կառուցակարգ՝ ուժի մեջ չմտած օրենք կոչվող օրինագծի նախնական սահմանադրական վերահսկողություն: Մին-

⁸ Մանրամասն տե՛ս **Степанян В. В.** Механизм выражения интересов в социалистическом праве // "Советское государство и право", 1982, № 5, էջ 54-55:

նույն ժամանակ, Մահմանադրության 169 հոդվածի 1-ին մասի 2-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ կետերի համաձայն՝ օրենքի սահմանադրականության հարցով Մահմանադրական դատարան կարող են դիմել նաև պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, կառավարությունը և այլ սուբյեկտներ: Ակնհայտ է նաև, որ այս դեպքում արդեն սահմանված է հետագա սահմանադրական վերահսկողության կառուցակարգ՝ վերահսկողություն ուժի մեջ մտած օրենքների նկատմամբ: Ընդ որում՝ Մահմանադրության մեջ չկա որևէ վերապահում այն մասին, որ նախնական վերահսկողության ենթարկված օրենքները ենթակա չեն հետագա վերահսկողության: Ավելին՝ Մահմանադրության 129 հոդվածի 1-ին մասի և 169 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի բովանդակության համադրումից ստացվում է, որ Հանրապետության նախագահը մինչև օրենքի սահմանադրականության հարցով կարող է երկու անգամ դիմել Մահմանադրական դատարան՝ նախնական և հետագա վերահսկողության կարգով:

Մահմանադրության 139 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հանրապետության նախագահը Մահմանադրության 131-137 հոդվածներով, 155 հոդվածի 3-րդ մասով, 166 հոդվածի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված դեպքերում կարող է համապատասխան ակտը եռօրյա ժամկետում իր առարկություններով վերադարձնել առաջարկություն ներկայացնող կամ միջնորդությամբ դիմող մարմնին: Եթե իրավասու մարմինը չի ընդունում այդ առարկությունը, ապա Հանրապետության նախագահը ստորագրում է համապատասխան ակտը կամ դիմում է Մահմանադրական դատարան»: Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված է. «Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, ապա համապատասխան ակտը ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով»: Այս կարգավորումները բավականին խնդրահարույց են:

Մահմանադրության 139 հոդվածի 2-րդ մասում հիշատակվող իրավադրույթներով ամրագրված են նախագահի լիազորությունների իրացման տարբեր ընթացակարգեր: Լիազորությունների մի մասը Հանրապետության նախագահը իրացնում է վարչապետի, կառավարության, Ազգային ժողովի կամ Բարձրագույն դատական խորհուրդի առաջարկությամբ: Թերևս ենթադրվում է, որ այս դեպքերում համապատասխան մարմինները իրենց առաջարկությունները ներկայացնում են նախագահի ակտի (ավելի ճիշտ՝ ակտի նախագծի) ձևով⁹:

Մինչդեռ Մահմանադրության 134 («Քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծումը»), 135 («Ներում շնորհելը») և 136 («Պարգևատրումը և պատվավոր կոչումների շնորհումը») հոդվածներով նախատեսված լիազորությունները նախագահը իրացնում է «օրենքով սահ-

⁹ Իհարկե, իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է, որ համապատասխան դրույթը պետք է ամրագրվեր Մահմանադրությամբ:

մանված դեպքերում և կարգով»: Բհարկե կարելի է ենթադրել, որ այս դեպքերում նույնպես օրենքով կարող է սահմանվել նախագահին ակտի ձևով առաջարկություններ ներկայացնելու մասին դրույթ և համապատասխան սուբյեկտների ցանկ: Մակայն այս դեպքում կստացվի, որ հարցերը փաստացի լուծվում են առաջարկություններ ներկայացնողների կամաարտահայտությամբ, այլ ոչ թե այն սուբյեկտի կամաարտահայտությամբ, որին դիմել են միջնորդությամբ, այսինքն՝ Հանրապետության նախագահի:

Առավել դժվար է մեկնաբանել այն իրավիճակը, որը ստեղծվում է Սահմանադրության 139 հոդվածով սահմանված ընթացակարգը՝ 132 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ամրագրված՝ նախագահի լիազորության (նախագահը կառավարության առաջարկությամբ կնքում է միջազգային պայմանագրեր) նկատմամբ կիրառելու դեպքում: Մինչդեռ 132 հոդվածով ուղղակի սահմանված է, որ նույն հոդվածի երկրորդ մասի դրույթները տարածվում են նաև այդ լիազորության վրա:

Միջազգային պայմանագրի կնքումը գործընթաց է, որը բաղկացած է մի շարք փուլերից՝ պայմանագրի տեքստի նախապատրաստում և ընդունում, պայմանագրի տեքստի նույնականության (աուտենտիկության) հավաստում, պայմանագրի ստորագրում, պայմանագրի պարտադիրության վերաբերյալ համաձայնության արտահայտում: Ընդամին՝ երկկողմ պայմանագրի տեքստը նախապատրաստվում է սովորական դիվանագիտական ուղիներով, իսկ բազմակողմ պայմանագրի տեքստը՝ միջազգային կոնֆերանսներում և միջազգային կազմակերպություններում պետությունների լիազորված ներկայացուցիչների բանակցությունների միջոցով¹⁰: Այսպիսով, միջազգային պայմանագրեր կնքելու նպատակով բանակցություններին, պայմանագրերի տեքստերի նախապատրաստմանը մասնակցում է և տեքստի նույնականությունը հավաստում է ոչ թե նախագահը, այլ, որպես կանոն, գործադիր իշխանությունը ներկայացնող լիազորված անձինք, որոնց նախագահը չի կարող տալ համապատասխան հանձնարարականներ: Հետևաբար, նախագահը կառավարության առաջարկությամբ կարող է միայն ստորագրել միջազգային պայմանագրերը:

Անհասկանալի է, թե ինչ ակտի ձևով է կառավարությունը նախագահին ներկայացնում միջազգային պայմանագիր կնքելու մասին առաջարկություն: Տեսականորեն կարելի է պատկերացնել երկու տարբերակ.

ա) կառավարությունը նախագահին ներկայացնում է հրամանագրի նախագիծ, որով նախատեսվում են միջազգային պայմանագրի կնքմանն ուղղված միջոցառումներ և տրվում են համապատասխան հանձնարարականներ հենց գործադիր իշխանության համակարգում

¹⁰ Մանրամասն տե՛ս Վ. Քոչարյան, Միջազգային իրավունք, Եր., 2002, էջ 105-112, «Международное право». М., 2016, էջ 250-236:

գտնվող պետական մարմիններին և պաշտոնատար անձանց,

բ) կառավարությունը նախագահին ներկայացնում է միջազգային պայմանագրի տեքստը, և եթե նախագահը չի կատարում 139 հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, ապա պայմանագրի մյուս կողմը (կողմերը) պարզապես տեղեկացվում է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ պայմանագիրը ստորագրված է համարվում իրավունքի ուժով:

Հետևաբար կարելի է միանշանակ արձանագրել, որ Սահմանադրության 139 հոդվածով սահմանված ընթացակարգը կիրառելի չէ 132 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ամրագրված նախագահի լիազորության նկատմամբ: Այստեղ առկա է սահմանադրական կարգավորման բաց քանի որ Սահմանադրությամբ սահմանված չէ նախագահի այդ լիազորության իրացման որևէ այլ ընթացակարգ:

Փոփոխված Սահմանադրությամբ ամրագրված Հանրապետության նախագահի լիազորությունների և դրանց իրականացման կառուցակարգերի վերլուծությունը անհրաժեշտաբար հանգեցնում է ընդհանուր տեսական բնույթի կարևոր հարցադրման՝ արդյո՞ք այդ հնարավորությունները պետաիշխանական լիազորություններ են: Պետական իշխանական լիազորությունների համար բնութագրական է այն, որ համապատասխան մարմինը կամ պաշտոնատար անձը՝ ա) օժտված է իրավունքով և պարտականությամբ՝ սեփական կամաարտահայտությամբ և պատասխանատվությամբ ընդունելու նորմատիվ կամ անհատական որոշումներ, որոնք պարտադիր են հասցեատեր ֆիզիկական և իրավաբանական բոլոր անձանց համար, բ) համոզելու և պետական հարկադրանք կիրառելու միջոցով ապահովում է իր որոշումների կատարումը: Մինչդեռ Սահմանադրությամբ ամրագրված Հանրապետության նախագահի լիազորությունների իրականացման ընթացակարգերը հանգեցնում են նրան, որ նախագահի լիազորությունների իրականացման գործընթացում նրա կամաարտահայտությունը և դիրքորոշումները որևէ նշանակություն չունեն: Ըստ էության՝ Հանրապետության նախագահի անունից որոշումներ են ընդունում նրան առաջարկություններ և միջնորդություններ ներկայացնող մարմինները, և համապատասխան որոշումները հենց այդ սուբյեկտների, այլ ոչ թե նախագահի կամաարտահայտության արդյունք են: Հենց այդ պատճառով Հանրապետության նախագահի լիազորությունների ուսումնասիրությամբ չի հաջողվում բացահայտել նրա գործառնությունները և դրա հիման վրա հստակեցնել նախագահի իրավական կարգավիճակը:

Խորհրդային հայտնի անեկդոտի օրինակով՝ նախագահը ունի բազմաթիվ իրավունքներ, բայց չի կարող անել ոչինչ: Ուստի նախագահի իրավական կարգավիճակի հիմնախնդիրները հետագա խոր ուսումնասիրությունների կարիք ունեն:

Բանալի բառեր – Մահմանադրություն, խորհրդարանական կառավարում, Հանրապետության նախագահ, իրավական կարգավիճակ, գործառույթներ, լիազորություններ

ВАГЕ СТЕПАНЯН – Правовой статус президента в системе парламентского правления РА. – Переход от полупрезидентской формы правления к парламентской в "Концепции конституционных преобразований РА" обосновывается проблемами в сфере разделения властей. Причём эти проблемы, по мнению авторов концепции, обусловлены особенностями правового статуса президента в системе полупрезидентской формы правления.

В статье рассматриваются особенности правового статуса президента при парламентском правлении в Армении. Анализ конституционных норм, закрепляющих полномочия президента, приводит к однозначному выводу, что он лишён собственных полномочий. Нормативные и индивидуальные акты президента фактически выражают не его волю, а тех субъектов, которые вносят соответствующие предложения и представления.

Ключевые слова: Конституция, парламентское правление, президент республики, правовой статус, функции, полномочия

VAHE STEPANYAN –The Legal Status of the President in the RA System of Parliamentary Government.– The transition from a semi-presidential form of government to a parliamentary one in the "Concept of Constitutional Restructuring of the Republic of Armenia" is justified by issues in the doctrine of separation and balancing of the powers. And these issues, according to the authors of the Concept, are primarily due to the peculiarities of the legal status of the president in the system of semi-presidential government.

The article examines the peculiarities of the legal status of the President in the system of the parliamentary government of the Republic of Armenia. The analysis of the constitutional norms envisaging the powers of the President of the Republic of Armenia, with the impregnability leads to the conclusion that the President is deprived of his own powers. The normative and individual acts of the President are in fact an expression not of his will, but of the will of those sub-entities who make appropriate proposals and representations.

Key words: Constitution, parliamentary government, President of the Republic, legal status, functions, powers

**ՄՏՔԻ, ԽՂՃԻ ԵՎ ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Սահմանադրական բարեփոխումների առանցքային հարցադրումները առնչվում են նաև կրոնական կառույցների կարգավիճակին և կրոնական ազատության բաղադրիչներին, որոնք էլ ներկայումս օրինաչափորեն հանգեցրել են օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելուն: Մասնավորապես, ՀՀ արդարադատության նախարարությունը մշակել և շրջանառության մեջ է դրել «Մտքի, խղճի, կրոնի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրան հարակից այլ օրենքների նախագծերը¹: Սակայն այդ ոլորտին վերաբերող լրջագույն հայեցակարգային լուծումների բացակայության պայմաններում, կարծում ենք, պարզապես հնարավոր չէ ակնկալել համարժեք ու հիմնավորված օրենսդրական կարգավորումներ: Ընդհանրապես կրոնին առնչվող եզրույթների, իրավական ինստիտուտների մասին դեռևս հնարավոր չէ միասնական մոտեցումներ առանձնացնել ոչ միայն իրավական ակտերում, այդ թվում միջազգային իրավունքի փաստաթղթերում, այլև իրավագիտական և կրոնագիտական աղբյուրներում:

Այս իրավիճակը միանգամայն ըմբռնելի և կանխատեսելի է, քանի որ նշված հարցադրումները, տարաբնույթ աշխարհաքաղաքական շարժառիթներով պայմանավորված, հայտնվել են գաղափարախոսության անհամեմատ սուր տարաձայնությունների կիզակետում: Կրոնական ուսմունքների, դավանաբանական ուղղությունների և դրանց իրացմանը կոչված կրոնական կազմակերպությունների նկատմամբ ինչպես ներքաղաքական, այնպես էլ արտաքին ուժերի հետաքրքրությունը չափազանց մեծ է, քանզի դրանք ընկալվում են որպես հանրության ինքնագիտակցության ձևավորումը կանխորոշող հզորագույն լծակներ:

Սույն հետազոտությունը նվիրված է վերը նշված հոգևոր ուղղվածության արժեքների առնչությամբ սահմանադրական բարեփոխումներով ամրագրված հիմնադրույթների օրենսդրական իրացման արդի հիմնախնդիրներին և դրանց լուծման ուղիներին:

Նկատենք, որ համակարգված և համալիր հետազոտություն ապա-

¹ Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայք էջը՝ Justice.am

հովելու նկատառումով նպատակահարմար ենք գտել առանձնացնելու այն հարցադրումները, որոնք ոչ միայն խիստ արդիական են, այլև դարձել են առավել լուրջ տարածայնությունների թիրախ:

1. *Առանցքային է շարունակում մնալ կրոնական կառույցների և պետության փոխհարաբերության բնույթը*: Այս տեսանկյունից իրավական նորամուծությունն այն է, որ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 17 հոդվածով ամրագրվել է կրոնական կազմակերպությունների պետությունից անջատ լինելու իրավական նորմը: Նկատենք, որ 1995 թ. Սահմանադրությամբ ընդհանրապես որևէ անդրադարձ չկար այս հարցին, իսկ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ (8.1. հոդված) ամրագրված էր եկեղեցու՝ պետությունից անջատ լինելու գաղափարը: Ինչ խոսք, «կրոնական կազմակերպություն» եզրույթն իրավաչափ է, քանզի «եկեղեցի» եզրույթի բովանդակությունը խիստ սահմանափակ է և չի կարող ընդգրկել այն կրոնական կառույցները, որոնք սկզբունքորեն չունեն «եկեղեցի»: Մակայն այս նորամուծությունն անխուսափելիորեն հանգեցնում է մի նոր հարցադրման՝ արդյո՞ք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նույնպես համարվում է կրոնական կազմակերպություն:

Ցավոք, վերը նշված օրինագծերի հանրային և պաշտոնական քննարկումների շրջանակներում հարցի առնչությամբ արտահայտված դիրքորոշումները, մեր կարծիքով, բավարար չափով համարժեք չեն Սահմանադրության հիշյալ հիմնադրույթների էությանը, ինչը պայմանավորված է դատողությունների հիմքում «կրոնական կազմակերպություն» եզրույթը բացառապես կազմակերպաիրավական տեսակ ընկալելու մեթոդաբանությամբ: Մինչդեռ կարծում ենք, Սահմանադրության համարժեք մեկնաբանության պահանջը թելադրում է, որ «կրոնական կազմակերպություն» եզրույթը դիտարկվի երկու իմաստով: Մասնավորապես, Սահմանադրության 17 հոդվածում տրված է այդ եզրույթի հավաքական իմաստը, այսինքն՝ «կրոնական կազմակերպություն» ասելով նկատի են առնվում կրոնական գործունեությունն իրականացնող բոլոր կառույցները՝ անկախ իրենց կազմակերպաիրավական տեսակից ու կարգավիճակից, քանի որ տվյալ դեպքում խոսքը բացառապես կրոնական գործունեություն իրականացնող կառույցների՝ պետությունից անջատ լինելու մասին է: Ինչ վերաբերում է Սահմանադրության արդեն 41 հոդվածում օգտագործված նույնանուն եզրույթին, ապա կարող ենք հասկանալ բացառապես կազմակերպաիրավական տեսակը, քանի որ խոսքը որոշակի օրինաչափ կառույցների միջոցով անձանց իրավունքների իրացման կառուցակարգային երաշխիքների մասին է:

Հաճախ հնչող այն հարցը, թե ինչպես կարող է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին չլինել կրոնական կառույց, եթե իրականացնում է կրոնական գործունեություն, և ընդհանրապես՝ ի՞նչ է

այն, եթե ոչ կրոնական կազմակերպություն, ըստ էության, հիմնադուրկ է, քանի որ անտեսվում է այդ կառույցի սահմանադրական կարգավիճակը: Դժվար չէ նկատել, որ այս հարցադրումների հիմքում ընկած է այն մտայնությունը, որ ցանկացած կառույց պետք է պատկանի օրենսդրությամբ նախատեսված որևէ կազմակերպարավական տեսակի, սակայն շրջանցվում է այն, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին արդեն իսկ ունի սահմանադրական կարգավիճակ, ճանաչված է որպես ազգային եկեղեցի, ուստի անվերապահորեն պետք է գործի հենց Սահմանադրության ուժով: Առնվազն տրամաբանական, ողջամիտ չէ արդեն իսկ Սահմանադրությամբ նախատեսված որևէ կառույցի՝ օրենքով վերապահել կազմակերպարավական որևէ տեսակին պատկանելու պարտավորություն՝ դրանից բխող իրավական հետևանքներով հանդերձ:

Այն, որ կազմակերպարավական որևէ տեսակին անվերապահորեն պատկանելու վերաբերյալ դիրքորոշումը աղերսներ ունի նաև Սահմանադրության հետ, վկայում է Սահմանադրության հիշյալ 41 հոդվածի 4-րդ մասով սահմանված հետևյալ նորմը. «Կրոնական կազմակերպությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով»: Եթե Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ևս դիտարկվի որպես կրոնական կազմակերպություն, ապա ստացվում է, որ շուրջ 18 դար գոյություն ունեցող և արդեն իսկ Սահմանադրությամբ ճանաչված կրոնական կառույցի *ստեղծումը* պետք է կախվածության մեջ դրվի օրենսդրական կարգավորումներից: Այսպիսի եզրահանգումը առնվազն չի կարող հիմնավորված ու ողջամիտ համարվել: Սահմանադրությամբ ճանաչված իրավունքի սուբյեկտների ստեղծման հարցը դուրս է օրենսդրական կարգավորման շրջանակներից, քանի որ Սահմանադրությունը, օժտված լինելով բարձրագույն իրավաբանական ուժով, չի կարող ստորադասվել օրենքին, ուստի կարող է խոսք լինել սոսկ այդ կառուցակարգերի ձևավորման կարգի մասին:

Նկատենք նաև, որ Սահմանադրության 17 հոդվածում օգտագործված «կրոնական կազմակերպություն» եզրույթը լայն իմաստով մեկնաբանելու պարագայում սպառիչ պատասխան է տրվում նաև այն հարցին, թե արդյոք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ևս անջատ է պետությունից, եթե կրոնական կազմակերպություն չէ: Այս հարցի պատասխանը դրական է այն առումով, որ վերջինս ևս Սահմանադրության 17 հոդվածով կրոնական կազմակերպությանը վերապահված իմաստով համարվում է այդպիսին, այսինքն՝ կրոնական մյուս կազմակերպությունների համար նախատեսված կազմակերպարավական տեսակին չի պատկանում, բայց կրոնական գործունեություն իրականացնող ինքնուրույն սահմանադրական կարգավիճակ ունեցող կրոնական կառույց է:

Կարծում ենք, որ հիշյալ նախագծերում կրոնական կազմակեր-

պության բնորոշումը հարիր չէ տարածել նաև կրթական, հրատարակչական հաստատությունների վրա, քանզի դրանք սուկ կրոնական կազմակերպությունների ստորաբաժանումներն են կամ, որպես ինքնուրույն իրավաբանական անձինք, հիմնադրված են վերջիններիս կողմից և չունեն կրոնական կազմակերպությանը բնորոշ ինքնուրույն կարգավիճակ: Օրինակ, վերջիններս չեն կարող օգտվել կրոնական կազմակերպությունների համար Սահմանադրությամբ (41 հոդվածի 4-րդ մաս) սահմանված ինքնավարության կարգավիճակից, մասնավորապես հասկանալի չէ, թե ինչ տրամաբանությամբ կարող է հրատարակչությանը վերապահվել ինքնավարություն, երբ այն սուկ կրոնական կազմակերպության տպագրական պատվերներն է կատարում և այլն:

2. *Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սահմանադրական կարգավիճակին առնչվող հաջորդ հարցը վերաբերում է այդ կառույցի և կրոնական կազմակերպությունների փոխհարաբերությանը՝ իրավահավասարության երաշխավորման տեսանկյունից:* Խնդրին առնչվող իրավական կարգավորումներն արտաքուստ կարող են այնպիսի տպավորություն թողնել, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կրոնական կազմակերպություն չհամարելը և պետության հետ հարաբերությունները օրենքով կարգավորելու սահմանադրական հիմնադրույթ նախատեսելն իբր աղերսներ ունեն Սահմանադրության 41 հոդվածով ամրագրված կրոնական կազմակերպությունների իրավահավասարության սկզբունքի հետ:

Տվյալ դեպքում եթե անգամ համարենք, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կրոնական կազմակերպություն է նաև Սահմանադրության 41 հոդվածով ամրագրված իրավական նորմերի իմաստով, միևնույնն է, դա չի հանգեցնի իրավահավասարության խախտման: Անհրաժեշտ ենք համարում նկատել, որ կրոնական կազմակերպությունների իրավահավասարության սկզբունքն ինքնանպատակ չէ, այն բացառապես պետք է միտված լինի մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտման տեսանկյունից խտրականության արգելքի երաշխավորմանը:

Վերոհիշյալ դատողությունների համատեքստում նպատակահարմար է քննարկել հետևյալ հարցադրումը. կարո՞ղ է արդյոք իրավական կարգավիճակի որոշակի առանձնահատկություններով, այդ թվում որոշակի արտոնություններով օժտված կրոնական կառույցի առկայությունը հանգեցնել մտքի, խղճի և կրոնի ազատության խտրականության: Այս հարցին միանշանակ պատասխանելն իրավաչափ չէ, քանզի առանձին դեպքերում, այո՛, մտքի, խղճի և կրոնի ազատությունն անմիջականորեն փոխկապակցված է կրոնական կառույցի իրավական կարգավիճակի հետ, ուստի օրենսդրի խնդիրն էլ հենց այն է, որ միանգամայն իրավաչափ ու խելամիտ շրջանակներում վերապահվեն

այնպիսի առանձնահատկություններ և արտոնություններ, որոնք նշված սահմանադրական ազատության իրացման գործընթացում խտրականության հնարավոր դրսևորումների ոչ մի սողանցք չթողնեն: Այսպես, օրինակ, ավանդական եկեղեցիները շատ երկրներում ենթակա չեն գրանցման, քանի որ արդեն իսկ փաստացի գործում են, ունեն դարեր շարունակ ձևավորված կայուն կառույցներ, ուստի շարունակում են գործել օրենքի ուժով: Այս հանգամանքը գործնականում չի հանգեցնում խղճի և կրոնի ազատության խտրականության, քանզի անհատը լիարժեք կարող է իրացնել այդ ազատությունը անգամ համապատասխան կրոնական կազմակերպության բացակայության պայմաններում: Կրոնական կազմակերպությունը բնավ ազատության լրացուցիչ բաղադրիչների աղբյուր չէ, այն սոսկ կրոնական որևէ ուսմունքի հետևորդների համատեղ շահերը ներկայացնելու կազմակերպարավական միջոց է, ինչը եթե անգամ բովանդակում է որոշակի երաշխիքներ, այնուամենայնիվ չի կարող որակվել որպես խտրականության դրսևորում:

Ի դեպ, հայրենական օրենսդրությունը հիշյալ հարցադրման առումով ևս առաջնորդվել է ողջախոհության սահմաններում, քանզի բազմաթիվ այնպիսի արտոնություններ, որոնք կարող էին հանգեցնել կրոնական կազմակերպությունների կարգավիճակով պայմանավորված խտրականության, անխտիր վերապահվել են բոլոր կրոնական կազմակերպություններին: Այսպես, բոլոր կրոնական կազմակերպություններն ունեն քաղաքացիաիրավական և վարչաիրավական միատեսակ կարգավիճակ, հավասարապես կարող են ներկայացնել իրենց հետևորդների կրոնական ազատությամբ թելադրված շահերը և այլն:

Այն, որ ավանդական եկեղեցիներին² որոշ արտոնություններ վերապահելը չի կարող հանգեցնել կրոնական կառույցների իրավահավասարության խախտման, ընդունում են նաև միջազգային փորձագիտական հեղինակավոր կազմակերպությունները: Այսպես, Վենետիկի հանձնաժողովի, Եվրախորհրդի մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրենության, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կրոնի կամ համոզմունքի ազատության հարցերով խորհրդատվական խորհրդի դիտարկմամբ. «Կրոնական որոշակի համայնքների համար նպաստավոր պայմաններ սահմանելը սկզբունքորեն չի հակասում Կոնվենցիայի պահանջներին՝ պայմանով, որ տարբերակված վերաբերմունքը թելադրված լինի օբյեկտիվ և խելամիտ հիմնավորումներով»³: Այս

² Այս եզրույթը ամրագրվել է կրոնական կառույցների կազմավորման ու գործունեության կարգին նվիրված Արևմտյան Եվրոպայի երկրների մեծ մասի օրենսդրական ակտերում, որոնց կանդիդատնաք ստորև: Նկատենք միայն, որ այս եզրույթը դեռևս խիստ միատեսակ իմաստով չի գործածվում, առավելապես նկատի է առնվում քրիստոնեական ուղղվածության ավանդական եկեղեցիների համակարգը:

³ Վենետիկի հանձնաժողովի, Եվրախորհրդի մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրենության, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Կրոնի կամ համոզմունքի ազա-

խնդրին նույն դիրքորոշմամբ անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը⁴ (այսուհետև՝ ՄԻԵԴ):

Հավելենք, որ հիշյալ դիրքորոշումն իր արտացոլումն է գտել ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի՝ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ» 2017 թ. հոկտեմբերի 16-ի թիվ FORB-ARM/311/2017AIC եզրակացության մեջ (23-24-րդ կետեր)⁵: Ընդ որում՝ այս եզրակացությունը վերաբերում է ՀՀ արդարադատության նախարարության մշակած «Մտքի, խղճի, կրոնի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին, որն էապես տարբերվում է միջազգային փորձագիտական հանձնաժողովների կողմից 2009 թ. ներկայացված համանուն նախագծից:

Հավելենք, որ ավանդական եկեղեցիներին որոշակի արտոնություններ վերապահելը լայն տարածում ունի նաև Արևմտյան Եվրոպայի երկրներում: Ընդ որում այս դեպքում միջազգային փորձը վկայում է, որ նշված եկեղեցիներին վերապահվում են անհամեմատ լայն արտոնություններ, քան ընդունված է հայրենական իրավական համակարգում: Այսպես, ա) Դանիայի Թագավորությունում լյութերական եկեղեցին պետական եկեղեցու կարգավիճակ ունի և ֆինանսավորվում է պետության կողմից, ընդ որում՝ միապետը ևս պետք է լյութերական դավանանք ունենա, բ) Նորվեգիայում լյութերական եկեղեցին ևս պետական եկեղեցու կարգավիճակ ունի, իսկ քաղաքացիների համար սահմանված է կրոնական հարկ, գ) Սլովակիայում գործում է եկեղեցու և պետության միջև հարաբերությունների կարգավորման պայմանագրային համակարգը, ըստ որի՝ կրոնի ուսուցումը պարտադիր է տարրական ու միջակարգ դպրոցներում⁶ և այլն⁷:

Այսպիսով, առնվազն ողջամիտ չեն այն պնդումները, այդ թվում՝ Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունների առնչությամբ, թե իբր հարկ է էապես նվազեցնել կրոնական կազմակերպությունների գրանցման համար անհրաժեշտ պայմանների շրջանակն ու բնույթը, դրանք պետք է պայմանավորված լինեն ինչպես մտքի, խղճի և կրոնի

տության հարցերով խորհրդատվական խորհրդի 2009 թ. հունիսի 23-ի թիվ 520/2009 համատեղ եզրակացությունը «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», CDL-AD(2009)036, Ստրասբուրգ:

⁴ Տե՛ս Եհովայի վկաները և այլք ընդդեմ Ավստրիայի (Religionsgemeinschaft der Zeugen Jehovas and Others v. Austria), 2008 թ. հուլիսի 31-ի թիվ 40825/98 գործով որոշման 9-րդ կետ:

⁵ Տե՛ս <http://www.legislationline.org>

⁶ Եկեղեցու և պետության միջև պայմանագրային սկզբունքով հարաբերությունների կարգավորման համակարգը գործում է նաև եվրոպական մի շարք այլ երկրներում (Ավստրիա, Բուլղարիա, Լեհաստան, Բուլղարիա և այլն), ինչպես նաև հարևան Վրաստանում:

⁷ Տե՛ս <https://www.svoboda.org/a/407739.html>

ազատության երաշխավորման պահանջների, այնպես էլ այլոց իրավունքների և ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգությամբ թելադրված սահմանափակումների խելամիտ հավասարակշռվածությամբ:

Գործող օրենսդրության, ինչպես նաև նշված նախագծերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռևս խիստ խնդրահարույց է Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների հարցում անհրաժեշտ որոշակիություն ապահովելուն նվիրված իրավակարգավորման ընդհանուր որակը. մասնավորապես իրեն զգացնել է տալիս էլեկտրոնային կառավարման ներկայիս պահանջներին ու հնարավորություններին ոչ համարժեք կարծրատիպերի առկայությունը: Այսպես, «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածով ամրագրված է, որ պետական սեփականություն հանդիսացող Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմական, հոգևոր, մշակութային և վավերագրական ժառանգությունը կարող է օտարվել կամ մի վայրից մեկ այլ վայր փոխադրվել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն նախապես տեղյակ պահելով: Այն, որ նախապես տեղյակ պահելն ինքնին ավելորդ լիազորություն է, անվիճելի է, եթե նկատի ունենանք, որ ՀՀ կառավարության պաշտոնական էլեկտրոնային կայքում բոլոր նախագծերը նախապես զետեղվում են և հավասարապես մատչելի են բոլորին: Բացի այդ, իրավական նորմի տարրական պահանջներից է այն, որ այն խախտելու համար նախատեսվեն համարժեք իրավական հետևանքներ, ինչը տվյալ պարագայում ևս բացակայում է: Ինչևէ, առաջարկվում է նշված օրենքի 5 հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Պետական սեփականություն հանդիսացող Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմական, հոգևոր, մշակութային և վավերագրական ժառանգությունը կարող է օտարվել կամ մի վայրից մեկ այլ վայր փոխադրվել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու համաձայնությամբ»: Բնականաբար, բերված օրինակը սոսկ մասնավոր է, սակայն, կարծում ենք, այն կարող է ուղենիշ լինել այդ ոլորտին առնչվող մյուս հարաբերությունների համալիր կարգավորման տեսանկյունից:

Այս և նմանաբնույթ այլ դեպքերի առնչությամբ հարկ է նկատել, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կարգավիճակը թելադրված է նաև կրոնական այդ կառույցի նկատմամբ տարբեր դարաշրջաններում պետական իշխանության կողմից իրականացված այնպիսի ոտնձգություններով, որոնք առնվազն աղերսներ ունեն համարժեք փոխհատուցման համակարգեր սահմանելու անհրաժեշտության հետ: Մասնավորապես, եկեղեցապատկան բազմաթիվ պատմական անշարժ հուշարձաններ, ձեռագիր գրքեր (օրինակ՝ ներկայումս

Մատենադարանում պահվողների մի մասը) և այլ մշակութային արժեքներ բռնագրավվել են կամ պարզապես ոչնչացվել են: Այս համատեքստում հարկային որոշակի քաղաքականությունը անվերապահորեն արտոնություն որակելը չի կարող իրավաչափ համարվել, այլ կարող է միայն գնահատվել որպես պատճառված մեծ չափերի հասնող վնասի մասնակի փոխհատուցման եղանակ:

3. *Իրավական ինչ իմաստ ու նշանակություն ունի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին որպես «ազգային եկեղեցի» ճանաչելը:* Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասն ամրագրում է. «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»: Համալիր հետազոտություն ապահովելու նկատառումով սահմանադրական այս նորմի առնչությամբ հարկ է ոչ միայն բացահայտել «ազգային եկեղեցի» եզրույթի էությունը, այլև պատասխանել այն հարցին, թե Սահմանադրությունը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ճանաչելով որպես «ազգային եկեղեցի», ընդգծում է վերջինիս միայն պատմական և առաքելությունը, թե՛ նաև ներկա սահմանադրաիրավական կարգավիճակը:

Հիշյալ հարցադրմանն անդրադառնալը, թերևս, թելադրված է Սահմանադրության 18 հոդվածով ամրագրված «բացառիկ առաքելություն» եզրույթով: Խնդիրն այն է, որ երբեմն այդ եզրույթն անհարկի շփոթի տեղիք է տալիս՝ թողնելով այնպիսի տպավորություն, թե խոսքը իբր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ բացառապես անցյալում ունեցած պատմական առաքելության մասին է⁸: Այս հիմնահարցի տարբեր կողմերը հետազոտող որոշ հեղինակներ էլ պարզապես շրջանցել են «բացառիկ առաքելության» բովանդակությունը համալիր բացահայտելու հարցադրումը՝ սահմանափակվելով հանրահայտ փաստեր արձանագրող այնպիսի դատողություններով, ըստ որոնց՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ունի պատմական առաքելություն, իսկ ներկայումս պետության հետ հարաբերությունները կարգավորվում են օրենքով⁹: Անտեսվում է այն ակնհայտ իրողություն-

⁸ Տե՛ս, օրինակ, Հայաստանի ավետարանական ընտանիքի եկեղեցիների համագործակցության 2017 թ. հունիսի 30-ի դիտողություններն ու առաջարկությունները ՀՀ արդարադատության նախարարության կողմից 01.06.2017 թ. ներկայացված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ (ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքը Justice.am «Մտքի, խղճի, կրոնի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրան հարակից այլ օրենքների նախագծերը) կայքը):

⁹ Տե՛ս, օրինակ, Վ. Հ. Սայադյան, Կրոնական կազմակերպությունների սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2017, էջ 113-148:

նը, որ Սահմանադրությունը նախ և առաջ իրավական ակտ է, ուստի վերջինիս կոչումը ոչ թե պատմական փաստեր արձանագրելն է, այլ հասարակական հարաբերություններ կարգավորելը: Եվ եթե անգամ Սահմանադրությամբ հղում է արված պատմական փաստերին, ապա դրանք սոսկ արձանագրումներ չեն, այլ իրավական նորմի հիպոթեզի բաղադրիչ են, այսինքն՝ դրանցով ընդգծվում է իրավակարգավորման կոնկրետ տարբերակ ընտրելու օրենսդիրի բուն նպատակը:

Վերադառնալով Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասով ամրագրված վերոհիշյալ դրույթին՝ հարկ ենք համարում նկատել, որ այն միաժամանակ ընդգծում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ոչ միայն պատմական, այլև «de facto» (փաստացի) առաքելությունը, ուստի այդ առաքելությունը կյանքի կոչելու նպատակով նույն հոդվածի արդեն 2-րդ մասով ամրագրվում է, որ Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով¹⁰: Ներկայումս այդպիսի օրենք գործում է, որն ընդունվել է 2007 թվականի փետրվարի 22-ին («Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը): Միանգամայն իրավաչափ կլիներ, եթե հենց այդ օրենքով տրվեր «ազգային եկեղեցի» եզրույթի բնորոշումը, սակայն նախապատվությունը տրվել է սոսկ սահմանադրական դրույթի տառացի կրկնությանը, ինչն առնվազն անթույլատրելի է իրավաբանական տեխնիկայի տեսանկյունից:

Հարկ է նկատել, որ հիշյալ եզրույթն անձանոթ է միջազգային փորձին. մասնավորապես առավել ընդունված է կրոնական գործունեություն իրականացնող կառույցներին վերապահել «պետական եկեղեցի», «ավանդական եկեղեցի» և նմանաբնույթ այլ անվանումներ: Հավանաբար, միջազգային աղբյուրներում համանման եզրույթների բացակայությունը մի կողմից, հայրենական իրավական համակարգում առանց համարժեք մեկնաբանությունների սահմանադրական այդպիսի եզրույթներում ընդունելը մյուս կողմից գործնականում հանգեցրել են հիշյալ եզրույթի բովանդակությունը բացահայտելու հարցում որոշակի բարդությունների: Հավելենք նաև, որ եզրույթի մեկնաբանությունից ձեռնպահ մնալն ուղեկցվել է խղճի ազատության արտահայտման առումով խտրականության մեղադրանքի թիրախ ընկալվելու որոշակի մտավախությամբ:

¹⁰ Ընդ որում, ոչ մի նշանակություն չունի, թե նշված հարաբերությունները կկարգավորվեն առանձին օրենքով, թե կրոնական կառույցների գործունեությանը վերաբերող որևէ այլ օրենքով: Այս դեպքում պարզապես ընդգծվում է երկու կարևոր հանգամանք՝ ա) պետության հետ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերություններն առանձնահատուկ են, դրանց վրա չեն կարող ամբողջությամբ տարածվել կրոնական կազմակերպությունների կազմավորման ու գործունեության համար նախատեսված իրավակարգավորումները և բ) այդ հարաբերությունները հարկ է կարգավորել օրենքով:

Սակայն այդ խիստ առանցքային հարցի իրավական կարգավորումը տևական ժամանակով անտեսելը հղի է իրավական որոշակիության հիմնարար սկզբունքի խաթարմամբ պայմանավորված վտանգներով:

Պատեհ ենք համարում այս առնչությամբ առաջադրելու «ազգային եկեղեցի» եզրույթի սահմանման մեր դիրքորոշումը. «Հայաստանի Հանրապետությունը, ճանաչելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին որպես ազգային եկեղեցի՝ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կենտրոնով, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունների նվիրապետական աթոռներով, և նրա բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում, իր հարաբերությունները Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ կառուցում է օրենքով նախատեսված հիմքերով և ինքնավարության սկզբունքով՝ վերապահելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն իր կարգավիճակին համահունչ լիազորություններ՝ պետական գրանցմանը, վերահսկողությանը, պաշտամունքային կառույցների, ինչպես նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն պատկանող մշակութային հաստատությունների կարգավիճակին, այլ երկրներում գործունեության, հարկային քաղաքականության, քաղաքացիական կացության ակտերի գրանցմանն առնչվող, կրթական, բարեխնամ հարաբերությունների ոլորտներում»:

4. *Ինչպիսի՞ չափանիշներով կարող է պայմանավորված լինել մտքի, խղճի և կրոնի ազատության սահմանափակումը:* Սահմանադրության 41 հոդվածի 2-րդ մասով նշված հարցադրման առնչությամբ ամբողջով իրավական նորմը, մեր կարծիքով, լրացուցիչ պարզաբանման կարիք ունի: Նախ հարկ է նկատի ունենալ, որ տվյալ դեպքում բնավ կարիք չկար սահմանափակումների ողջ համակարգը հավասարապես տարածել ինչպես մտքի, այնպես էլ խղճի և կրոնի ազատության վրա: Նկատենք, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի¹¹ 9 և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի¹² 18 հոդվածներում նշված սահմանափակումները միանգամայն իրավաչափորեն վերաբերում են սոսկ խղճի և կրոնի արտահայտման ազատությանը:

Այս դեպքում փորձ է արվել առաջադրելու Սահմանադրության նորմի այնպիսի շարադրանք, որի պարագայում տրամաբանական կհամարվեր սահմանափակումների տարածումը նաև մտքի ազատության վրա, մասնավորապես խոսվում է ոչ թե «մտքի ազատության», այլ «մտքի ազատության արտահայտության» մասին: Սակայն

¹¹ Տե՛ս www.arlis.am/DocumentView.aspx?docID=20870

¹² Տե՛ս www.arlis.am/DocumentView.aspx?docid=18500

հարկ է նկատի ունենալ, որ «մտքի ազատության արտահայտությունը» չի կարող ընկալվել որպես մտքի ազատություն, քանզի այն բովանդակային կտրվածքով արդեն մտքի, կարծիքի արտահայտման ազատություն է, որը մարդու ինքնուրույն ազատություն է և նախատեսված է Սահմանադրության մեկ այլ 42 հոդվածով: Ընդ որում, նույն այդ հոդվածով կարծիքի արտահայտման համար նախատեսված են այնպիսի սահմանափակումներ, որոնք ամրագրված են հիշյալ 41 հոդվածով:

Ասվածից բխում է, որ Սահմանադրության 41 հոդվածի 2-րդ մասի դրույթներն օրենսդրությամբ իրացնելիս հարկ է նկատի ունենալ վերոհիշյալ վերապահումները և անհարկի չտարածել մտքի ազատության վրա: Վերջին հաշվով, Սահմանադրությամբ ամրագրված սահմանափակումները պարտադիր չէ նույնությամբ ամրագրել օրենքներով, դրանք սոսկ ուղենիշներ են: Նկատենք նաև, որ այդ ուղենիշներն առավել համարժեք ընկալելու նկատառումով հարկ է ղեկավարվել նաև Սահմանադրության 81 հոդվածի 2-րդ մասով սահմանված հետևյալ իրավական նորմով. «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները»:

Բոլորովին այլ ճանապարհով են գնացել ՀՀ արդարադատության նախարարության փորձագետները «Մտքի, խղճի, կրոնի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրան հարակից այլ օրենքների նախագծերը մշակելիս: Մասնավորապես, այս օրենքի նախագծում սահմանափակումներ նախատեսելիս դրանք հավասարապես տարածել են մտքի ազատության արտահայտման վրա:

Այս ազատությունը առավելապես գաղափարական, խորհրդանշական արժեք ունի. դրանով ընդգծվում է նաև էությանը ազատ մարդու կայացման տեսանկյունից հանրային իշխանության հիմնարար ձգտումն ու լիարժեք պատրաստակամությունը, ինչը պատմականորեն ձևավորվել է որպես ինկվիզիցիոն դատավարության հակակշիռ: Ի դեպ, մտքի ազատության սահմանափակման հարցում համանման կարծիք են հայտնել նաև կրոնական կազմակերպությունների կարգավիճակին առնչվող հարցադրումները հետազոտողները¹³:

Սահմանափակումների համատեքստում մեկ հարցադրում ևս հիշյալ նախագծում թույլատրելի է համարվել ՀՀ տարածքից դուրս գտնվող հոգևոր կենտրոնների կողմից կրոնական կազմակերպություններին ֆինանսավորելը: Սա լրջագույն աղերսներ ունի Սահմանադրության 41 հոդվածի 2-րդ մասով ամրագրված սահմանափակման հիմքերից պետական անվտանգության ապահովման հետ, ուստի ա-

¹³ Տե՛ս, օրինակ, Վ. Հ. Սայադյան, նշվ. աշխ., Шахов О. Правовые основы деятельности религиозных объединений в РФ, М., 2013, էջ 111:

ռաջարկվում է նախատեսել հետևյալ սահմանափակումը. «Կրոնական կազմակերպությունները չեն կարող ֆինանսավորվել կուսակցությունների կողմից, ինչպես նաև չեն կարող ֆինանսավորվել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող իրենց հոգևոր կենտրոնների կողմից»: Բնականաբար չի կարելի բացառել այս արգելքը շրջանցելու փորձերը, սակայն դա արդեն պատշաճ վերահսկողություն ապահովելու խնդիր է:

Մի կարևոր նկատառում ևս. Սահմանադրության 41 հոդվածով որպես մտքի, խղճի և կրոնի ազատության սահմանափակման հիմք է նախատեսված նաև պետական անվտանգությունը: Այս առնչությամբ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի՝ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ» 2017 թ. հոկտեմբերի 16-ի թիվ FORB-ARM/311/2017AIC եզրակացությամբ (37-րդ կետ)¹⁴ առաջարկվում է հիշյալ եզրույթը փոխարինել «հանրային անվտանգություն» եզրույթով՝ միջազգային իրավական չափանիշներին համապատասխանեցնելու նկատառումով:

Թերևս «պետական անվտանգություն» եզրույթը պահպանելը թելադրված է այն մտայնությամբ, որ այն սահմանադրական է և չի կարող ընթացիկ օրենսդրական ակտով վերանայվել, սակայն հարկ է նկատել, որ Սահմանադրության 41 հոդվածում նշվում է բացառապես սահմանափակման հնարավոր հիմքերի ու սահմանների մասին, ուստի որևէ հիմք չկա եզրակացնելու, որ «հանրային անվտանգություն» եզրույթի կիրառմամբ օրենքը հակասության մեջ կմտնի Սահմանադրության հետ: Այսպիսով, միջազգային փորձագիտական հիշյալ եզրակացությամբ արտացոլված առաջարկությունը, մեր կարծիքով, անարգել կարող է իրացվել:

5. *Բնչպիսի պահանջներ կարող են առաջադրվել կրոնական կազմակերպություն գրանցելու համար:* Եթե այլ տեսակի ոչ պետական կազմակերպությունների պարագայում հիշյալ հարցադրումն առանձնակի իրավական նշանակություն ու արդիականություն չունի, ապա բոլորովին այլ է պատկերը կրոնական կազմակերպությունների պարագայում: Վերջիններիս գործունեությունն անմիջականորեն շոշափում է ոչ միայն այլոց իրավունքների և ազատությունների անխափան իրացման, այլև պետական անվտանգության էական արժեքները: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անչափ մեծ է տարաբնույթ նկատառումներով կրոնական կազմակերպությունների ազատության քողի տակ ընդհուպ մարդկության ու խաղաղության դեմ ուղղված միջազգային հանցագործությունների կատարման համար

¹⁴ Տե՛ս <http://www.legislationline.org>.

անհրաժեշտ նախապայմաններ ստեղծելու գրավչությունը: Պատահական չէ, որ առանձին երկրներ (օրինակ՝ Ֆրանսիան) անգամ մի քանի տասնյակի հասնող կրոնական կազմակերպությունների գրանցումը պարզապես ճանաչել են անվավեր, իսկ դրանց գործունեությունը պետական անվտանգությանը սպառնացող:

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածը նախատեսում է, որ քաղաքացիների խումբը կարող է ճանաչվել կրոնական կազմակերպություն, եթե բավարարում է այդ հոդվածում նշված պայմանները, դրանք են՝ պատմականորեն կանոնացված որևէ սուրբ գրքի վրա հիմնված լինելը, համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի մեջ մտնելը, 200 հավատացյալ անդամ ընդգրկելը: Ընդ որում, կրոնական կազմակերպության գրանցման համար պահանջվում է լիազոր մարմնի փորձագիտական եզրակացություն՝ վերոնշյալ պայմանների վերաբերյալ: «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի 2009 թ. հուլիսի 23-ի¹⁵, 2010 թ. դեկտեմբերի 22-ի¹⁶ և 2011 թ. նոյեմբերի 17-ի¹⁷ եզրակացությունների համաձայն անհրաժեշտ է փոփոխել կրոնական միավորումների գրանցման պահանջները հետևյալ պատճառաբանություններով՝

- պատմականորեն կանոնացված որևէ սուրբ գրքի վրա հիմնված լինելու պայմանը անհամատեղելի է «Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 9 հոդվածի հետ: Մյուս կողմից, Եվրոպական դատարանը արձանագրել է, որ գրանցման ենթակա նմանատիպ կրոնական ուսմունք, ուղղություն պետք է գոյություն ունենան, իսկ լիազոր մարմնի կողմից կասկածների դեպքում դիմողը կրում է այդ կրոնի գոյության ապացուցման բեռը¹⁸,

- կրոնական կազմակերպությունը կարող է գրանցվել նաև, եթե դրա դավանաբանական ուսմունքը չի մտնում համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի մեջ: Կրոնական ազատության արտահայտումն ու իրականացումը չեն կարող պայմանավորված լինել այն հանգամանքով, որ անձի դավանած կրոնը մտնի համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի մեջ:

Վենետիկի հանձնաժողովի հիշյալ եզրահանգումները ներկայումս անհարկի շփոթի տեղիք են տվել. մասնավորապես, վերը նշված օրի-

¹⁵ Տե՛ս [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2011\)028-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2011)028-e)

¹⁶ Տե՛ս [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)054-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)054-e)

¹⁷ Տե՛ս [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2009\)036-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2009)036-e)

¹⁸ Տե՛ս European Court of Human rights. Appl. no. 7291/75, X v United Kingdom, (1977) DR 11, 55 [concerning the «Wicca» faith]

նագծերի հիմնավորումներում այն միտքն է արծարծվում, թե իբր որևէ կրոնական կազմակերպության գրանցման համար իրավական արժեք չունի այն հարցը, թե անձի դավանած կրոնը մտնում է համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի մեջ, թե ոչ: Դա ճիշտ է, սակայն անտեսվում է այն հանգամանքը, որ համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի մեջ չմտնելը բավարար չէ գրանցման համար: Որպեսզի հիշյալ ազատության իրացման համար կրոնական կազմակերպությունը իսկապես կարողանա հանդես գալ որպես կառուցակարգային երաշխիք, առնվազն պետք է առկա լինեն ողջամիտ թվով հետևորդներ: Փոքրաթիվ հավատացյալները բնավ զրկված չեն խղճի և կրոնի ազատությունից լիարժեք օգտվելու հնարավորությունից, սակայն այն կառուցակարգային լրացուցիչ երաշխիքներով ապահովելու անհրաժեշտությունը ծագում է միայն ողջամիտ թվով հավատացյալների առկայության պարագայում:

Ինչ վերաբերում է կրոնական կազմակերպության գրանցման համար անհրաժեշտ հավատացյալների շեմի նվազեցմանը, ապա հարկ է նկատել, որ չպետք է շփոթել իրավասու մարմին դիմելու համար հիմնադիրների քանակը հավատացյալների քանակի հետ: Այսպես, օրինագծի հիմնավորումներում նշված է. «Տարբեր երկրների միջազգային փորձի ուսումնասիրությունից հետևում է, որ այս շեմը տատանվում է 5-300 անդամ. Շվեդիայում՝ 5, Լատվիայում՝ 20, Չեխիայում՝ 300, Սլովակիայում՝ 200 անդամներ»¹⁹: Մինչդեռ նույն այդ և մյուս երկրների օրենսդրությունը վկայում է այն մասին, որ խոսքը ոչ թե հետևորդների, այլ իրավասու մարմին դիմելու համար անհրաժեշտ հիմնադիրների թվի մասին է:

6. *Ի՞նչ է հոգեորսությունը*: Այս հարցադրումը ներկայումս ձեռք է բերել աննախադեպ մեծ նշանակություն. այն դիտվում է որպես կրոնական կազմակերպությունների գործունեության իրավական գնահատման հիմնական իրավական չափանիշ:

Հոգեորսության իրավական կարգավորումն անմիջականորեն ադերսներ ունի խղճի և կրոնի ազատության՝ առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով սահմանափակման սահմանադրական հիմքերի հետ: Ողջունելի է, որ նշված օրինագծերի հեղինակները ևս արձանագրել են հիշյալ դիրքորոշումը, սակայն անտեսել են դրանք նախագծերում արտացոլելու անհրաժեշտությունը, մեր կարծիքով՝ դրսևորելով համաչափության սկզբունքի խաթարմանը հանգեցնող անհարկի զգուշավորություն: Ըստ օրինագծերի հեղինակների դիրքորոշման՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոնվենա-

¹⁹ <http://rusrand.ru/analytcs/otnoshenija-tserkvi-i-gosudarstva>

կիսն ընդդեմ Հունաստանի գործով կայացված որոշմամբ նշել է, որ Հունաստանը քրեականացրել է պրոսեկյուտիզմը, սակայն դա չի կարող համարվել անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում, քանի որ պրոսեկյուտիզմի միջոցով անձն իրականացնում է իր մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը այսպիսով իրավաչափ է համարել պրոսեկյուտիզմը (door to door missionary work): Թե՛ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներում և թե՛ Վենետիկի հանձնաժողովի եզրակացություններում շեշտադրված է այն հանգամանքը, որ միայն ոչ պատշաճ պրոսեկյուտիզմը, այն է՝ անձին հարկադիր դավանափոխելը, պետք է արգելվի»²⁰:

Կարծում ենք, վերը նշված տարամեկնաբանությունը պայմանավորված է նաև սահմանադրական եզրույթներն օրենսդրությամբ բացահայտելու անհրաժեշտության անտեսմամբ: Մասնավորապես, հարկ է հնարավորինս հստակ անդրադառնալ «միտք», «խիղճ» և «կրոն» եզրույթների օրենսդրական բնորոշմանը, որպեսզի պարզ դառնա, թե դրանցից յուրաքանչյուրի դեպքում սահմանափակման ինչպիսի մեթոդաբանություն կարող է իրավաչափ համարվել: Ինչևէ, կարծում ենք, նախագծում հարկ է առաջադրել հոգեորսության հետևյալ բնորոշումը. «Արգելվում է հոգեորսությունը՝ այլ անձանց նկատմամբ այնպիսի քարոզչական ներգործությունը, որը ուղեկցվում է նյութական կամ սոցիալական առավելություն տրամադրելով կամ խոստանալով, կամ ֆիզիկական կամ հոգեկան բռնություն գործադրելով կամ դրանց գործադրման սպառնալիքով, կամ խաբեությամբ կամ անձի կախվածությունը օգտագործելով, ինչպես նաև կրոնական որևէ ուսմունքի, դավանանքի հանդեպ դիտավորությամբ ատելություն սերմանելով»:

Այսպիսով, դատապարտվում է հոգեորսության ոչ թե ցանկացած, այլ միայն այնպիսի օրենսդրական բնորոշումը, որպիսին խոցելի է մտքի, խղճի և կրոնի ազատության համաչափ իրացման տեսանկյունից: Ասվածից բխում է, որ գիտագործնական չափանիշներով միանգամայն իրավաչափ կարող է համարվել խղճի և կրոնի ազատության այնպիսի սահմանափակումը, ըստ որի՝ կարգելվի առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության խախտմանը հանգեցնող հիշյալ ազատության իրացումը: Մասնավորապես, հիմնավորված չէ այլոց իրավունքների պաշտպանությունը դիտարկել սոսկ բռնությամբ ուղեկցվող դավանափոխության հարկադրանքի շրջանակներում, անտեսելով, որ ցանկացած ոչ իրավաչափ բռնություն արդեն իսկ առաջացնում է վարչական կամ քրեական պատասխանատվություն, ուստի խոսք կարող է լինել

²⁰ ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքը՝ Justice.am՝ «Մտքի, խղճի, կրոնի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրան հարակից այլ օրենքների նախագծերը» կայքը:

այնպիսի դրսևորումների մասին, որոնք ուղեկցվում են, օրինակ՝ մարդկանց բնակարանային իրավունքի անձեռնմխելիության, կարծիքի արտահայտման ազատության խախտումներով և այլն:

Այո՛, ինչպես միջազգային փորձագիտական կառույցները, այնպես էլ ՄԻԵԴ-ը դատապարտել են հոգեերսությունը, սակայն չպետք է անտեսել, որ խոսքը ոչ թե հոգեերսության ցանկացած դրսևորման, այլ կոնկրետ երկրներում այնպիսի անհամաչափ եղանակների մասին է, որոնք գործնականում հանգեցրել են խղճի և կրոնի ազատության անհիմն սահմանափակումների:

Միաժամանակ առաջարկվում է օրինագծում շարադրել կրոնական պատկանելությունը գաղտնի պահելու անձի իրավունքը, մասնավորապես՝ վարչարարության կանոններով (օրինակ՝ անձնական թերթիկներ լրացնելիս) չպետք է սահմանվի անձի կամքին հակառակ վերջինիս կրոնական պատկանելությունը ուղղակի կամ անուղղակի կերպով բացահայտելուն ուղղված որևէ պարտականություն:

Ամփոփելով մտքի, խղճի և կրոնի ազատության կառուցակարգային և ընթացակարգային երաշխիքների առնչությամբ մեր դատողությունները նպատակահարմար ենք համարում ընդգծել, որ հարկ է հիշյալ կարևորագույն հարցադրումների իրավական կարգավորմանը նվիրված օրենսդրական ակտերը պատրաստել բացառապես հայեցակարգային անհրաժեշտ հիմնադրույթներ մշակելու և ընդլայնված հանրային քննարկումների արդյունքներով հաստատվելու պարագայում: Կարծում ենք, վերը արծարծված տեսակետները անմիջականորեն առնչվում են հիշյալ հայեցակարգային հիմնադրույթներին և կարող են ունենալ գիտագործնական նշանակություն:

Բանալի բառեր – *մտքի, խղճի և կրոնի ազատություն, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, կրոնական կազմակերպություն, ազգային եկեղեցի, պետական կրոն, դավանանք, կրոնական ուսմունք, ավանդական եկեղեցի*

ГЕВОРГ ДАНИЕЛЯН – Институциональные и правовые гарантии свободы мысли, совести и религии в Конституции РА. – Конституционные положения о свободе мысли, совести и религии в основном закреплены в ст. 17-18 и 41, которые отличаются от предыдущих правовых норм. С целью законодательной реализации норм Конституции, в частности институциональных и процессуальных гарантий указанных свобод, по инициативе правительства РА разработаны и введены в обращение проекты законов. Их анализ показывает, что они не соответствуют конституционным требованиям. В результате появились некоторые предложения научно-практического характера.

В статье рассмотрены такие вопросы, как конституционный статус религиозной организации, содержание термина «национальная церковь», правовые основы отношений между государством и Армянской апостольской церковью, сущность конституционных ограничений свободы мысли, совести и религии. Выводы могут быть полезны с точки зрения улучшения законодательных урегулирований.

Ключевые слова: *свобода мысли, совести и религии, религиозная организация, национальная церковь, государственная религия, вероучение, традиционная церковь*

GEVORG DANIELYAN – *The Institutional and Legal Guarantees of Freedom of Thought, Conscience and Religion in the Constitution of the RA.* – The constitutional provisions of freedom of thought, conscience and religion are generally envisaged in the articles 17, 18 and 41 of the Constitution of the Republic of Armenia. These articles contain innovations, which mostly differ from the previous legal regulations. In order to implement the institutional and procedural guarantees of the mentioned freedom, draft laws have been elaborated and put into circulation by the Government of the Republic of Armenia. The analysis of the draft laws mentioned revealed their incompatibilities with the constitutional requirements at the conceptual level and as a result of the analysis the author suggested some scientific-practical provisions.

This article touches upon some contemporary questions, such as constitutional status of religious organizations, essence of the term «national church», framework and legal basis of the relations between the state and Armenian Holy Apostolic Church, the essence of constitutional limitations on freedom of thought, conscience and religion e.t.c. The presented conclusions may be helpful in the improvement of the legislative process.

Key words: *freedom of thought, conscience and religion, Armenian Apostolic Church, religious organization, national organization, state religion, creed, religious doctrine, traditional church*

**ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ

Իրական ժողովրդավարական և իրավական պետության ձևավորումը անհնար է առանց ուժեղ և անկախ դատական իշխանության: Դատական իշխանության անկախության և ինքնուրույնության սկզբունքի իրացածության աստիճանը իրավական պետության կայացածության և ժողովրդավարական իրավաքաղաքական ռեժիմի ցուցանիշն է¹:

Դատական իշխանության անկախությունն իրապես ժողովրդավարական հասարակության անկյունաքարային հիմքերից մեկն է: Քաղաքացիական հասարակության և իրավական ժողովրդավարական պետության ձևավորման պահանջը կենսական անհրաժեշտություն է դարձնում անկախ դատական իշխանության ամրապնդումը: Այս իրողության վառ ապացույցն է այն, որ մեր երկրում դատաիրավական և մասնավորապես վերջին սահմանադրական բարեփոխումների համատեքստում դատական իշխանության կազմակերպական, գործառույթային անկախության ապահովման խնդիրներն առանձնակի ուշադրության են արժանացել: Խնդրի արդիականության մասին է վկայում նաև դատական իշխանության անկախության ամենատարբեր հայեցակետների վերաբերյալ միջազգային հարուստ նյութի առկայությունը:

Դատական իշխանության անկախության էությունը բացահայտելիս առանձին տեսաբաններ այն դիտարկում են որպես իշխանության այս թևի բնութագրական հատկանիշ՝ դատական իշխանությունը բնորոշելով որպես պետական իշխանության *անկախ և ինքնուրույն ճյուղ*²: Դատական իշխանության անկախությունը տեսաբանների կողմից բնորոշվում է նաև որպես իշխանության այս թևի կազմակերպման և գործունեության սկզբունք³: Սակայն և՛ որպես դատական իշխանության հատկանիշ, և՛ որպես իշխանության այս թևի կազմակերպման և գործունեության սկզբունք՝ դա արդարադատություն իրականացնելիս դատարանների (դատավորների) գործունեությանը ցանկացած՝ թե՛

¹ Տե՛ս **Салимзянова Р. Р.** Независимость судебной власти как гарантия правового государства. Казань, 2007, էջ 8:

² Տե՛ս **Гуськова А. П.** К вопросу о судебной защите прав и свобод человека, гражданина в российском уголовном судопроизводстве // "Российский судья", 2005, № 6, էջ 11-13:

³ Տե՛ս **Афанасьева С. И.** Конституционно-правовые гарантии принципа независимости судей в Российской Федерации. Автореф. дис. канд. юрид. наук. М., 2003, **Квициния Ф. А.** Гарантии независимости судей. Автореф. дис. канд. юрид. наук. Ростов-на-Дону, 2007:

արտաքին և թե՛ ինքնին այդ նույն իշխանության թևի ներսից եկող ոչ իրավաչափ ներգործության, միջամտության արգելքն է:

Դատական իշխանության անկախության, մասնավորապես արդարադատություն իրականացնելիս բացառապես օրենքին ենթարկվելու հիմնարար պահանջը, ձևակերպման որոշակի առանձնահատկություններով հանդերձ, ամրագրված է միջազգային իրավական բազմաթիվ փաստաթղթերում, մեր երկրի հիմնական օրենքում (բոլոր խմբագրություններով), ՀՀ գործող դատական օրենսգրքում, ճյուղային դատավարական օրենքներում: 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով Սահմանադրության (այսուհետ նաև՝ Սահմանադրություն) 162 հոդվածը ոչ միայն սահմանում է, որ ՀՀ-ում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, այլև որ արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է:

Դատական իշխանության անկախության պահանջի սուսկ իրավական ամրագրումը դեռևս բավարար չէ, և դրա գործնականում կիրառությունը ենթադրում է գործառական, ինստիտուցիոնալ, նյութական ու սոցիալական անկախության այնպիսի նախադրյալներ, որոնք անհրաժեշտ ու բավարար են դատարանների ու ողջ դատական իշխանության անկախությունը երաշխավորելու համար: Այդ նախադրյալները դատական իշխանության անկախության ապահովման երաշխիքների ձևով նորովի կարգավորում են ստացել վերջին սահմանադրական փոփոխություններով՝ հաշվի առնելով գործնականում առկա խնդիրները, միջազգային առաջադիմական փորձը, արդյունավետ դատական պաշտպանության երաշխավորման գերխնդիրը: Դատական իշխանության անկախության ապահովման երաշխիքներին առնչվող նոր սահմանադրական կարգավորումների շարքում, իբրև առավել հիմնարար սկզբունք, պետք է առանձնացնել Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ նաև՝ ԲԴԽ) կազմի և կազմավորման կարգի, դատավորների նշանակման կարգի և դատարանների նախագահների նոր դերակատարման վերաբերյալ սահմանադրական լուծումները:

Անդրադառնալով ԲԴԽ-ի՝ որպես դատական իշխանության անկախության երաշխավորի սահմանադրական կարգավիճակին՝ պետք է նշել, որ ի թիվս այլոց, որպես դատական իշխանության ներքին և արտաքին անկախության ապահովման ինստիտուցիոնալ երաշխիք, բազմաթիվ երկրներում գործում են, այսպես կոչված, դատական խորհուրդներ, որոնց, կազմակերպման և գործունեության առանձնահատկություններով հանդերձ, միավորում է դատական իշխանության անկախության երաշխավորման գերխնդիրը⁴: Մեր իրավական համակարգում այս կարևոր դերակատարումը ներկայումս վերապահված է

⁴ Տե՛ս «The Comparative Law and Economics of Judicial Councils» // Berkley Journal of International Law, Volume 27, Issue 1, Article 9, 2009:

ՀՀ արդարադատության խորհրդին (այսուհետև նաև՝ ԱԽ): ԱԽ-ի կազմակերպման և գործունեության հիմքերն ամրագրված էին դեռևս 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրության, 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության մեջ, 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների ինկորպորացմանն ուղղված՝ 2007 թվականի փետրվարի 21-ին ընդունված ՀՀ գործող դատական օրենսգրքում: Սակայն ԱԽ-ի գործունեության ընթացքում ի հայտ եկած բազմաթիվ խնդիրներ ցույց տվեցին, որ այդ կազմակերպատիրական հիմքերն անհրաժեշտ և բավարար չեն նշված մարմնի անկախության և հատկապես ներքին անկախության երաշխավորման համար: Իսկ եթե բավարար չեն դատական իշխանության անկախությունը երաշխավորելու համար պատասխանատու մարմնի գործունեության անկախության մեխանիզմները, ապա օբյեկտիվորեն անհնար է այդ մարմնի առջև դրված առաքելության իրացումը: Այն պետք է անկախ լինի թե՛ օրենսդիր, թե՛ գործադիր և թե՛ անգամ դատական իշխանությունից, քանի որ իրապես անկախ և արդյունավետ գործող արդարադատության խորհուրդն է անկախ, անկողմնակալ և հաշվետու դատական համակարգի գոյության կարևորագույն գրավականը և նախապայմանը: Եվ հենց այս խնդրի իրացման համատեքստում սահմանադրական բարեփոխումների շնորհիվ փորձ է արվել նորովի կարգավորելու ԱԽ-ի իրավահաջորդի՝ ԲԴԽ-ի կազմի, կազմավորման կարգի, լիազորությունների իրավական հիմքերը՝ ի սկզբանե կանխորոշելով հետագա օրենսդրական կանոնակարգման շրջանակները:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով Սահմանադրության մեջ երկրի հիմնական օրենքի մակարդակով ամրագրված է, որ ***Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:***

Ինչպես արդեն նշել ենք, բազմաթիվ երկրներում գործում են դատական իշխանության անկախության համար պատասխանատու մարմիններ՝ առավելապես դատական խորհուրդների տեսքով: Ու թեև դրանց նպատակը դատական իշխանության անկախության երաշխավորումն է, այդուհանդերձ պետք է նշել, որ այդ նպատակից բխող խնդիրները, դրանց իրացման ուղիները և դրանցով պայմանավորված՝ այդ մարմինների լիազորությունների շրջանակը տարբեր են: Այսպես, օրինակ, Իտալիայում, Ֆրանսիայում, Պորտուգալիայում դատական խորհրդի հիմնական խնդիրը դատական իշխանության առանձնացումն է գործադիրից: Եվ այդ նպատակին հասնելու համար դատական խորհուրդն օժտված է դատավորների ընտրության, առաջխաղացման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու ոլորտներում զգալի լիազորություններով՝ էապես սահմանափակելով գործադիր իշխանության մարմինների միջամտությունը (նմանատիպ մոտեցում է

դրսևորվել նաև Լատինական Ամերիկայի, Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի և նախկին խորհրդային երկրների մեծ մասում): Ընդ որում՝ այս երկրներում դատարանների վարչական կառավարման լիազորությունը վերապահված է արդարադատության նախարարին, և այնտեղ արդիական չէ վարչական կառավարման գործառույթները խորհուրդներին փոխանցելու խնդիրը⁵: Հակառակ սրան՝ Հյուսիսային Եվրոպայի որոշ երկրներում, մասնավորապես Դանիայում և Շվեդիայում, խորհուրդներն առավելապես ստեղծվել են դատարանների վարչական (ադմինիստրատիվ) կառավարումը, հատկապես անձնակազմի և բյուջեի կառավարումը բարելավելու համար: Սակայն հարկ է նշել, որ դատական խորհուրդներին այս գործառույթները վերապահելու նպատակը դարձյալ դատական իշխանության անկախության ամրապնդումն է և դատական իշխանության ներքին գործերին արտաքին միջամտությունը բացառելը⁶:

ԲԴԽ-ի լիազորությունները սահմանող՝ Սահմանադրության 175 հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հանգում ենք այն եզրակացության, որ այս մարմինն են վերապահվել դատական իշխանության անկախության երաշխավորմանը վերաբերող կարևորագույն լիազորություններ, որոնց շրջանակը, 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով Սահմանադրության կարգավորումների համեմատ, ընդլայնվել է, իսկ առանձին լիազորությունների առնչությամբ ԲԴԽ-ի դերակատարումն առավել կարևորվել է: Նրան են վերապահվել այնպիսի նոր լիազորություններ, ինչպիսիք են ***դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու հարցը լուծելու, ինչպես նաև իր և դատարանների ծախսերի նախահաշիվները հաստատելու և ՀՀ կառավարություն ներկայացնելու լիազորությունները***: Սահմանադրության մեջ այս լիազորությունների ցանկը, սակայն, սպառիչ չէ, և Սահմանադրության 175 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ԲԴԽ-ի այլ լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում են Դատական օրենսգրքով: Սահմանադրական այս նորմը ՀՀ դատական նոր օրենսգրքի նախագծում ինկորպորացնելիս լայն քննարկումների տեղիք տվեց այն հարցը, թե արդյոք ԲԴԽ-ի լիազորությունները պետք է հստակեցվեն՝ ելնելով վերջինիս՝ որպես դատական իշխանության անկախությունը երաշխավորող անկախ պետական մարմնի կարգավիճակից, թե նրան կարող են վերապահվել նաև դատական իշխանության ինքնակառավարման մարմնի համար բնութագրական լիազորություններ: Դեռ ավելին, քննարկվում էր նաև ՀՀ դատական դեպարտամենտի գործառույթները, այդ թվում՝ դատարանների նյութատեխնիկական ապահովման, կադրային քաղաքա-

⁵ Տե՛ս նույն տեղը, «Comparative analysis on the High Councils for Judiciary in the EU member states and judicial immunity»: http://www.justicereformukraine.eu/wp-content/uploads/2014/09/Report_Councils_eng.pdf

⁶ Տե՛ս նույն տեղը:

կանության և որոշ այլ ոլորտներ, ԲԴԽ-ին վերապահելու հարցը: Միանշանակ մոտեցումների բացակայությամբ պայմանավորված՝ այս հարցը քննարկման առարկա է դարձել նաև ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովմանն աջակցող մասնագիտական խորհրդակցական խորհրդում: Մեր խորին համոզմամբ՝ ԲԴԽ-ին՝ որպես դատական իշխանության անկախության երաշխավորի պետք է վերապահել բացառապես սահմանադրական կարգավիճակից բխող լիազորություններ: Ինչ վերաբերում է կառավարչակազմակերպական, նյութատեխնիկական ապահովման գործառնություններին, ապա այդպիսիք, իհարկե, կարելի է ի վերջո պայմանավորել դատական իշխանության անկախությամբ, սակայն, կարծում ենք, դա դատական իշխանության անկախության չափազանց լայն և անընդունելի մեկնաբանության արդյունք է: ԲԴԽ-ին դատական իշխանության անկախություն երաշխավորելու նպատակից բխող լիազորություններից բացի՝ նաև այդ նպատակի հետ ուղղակիորեն չկապված լիազորություններով ավելորդ ծանրաբեռնելը ոչ միայն այս մարմնին կշեղի իր հիմնական նպատակից՝ հնարավորություն չտալով այն արդյունավետ իրացնելու, այլև կարող է հանգեցնել հակառակ ծայրահեղության, այն է՝ կարող ենք ունենալ չափազանց լայն լիազորություններով օժտված, իր հակակշիռը չունեցող մի մարմին, որի իր լիազորությունների պատշաճ իրականացումը վերահսկելու կամ այդ լիազորությունների սահմանն անցնելու դեպքում հակազդման բավարար մեխանիզմներ չեն լինելու:

Վերոգրյալի լույսի ներքո, մեր կարծիքով, խիստ մտահոգիչ են ՀՀ դատական նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ նաև՝ Նախագիծ) ԲԴԽ-ի լիազորությունների կարգավորմանը վերաբերող առաջարկությունները: Այսպես, Նախագծի 98 հոդվածով ԲԴԽ-ին վերապահվող շուրջ չորս տասնյակից ավելի լիազորությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց մեծ մասը ուղղակիորեն չի բխում դատական իշխանության անկախության երաշխավորման գործառնությունից կամ անհարկի լայն մեկնաբանության արդյունք է: Այս կարգավորման հետ փոխկապակցված՝ Նախագծում տեղ գտած հաջորդ խնդրահարույց կարգավորումն այն է, որ ԲԴԽ-ի աշխատակազմին վերապահված որոշ լիազորություններ իրականացնելու է Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմինը. ընդ որում՝ որպես Դատական դեպարտամենտի հիմնադիր Հայաստանի Հանրապետության անունից հանդես է գալու ԲԴԽ-ն: Նախագծում տեղ գտած կարգավորումների համադրումը ցույց է տալիս, որ, ի դեմս ԲԴԽ-ի, միախառնվել են դատական իշխանության անկախության ապահովման, դատական իշխանության ինքնակառավարման և նյութատեխնիկական ապահովման գործառնությունները: Բովանդակային առումով այս տարբեր լիազորությունների կենտրոնացումը մեկ մարմնի ձեռքում, որը սահմանադրորեն

պատասխանատու է բացառապես դատական իշխանության անկախության երաշխավորման համար, նվազագույնը կասկածներ է հարուցում նրա գործունեության արդյունավետության և իր սահմանադրական առաքելության պատշաճ իրացման հնարավորության վերաբերյալ: Ուստի, մեր կարծիքով, ԲԴԽ-ին պետք է վերապահվեն առավելապես իր՝ որպես անկախության երաշխավորի կարգավիճակից բխող լիազորություններ, որոնք անհրաժեշտ և բավարար կլինեն իր առջև դրված սահմանադրական նպատակն իրացնելու համար:

Անդրադառնալով ԲԴԽ-ի կազմին՝ պետք է նշել, որ 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով Սահմանադրության 94.1 հոդվածի համաձայն՝ արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով, օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական գիտնականներ: 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով Սահմանադրության 174 հոդվածի կարգավորումների համաձայն՝ ԲԴԽ-ն կազմված է տասը անդամից: ԲԴԽ-ի հինգ անդամներին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից: ԲԴԽ-ի մյուս հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ գիտնականների և այլ հեղինակավոր մասնագետների թվից: Ազգային ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատավոր:

Դատական խորհուրդների կազմի խնդրին անդրադարձ է կատարվել նաև միջազգային իրավական փաստաթղթերում, համաձայն որոնց՝ խորհուրդը պետք է ունենա ոչ միատարր կազմ՝ դատավոր և ոչ դատավոր անդամների ընդգրկմամբ՝ պայմանով, որ վերջիններս ընտրվեն գիտնականների, փաստաբանների հանրությունից, և բացառվի այդ խորհուրդների կազմում քաղաքական գործիչների, խորհրդարանի, գործադիր մարմնի ներկայացուցիչների գործունեությունը⁷: Ընդ որում, Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) այն տեսակետն է արտահայտել, որ

⁷ Տե՛ս «Դատական վարչարարություն, ընտրություն և հաշվետվողականություն», Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ Կիևյան հանձնարարականներ / <http://www.osce.org/hy/odihr/75436?download=true>, Եվրոպայի դատավորների խորհրդատվական խմբի թիվ 10 եզրակացությունը, Venice Commission, Opinion on Recent Amendments to the Law on Major Constitutional provisions of the Republic of Albania, CDL-INF (1998) 009, 12-րդ կետը [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-INF\(1998\)009-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-INF(1998)009-e):

խորհրդի դատավոր անդամները պետք է ընտրվեն այնպես, որ ապահովվի տարբեր աստիճանների դատավորների հավասարակշռված ներկայացվածությունը: Վենետիկի հանձնաժողովի գնահատմամբ՝ դատական իշխանության անկախությունը ապահովող ինքնավար դատական խորհրդի ստեղծումը չի նշանակում, որ դատավորները պետք է լինեն ամբողջովին ինքնակառավարվող: Դատական իշխանության վարչական կառավարումը չպետք է ամբողջովին լինի դատավորների ձեռքում: Ուստի, նրա կարծիքով, խորհրդի կազմում պետք է նախատեսել նաև այնպիսի անդամների ներկայություն, ովքեր դատական իշխանության մաս չեն և ներկայացնում են պետական այլ մարմիններ, հասարակության ակադեմիական կամ մասնագիտական շրջանակներ: Այս դիրքորոշման հիմնավորումն այն է, որ **խորհրդի դերը պետք է բխի ոչ միայն դատական իշխանության անդամների, այլ նաև հասարակության ընդհանուր շահերից**: Արդարադատության որակի և անաչառության նկատմամբ հսկողությունը այնպիսի դերակատարում է, որը վեր է առանձին դատավորի շահերից: Խորհրդի դերակատարումը կոչված է բարձրացնելու քաղաքացիների վստահությունը դատական իշխանության նկատմամբ: Վենետիկի հանձնաժողովը նույնիսկ առաջարկել է, որ խորհրդի անդամները առավելապես լինեն ոչ դատավորներ՝ մասնագիտական համայնքի ներկայացուցիչներ, ինչը կապահովի դատական համակարգի շահառուների ներկայացվածությունը: Հանձնաժողովը միաժամանակ գտնում է, որ խորհրդի կազմում հավասար թվով դատավոր և ոչ դատավոր անդամների նախատեսումը կարող է բացառել կորպորատիվիզմը և սեփական նեղ շահերով առաջնորդվելու վտանգը⁸:

Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումներում արտահայտված այս մտավախություններն արդիական են նաև գործող ԱԽ-ի կազմի տեսանկյունից: Հաշվի առնելով ԱԽ-ի դատավոր անդամների թվային գերակշռությունը՝ որոշակիորեն ձևական բնույթ է ստանում գիտնականների մասնակցությունը խորհրդի գործունեությանը: Այսպես, օրինակ, նշված խնդրի մասնավոր դրսևորում է այն, որ գործող կարգավորման պայմաններում անգամ բոլոր իրավաբան գիտնական անդամների կողմից կոնկրետ հարցի վերաբերյալ միասնական կարծիք հայտ-

⁸ See Venice Commission, CDL-INF(1998)009, Opinion on recent amendments to the law on Major constitutional provisions of the Republic of Albania, 9-12-րդ կետեր, CDL-AD(2007)028, Report on Judicial Appointments by the Venice Commission, 27-րդ և 30-րդ կետեր, CDL-AD(2014)008, Opinion on the draft Law on the High Judicial and Prosecutorial Council of Bosnia and Herzegovina, 30-31-րդ կետեր, CDL-AD(2002)012, Opinion on the Draft Revision of the Romanian Constitution, 66-րդ կետ, CDL-AD(2002)021, Supplementary Opinion on the Revision of the Constitution of Romania, 21-22-րդ կետեր, CDL-AD(2005)003, Joint opinion on a proposal for a constitutional law on the changes and amendments to the Constitution of Georgia by the Venice Commission and OSCE/ ODIHR, 102-րդ կետ, CDL-AD(2012)001, Opinion on Act CLXII of 2011 on the Legal Status and Remuneration of Judges and Act CLXI of 2011 on the Organisation and Administration of Courts of Hungary, 45-րդ կետ:

նելը որևէ հետևանք չի կարող առաջացնել: Դատավոր անդամների թվային ակնհայտ գերակշռության պայմաններում խորհուրդը, ըստ էության, դառնում է դատական իշխանության ներքին սպասարկման մարմին, որը առավելապես զբաղվում է դատական իշխանության ներքին նեղ խնդիրների լուծմամբ: Այնինչ խորհրդի գործունեության հիմնական նպատակը դատական իշխանության անկախության ապահովումն է, որը, ինչպես նշվեց, ոչ այնքան և ոչ միայն դատական իշխանության, որքան առհասարակ պետության, ողջ հասարակության խնդիրն է: Այս պայմաններում առավել քան ակնհայտ է ԱԽ-ի ոչ իրավաչափ կախվածությունը դատական իշխանությունից: Ներքին անկախության բացակայության խնդիրն առավել ակնհայտ է դառնում գոյություն ունեցող իրավակարգավորման պայմաններում, համաձայն որի խորհրդի նիստերը հրավիրում և վարում է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահը:

Ուստի պատահական չէ, որ սահմանադրական բարեփոխումների հենց սկզբից խնդիր դրվեց խորհրդի կազմում ավելացնել ոչ դատավոր անդամների, մասնավորապես՝ իրավաբան գիտնականների թիվը և երաշխավորել վերջիններիս իրական մասնակցությունը դրա գործունեությանը, որը կարող է նպաստել ինչպես տվյալ կառույցի ու նրա գործունեության, այնպես էլ ողջ դատական համակարգի նկատմամբ հասարակական վստահության բարձրացմանը և ամրապնդմանը: Թերևս այս խնդրի լուծմանն են միտված Սահմանադրության 174 հոդվածի արդեն իսկ հիշատակված կարգավորումները:

Ինչ վերաբերում է ԲԴԽ-ի կազմավորման կարգին, ապա Սահմանադրության 174 հոդվածի 1-3-րդ մասերի արդեն իսկ հիշատակված կարգավորումներից բխում է, որ ԲԴԽ-ի կազմավորման հարցում լուրջ դերակատարում ունեն Դատավորների ընդհանուր ժողովը և Ազգային ժողովը:

Միջազգային իրավական փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր մոտեցման համաձայն՝ դատական խորհուրդների դատավոր անդամները պետք է ընտրվեն դատական իշխանության կողմից⁹: Ինչ վերաբերում է ոչ դատավոր անդամներին, ապա միջազգային իրավական կառույցների, մասնավորապես Վենետիկի հանձնաժողովի գնահատմամբ՝ ժողովրդավարական հասարակության պայմաններում ողջամիտ է դատական խորհրդի կազմում ժողովրդի կամարտահայտության ներկայացվածությունը՝ ի դեմս ժողովրդի ներկայացուցչական մարմնի կողմից խորհրդի կազմի ձևավորման գործընթացին մասնակցության¹⁰: Սակայն այն դեպքում, երբ ոչ դատավոր ան-

⁹ Sté u Venice Commission, CDL-AD(2007)028, Report on Judicial Appointments by the Venice Commission, 29-րդ կետ, CDL-AD(2008)006, Opinion on the Draft Law on the High Judicial Council of the Republic of Serbia, 76-րդ կետ:

¹⁰ Sté u Venice Commission, Opinion on Recent Amendments to the Law on Major Constitutional provisions of the Republic of Albania, CDL-INF(1998)009, 9-րդ կետ:

դամներն ընտրվում են խորհրդարանի կողմից, այդ անձինք չպետք է լինեն խորհրդարանի անդամ, պետք է ընտրվեն որակյալ մեծամասնության կողմից՝ ունենալով ընդդիմադիր ուժերի զգալի աջակցություն, և պետք է ապահովեն հասարակության բազմաշերտ ներկայացվածությունը Դատական մարմինների խորհրդի ընդհանուր կազմում¹¹:

Այս տեսանկյունից ԱԽ-ի կազմավորման գործող կարգը որոշակիորեն խնդրահարույց է: Խոսքը մասնավորապես այն մասին է, որ կիսանախագահական կառավարման ձևի պայմաններում, երբ ՀՀ նախագահի կարգավիճակն առավելապես նույնացվում է գործադիր իշխանության ղեկավարի հետ, դատական համակարգը գործադիր իշխանության միջամտությունից զերծ պահելու միջազգային հիմնարար պահանջի երաշխավորման տեսանկյունից գործող կարգավորումը, կարծում ենք, առնվազն վիճահարույց է: Բացի այդ, գործող կարգավորումը ոչ իրավաչափ է նաև ՀՀ նախագահին թե՛ ԱԽ-ի կազմի ձևավորման գործընթացին մասնակցելու հնարավորություն տալու (մասնավորապես երկու իրավաբան գիտնականներ նշանակելու իրավունք) և թե՛ Արդարադատության խորհրդի լիազորություններին փոխկապակցված կամ դրանց հաջորդող լիազորություններ (ԱԽ-ի միջնորդությամբ դադարեցնել դատավորի լիազորությունները կամ նշանակել դատավոր) վերապահելու առումով: Ընդ որում, նույն Վենետիկի հանձնաժողովը, ընդունելի համարելով օրենսդիր մարմնի կողմից դատական խորհրդի ոչ դատավոր անդամների ընտրության մոդելը, առանձին դեպքերում այն համարել է ավելի նախընտրելի, քան գործադիր իշխանության մասնակցությամբ մեխանիզմը¹²: Սակայն խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում էապես փոխվում է Հանրապետության նախագահի դերակատարումն իշխանությունների տարանջատման համակարգում: Ըստ այդմ՝ **իշխանությունների տարանջատման նոր համատեքստում երկրի նախագահին խորհրդի կազմավորման հարցում լուրջ դերակատարում վերապահելը ոչ խոցելի կարգավորում կլինե՞ր այս մարմնի արտաքին անկախության երաշխավորման տեսանկյունից ի տարբերություն առաջարկվող նոր լուծման, երբ խորհրդի ոչ դատավոր անդամներին ընտրելու է ՀՀ Ազգային ժողովը:** Այսպես, նոր սահմանադրական կարգավորումների համաձայն՝ Ազգային ժողովն է ընտրելու թե՛ Վճռաբեկ դատարանի դատավոր առաջարկվող թեկնածուին՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար ԲԴԽ-ի ներկայացրած երեք թեկնածուների թվից (Սահմանադրության 166 հոդվածի 3-րդ մաս) և թե՛ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ դարձյալ Բարձրագույն դա-

¹¹ Sté u Venice Commission, Opinion on the Draft Law on Amendments to the Judicial System Act of Bulgaria, CDL-AD (2002) 015, 5-րդ կետ, Եվրոպայի դատավորների խորհրդատվական խմբի թիվ 10 եզրակացության 32-րդ կետը:

¹² Sté u CDL-AD(2010)042, Interim Opinion on the Draft Law on the High Council for judges and Prosecutors (of 27 September 2010) of Turkey, 34-րդ կետ:

տական խորհրդի առաջարկությամբ (Սահմանադրության 166 հոդվածի 5-րդ մաս): Այս կարգավորման պայմաններում ԲԴԽ-ի արտաքին անկախության ապահովման խնդիրն առավել քան արդիական է այն պարզ պատճառով, որ խորհրդի անդամների ուղիղ կեսին ընտրելու է Ազգային ժողովը, որը նաև ունի փոխկապակցված լիազորություններ խորհրդի հետ: Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք, ԲԴԽ-ին լուրջ դերակատարում է վերապահվել դատական իշխանության կազմակերպման, մասնավորապես դատական բարձրագույն ատյանի դատավորներ և նախագահ նշանակելու հարցում: Այս պարագայում Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման հարցում ՀՀ Ազգային ժողովին ծանրակշիռ դերակատարում վերապահելը, բացի այն բանից, որ ավելորդ քաղաքականացման վտանգ է պարունակում, նաև վերջինիս կողմից դատական իշխանության կազմակերպման հարցերին հնարավոր ոչ իրավաչափ միջամտության առումով որոշակի մտավախության տեղիք է տալիս:

Գործող օրենսդրական կարգավորման պայմաններում Արդարադատության խորհրդի ներքին անկախության երաշխավորման տեսանկյունից, ինչպես արդեն նշել ենք, խնդրահարույց է նաև Արդարադատության խորհրդի նիստերը հրավիրելու՝ Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունը: ԱԽ-ի նիստերին, թեկուզև առանց քվեարկության իրավունքի, երկրի բարձրագույն դատական ատյանի ղեկավարի մասնակցությունը խորհրդի դատավոր անդամների նկատմամբ որոշակի ոչ իրավաչափ ներգործության վտանգ է պարունակում: Նման եզրահանգման օգտին է վկայում նաև ներկայումս ձևավորված պրակտիկան: Առանձին խնդիր է նաև այն, որ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասությունը վերապահված է ԱԽ-ին, իսկ գործող օրենսդրական կարգավորման պայմաններում Վճռաբեկ դատարանի նախագահը կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտ է, ով նաև նախագահում է իր իսկ կողմից հարուցված վարույթով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննություն իրականացնող ԱԽ-ի նիստը:

Դատական խորհրդի նախագահի ընտրության հարցի առնչությամբ որոշակի մոտեցումներ կան ձևավորված նաև միջազգային իրավական փաստաթղթերում, և նախագահի ընտրության մոդելն ընդունելի է նաև Եվրոպայի դատավորների խորհրդատվական խմբի, Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունների համատեքստում¹³:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ ԲԴԽ-ի ներքին անկախության երաշխավորման տեսանկյունից լուրջ իրավական հիմք է սահմանադրա-

¹³ St' u Compilation of Venice Commission Opinions and Reports Concerning Courts and Judges, CDL-PI(2015)001 2015, Strasbourg, France, Եվրոպայի դատավորների Խորհրդատվական խմբի թիվ 10 եզրակացությունը:

կան այն կարգավորումը, որի համաձայն՝ խորհուրդն իր կազմից դատական օրենսգրքով սահմանված ժամկետով և կարգով ընտրում է խորհրդի նախագահ՝ դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից հաջորդաբար ընտրված անդամներից (Սահմանադրության 174 հոդվածի 7-րդ մաս): Այստեղ պետք է նշել, որ Սահմանադրության մեջ տեղ գտած ձևակերպումն ամեննին չի նշանակում, որ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ պետք է ընտրվի առաջին հերթին խորհրդի դատավոր անդամների կազմից: Ավելին, կարծում ենք, որ դատական օրենսգրքով անհրաժեշտ է նախատեսել այնպիսի կարգավորում, որ խորհրդի նախագահ ընտրվի առաջին հերթին ոչ դատավոր անդամների թվից և հինգ տարի ժամկետով: Կարծում ենք նաև, որ վերջինս, անկախ խորհրդի մյուս անդամների կարգավիճակից, չպետք է համատեղի նախագահի պաշտոնը որևէ այլ գործունեության հետ: Մեր կարծիքով, այս լուծումը անհրաժեշտ է ԲԴԽ-ի ձևավորման և գործունեության հետ կապված օբյեկտիվորեն հնարավոր խոչընդոտները հաղթահարելու և խորհրդի առավել արդյունավետ գործունեությունը ապահովելու համար:

Անդրադառնալով դատավորների ընտրության (նշանակման) կարգին՝ պետք է նշել, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն դատավորների նշանակման (ընտրության) չորս հիմնական մոդելներ՝ դատավորների նշանակումը քաղաքական մարմինների կողմից, դատավորների նշանակումը դատական իշխանության կողմից, դատավորների նշանակումը դատական խորհրդի կողմից և դատավորների նշանակումն ընտրությունների միջոցով¹⁴: Կիևյան հանձնարարականների 3-րդ կետի համաձայն՝ *«Եթե դատավորների ընտրության խնդիրը որևէ այլ անկախ մարմնի վրա դրված չէ, ապա պետք է ստեղծել առանձին փորձագիտական հանձնաժողով՝ դատավորների ընտրության գործընթացում գրավոր և բանավոր քննություններն անցկացնելու նպատակով: Այս պարագայում դատական խորհրդի լիազորությունները պետք է սահմանափակել պատշաճ ընթացակարգերի պահպանումը ստուգելով և կամ հանձնաժողովի ընտրած թեկնածուներին նշանակելով կամ նշանակող մարմնին նրանց առաջադրելով»*: Կիևյան հանձնարարականների 23-րդ կետի համաձայն՝ *«Եթե դատավորի վերջնական նշանակումը կատարում է պետության նախագահը, ապա նշանակելու հայեցողությունը պետք է սահմանափակվի ընտրող մարմնի (օրինակ՝ դատական խորհուրդ, որակավորման հանձնաժողով կամ փորձագիտական հանձնաժողով) առաջադրած թեկնածուների շրջանակով: Այդպիսի թեկնածուի նշանակումը կարող է մերժվել միայն ընթացակարգային հիմքերով, ընդ որում՝ պատճառաբանված որոշմամբ»*:

¹⁴ Տե՛ս <https://www.usip.org/sites/default/files/Judicial-Appointments-EN.pdf>

Նախագահի կողմից դատավորներին նշանակելու կառուցակարգը խնդրահարույց չէ նաև Վենետիկի հանձնաժողովի գնահատմամբ պայմանով, որ անկախ դատական խորհրդի առաջարկը պարտադիր է Հանրապետության նախագահի համար¹⁵: Գործող օրենսդրական կարգավորումը, համաձայն որի՝ Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնող երկու իրավաբան գիտնականներին նշանակում է Հայաստանի Հանրապետության նախագահը, և նա է վավերացնում խորհրդի կողմից հաստատված ցուցակը (ընդ որում՝ այդ ցուցակը հաստատելու կամ այն խորհրդին վերադարձնելու օրենսդրական լիազորությունները հստակեցված չեն), կիսանախագահական կառավարման ձևի պայմաններում, երբ Հայաստանի Հանրապետության նախագահի կարգավիճակն առավելապես ասոցացվում է գործադիր իշխանության ղեկավարի հետ, կարծում ենք, անհամատեղելի է դատական համակարգի կազմավորումը գործադիր իշխանության միջամտությունից զերծ պահելու միջազգային հիմնարար պահանջի երաշխավորման տեսանկյունից: Ուստի, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով Սահմանադրության 166 հոդվածի կարգավորումների համաձայն՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին և նախագահներին, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին նշանակում է ՀՀ նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ: Բարձրագույն դատական խորհրդին է վերապահվել նաև դատավորների թեկնածուների, ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները հաստատելու լիազորությունը: Այս կարգավորումներն իրենց արտացոլումն են ստացել նաև ՀՀ նոր դատական օրենսգրքի նախագծում. այսպես, օրինակ, Նախագծում հստակ ամրագրվել է Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորների թեկնածուների, ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները հաստատելու լիազորությունը (Նախագծի 85 հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), հստակեցվել են ընթացակարգային այն հիմքերը, երբ ՀՀ նախագահը կարող է վերադարձնել դատավորի թեկնածության վերաբերյալ ԲԴԽ-ի առաջարկը (Նախագծի 115 հոդվածի 9-րդ մաս): Նշված սահմանադրական հիմքերը և դրանց կենսագործմանն ուղղված Հայաստանի Հանրապետության դատական նոր օրենսգրքի նախագծի կարգավորումները, կարծում ենք, համահունչ են դատական կորպուսի ձևավորման միջազգային չափանիշներին, առավել ևս որ, ինչպես արդեն նշել ենք, խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում էապես փոխվում է Հանրապետության նախագահի դերակատարումն իշխանությունների տարանջատման համակարգում:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով Սահմանադրության 166 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի

¹⁵ Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի՝ արդեն իսկ հիշատակված թիվ 403/2006 (CDL-AD(2007)028) կարծիքը, 14-րդ պարբերություն:

դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ, իսկ վերջինս առաջարկվող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից: Իսկ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի նախագահին ընտրում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, Վճռաբեկ դատարանի կազմից, վեց տարի ժամկետով:

Ազգային ժողովի կողմից դատավորների ընտրության մոդելի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովն այն տեսակետն է արտահայտել, որ թեև այն թվում է առավել ժողովրդավարական մեխանիզմ, բայց կարող է նաև դատավորներին ներգրավել քաղաքական գործունեության մեջ և հանգեցնել գործընթացի քաղաքականացմանը: Խորհրդարանի կողմից դատավորների ընտրությունը հայեցողական ակտ է, հետևաբար, եթե անգամ թեկնածություններն առաջարկվում են դատական խորհրդի կողմից, չի բացառվում, որ խորհրդարանը կարող է ձեռնպահ մնալ առաջարկն ընդունելուց¹⁶: Վենետիկի հանձնաժողովն այն կարծիքին է, որ խորհրդարանն անկասկած առավել ներքաշված է քաղաքական խաղերի մեջ, և դատավորների ընտրությունը խորհրդարանում կարող է հանգեցնել քաղաքական գործարքների, որի յուրաքանչյուր անդամ կարող է ցանկանալ ունենա իր սեփական դատավորը¹⁷:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ քննարկված սահմանադրական նոր լուծումները թեև հիմնականում ամուր հիմքեր են ստեղծել դատական իշխանության իրական անկախության ապահովման համար, սակայն առանձին դեպքերում, ինչպես արդեն նշել ենք, հենց այս նոր կարգավորումներն են որոշակիորեն խնդրահարույց թվում. մասնավորապես նկատի ունենք ԲԴԽ-ի կազմավորման, Վճռաբեկ դատարանի դատավորների նշանակման կարգի հետ կապված մտավախությունները: Այդուհանդերձ, այս կարգավորումների վերաբերյալ վերջնական հստակ եզրահանգում կարող է արվել միայն ճյուղային օրենսդրության մեջ դրանց ինկորպորացման և դրանց գործնական կիրառության արդյունքների հիման վրա:

Բանալի բառեր – *դատական իշխանության անկախություն, Արդարադարտության խորհուրդ, Բարձրագույն դատական խորհուրդ, դատավոր անդամներ, ոչ դատավոր անդամներ, ՀՀ Ազգային ժողով, ՀՀ նախագահ*

¹⁶ Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի թիվ 403/2006 (CDL-AD(2007)028) կարծիքը, 9-10-րդ պարբերություններ:

¹⁷ Տե՛ս u Venice Commission, Opinion on the Draft Law on Judicial Power and Corresponding Constitutional Amendments of Latvia, CDL-AD (2002) 26, para. 22:

ГАГИК КАЗИНЯН – Конституционные основы обеспечения независимости судебной власти. – В статье рассматриваются гарантии независимости судебной власти в контексте конституционных изменений от 6 декабря 2015 года. Представлены правовые положения, касающиеся статуса, состава и формирования Совета юстиции и его преемника – Высшего судебного совета как конституционных органов, ответственных за обеспечение независимости судебной власти. Проанализированы действующее законодательное регулирование проблем, возникающих на практике, и новые конституционные нормы, направленные на их решение. Кроме того, изложены преимущества и недостатки действующих и новых конституционных механизмов назначения судей.

Ключевые слова: *независимость судебной власти, Совет юстиции, Высший судебный совет, Национальное Собрание РА, президент РА*

GAGIK GHAZINYAN – The Constitutional Bases for Securing the Independence of the Judiciary. – The article is focused on the constitutional guarantees of the independence of judicial power in the context of the constitutional amendments of 6 December 2015. The article presents the regulations related to the status, composition and formation of the Council of Justice and its successor High Council for Judiciary as constitutional bodies responsible for guaranteeing the independence of the judiciary based on the analysis of the existing legislative regulations, issues rising in practice and the new constitutional amendments aimed to solve them. The article also outlines the advantages and disadvantages of the current and new constitutional regulations in regard the appointment of judges.

Key words: *independence of judicial power, Council of Justice, High Council for Judiciary, judge members, non-judge members, National Assembly of the RA, President of the RA*

**ՎԵՐԱՔՆՆԻՉ ԵՎ ՎՃՌԱԲԵԿ ԱՏՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ
ԴԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԼՈՒՑՄԻ ՆԵՐՔՈ՝**

ՏԱԹԵՎ ՍՈՒՋՅԱՆ

Տեսության մեջ ընդհանուր առմամբ առանձնացնում են դատական ակտերի վերանայման երկու հիմնական (դասական) ձևեր¹, որոնք բնորոշվում են «վերաքննություն» (ծագում է լատիներեն՝ *appelarel* բառից, որը թարգմանաբար նշանակում է բողոքարկել, դիմել բարձրագույն դատական ատյանին գործն ըստ էության լուծելու համար) և «վճռաբեկություն» (ծագում է լատիներեն «*cassatio*» կամ ֆրանսերեն «*casser*» բառից, որը թարգմանաբար նշանակում է կոտրել, ջարդել, ոչնչացնել, այսինքն՝ բեկանել կամ չեղյալ հայտարարել ստորադաս դատարանի դատական ակտը) եզրույթներով²:

ՀՀ եռաստիճան դատական համակարգի պայմաններում վերանայման այս հիմնական ձևերը ՀՀ քրեական դատավարությունում իրացվում են համապատասխանաբար ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նան՝ Վերաքննիչ դատարան) և ՀՀ վճռաբեկ դատարանի

* Հոդվածը պատրաստվել է 15-T- 5E236՝ «Դատական ակտերի վճռաբեկ վերանայման տեսական և գործնական հիմնախնդիրները» թեմատիկ հայտի շրջանակներում:

¹ Վերոհիշյալ դիտարկմանը, իհարկե, պետք է վերաբերվել որոշակի վերապահումով, քանի որ դատական ակտերի վերաքննիչ և վճռաբեկ վերանայման կառուցակարգերի առանձնացումը բնորոշ է մայրցամաքային կամ ժամանագերմանական իրավական համակարգին: Մինչդեռ ընդհանուր իրավունքի համակարգին ընդհանրապես խորթ է «վճռաբեկություն» եզրույթը, և դատական ակտերի վերանայման բոլոր հնարավոր ձևերը կլանվում են «ապելյացիա» (վերաքննություն) հասկացության մեջ: Անգամ նույն մայրցամաքային իրավական համակարգում բարձրագույն դատական ատյանի կողմից իրականացվող վերանայման շրջանակներում առանձնացնում են երկու հիմնական մոդել՝ ֆրանսիական վճռաբեկությունը և գերմանական ռեիզիան: Ավելի մանրամասն տե՛ս **Sofie M., F. Geeroms**, Comparative law and legal translation. Why the terms Cassation, Revision and Appeal should not be translated // The American journal of Comparative Law, Vol. 50, No. 1, (Winter, 2002), էջ 201-228// http://www.jstor.org/stable/840834?seq=1#page_scan_tab_contents:

² Տե՛ս **Գ. Ս. Ղազինյան**, Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Եր., 2001, էջ 382-383, **Калмыков В. Б.** Кассационное производство в уголовном процессе: Проблемы теории и правоприменения. Дисс. канд. юрид. наук. Казань, 2010, էջ 11-40, **Сухова О. А.**, Кассационное обжалование судебных решений в российском уголовном процессе. Дисс. канд. юрид. наук. Саранск, 2004, էջ 18-61, **Строгович М. С.** Уголовный процесс. М., 1946, էջ 450, **Sofie M. F. Geeroms**, նշվ. աշխ., **J. A. Jolowicz**, Appeal, Cassation, Amparo and all that: What and why?, էջ 2050-2051 // <http://biblio.juridicas.unam.mx/libros/2/643/26.pdf>

րանի քրեական պալատի (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան) կողմից³: Թե՛ վերաքննությունը և թե՛ վճռաբեկությունը բնութագրվում են որոշակի նպատակային նշանակությամբ, որոնցից բխում են նաև համապատասխան գործառնության առանձնահատկությունները: Ուստի վերանայման այս ձևերից յուրաքանչյուրն իրացնող դատական ատյանների գործառնության դերի վերհանումը և հստակեցումը, ինչպես նաև համապատասխան դատավարական օրենքներում վերջինիս բովանդակային առումով համահունչ օրենսդրական կարգավորումներ նախատեսելը չափազանց կարևոր են անձի դատական պաշտպանության իրավունքի իրացումը, դատարանի մատչելիությունը, դատավարության խնայողականությունն ու արագությունը, դատական վերանայման արդյունավետությունը, իսկ վերջնարդյունքում՝ նաև երկրում իրականացվող արդարադատության պատշաճ որակը երաշխավորելու համար, ինչը հատուկ ընդգծված է նաև վերջին սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում⁴:

Վերանայման այս երկու ձևերի՝ գործառնության առումով ոչ նույնական լինելու հանգամանքը որոշակիորեն ճանաչված իրողություն է տեսության մեջ: Այսպես, եթե վերաքննության մեխանիզմը ենթադրում է գործի փաստական կողմը վերանայելու, ապացույցները հետազոտելու, այդ թվում՝ նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորություն, ապա վճռաբեկությունը բացառապես իրավունքի հիմքով վերանայում է: Սահմանազատելով վերաքննությունը վճռաբեկությունից՝ Ն. Վ. Լանտուխը բավական պատկերավոր եզրահանգում է անում այն մասին, որ վերաքննության ինստիտուտը հիմնված է այն կանխավարկածի վրա, որ վերադաս դատական ատյանը կոչված է լավագույնս երաշխավորելու դատական ակտի արդարացիությունը, իսկ վճռաբեկ վարույթը՝ իրավաբանական այն մտայնության, որ դատարանի կողմից օրենքով սահմանված կարգի պահպանմամբ կայացված ցանկացած դատական ակտ արդարադատ է⁵: Եվ այս առումով քրեադատավարական տեսության մեջ առանձին դատավարագետներ հաճախ մեջբերում են ֆրանսիական քրեական դատավարության տեսության դասական Մ. Տոստեն Էլիի հայտնի պատկերավոր այն բնորոշումը, որ վճռաբեկ վե-

³ Դատական համակարգի այս օղակների կողմից իրացվում են նաև վերանայման այլ գործառնություններ, որոնք, սակայն վերաքննություն կամ վճռաբեկություն չեն: Խոսքը մասնավորապես օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով, նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման հիմքով բացառիկ վերանայման մասին է:

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի մշակված և Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից 2015 թվականի մարտի 14-ին հավանության արժանացած՝ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», Եր., 2014, էջ 40:

⁵ Տե՛ս **Лантух Н. В.** Формы проверки не вступивших в законную силу приговоров. СПб., 2001, էջ 30:

րանայումը դատարան է դատարանի գործունեության նկատմամբ՝ «դատարան դատարանի նկատմամբ», իսկ վերաքննիչ վերանայում իրականացնող դատարանը «գործով դատարան է»⁶: Վճռաբեկությունը բնորոշելով որպես իրավական փաստարկների փոխանակում կամ բանավեճ (քննարկում) իրավունքի մեկնաբանության կարևոր խնդրի շուրջ՝ Լ. Վ. Գոլովկոն հանգել է այն եզրակացության, որ մաքուր վճռաբեկության կամ առհասարակ դատական ակտերի վերանայման համակարգի դասական մոդելը ենթադրում է, որ վերաքննիչ վերանայման արդյունքում կայացված դատական ակտն ըստ էության վերջնական է, և վճռաբեկ վերանայման առարկա կարող է դառնալ միայն դրա իրավական կողմը: Վերանայման այս դասական մոդելի պայմաններում հեղինակը հատկապես կարևորում է այն, որ դրանում բարձրագույն դատական ատյանը, որը և պետք է օժտված լինի վճռաբեկ վերանայման լիազորություններով, կարողանում է ոչ միայն ուղղել դատական սխալները, այլև ապահովել դատական պրակտիկայի միասնականությունը⁷:

ՀՀ իրավական պրակտիկայում բազմիցս կասկածի տակ է դրվել եռաստիճան դատական համակարգի գործառության արդյունավետությունն այն առումով, որ անիմաստ է վերանայող երկու դատական ատյանների միաժամանակյա գոյությունը, եթե գործառությանին առումով դրանք չեն տարբերվում միմյանցից: Հետևաբար, յուրաքանչյուր պետական մարմնի, այդ թվում՝ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների գոյությունն առաջին հերթին պետք է արդարացված լինի վերջիններիս կողմից իրականացվող գործառության անհրաժեշտության հիմնավորման և արդյունավետության տեսանկյունից⁸: Ուստի պատահական չէ, որ վերջին սահմանադրական բարեփոխումների հայեցակարգային մտտեցումներից մեկը դատական վերանայում իրականացնող ատյանների գործառությանին դերի հստակեցումն էր, որի բացակայությամբ էր թերևս պայմանավորված եռաստիճան դատական համակարգից երկաստիճան դատական համակարգի անցնելու շրջանավոր գաղափարի գոյությունը, որից, ի վերջո, 2015 թվականի դեկտեմբեր 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության (այսուհետ նաև՝ Սահմանադրություն) տեքստը հրաժարվել է և հստակորեն սահմանել վերաքննիչ և վճռաբեկ դատարանների սահմանադրաիրավական կարգավիճակը՝ դրանով իսկ սահմանադրական հիմքեր ստեղծելով դատական վերա-

⁶ Տե՛ս **Helie F.**, Traite d'instruction criminelle ou theorie du code d'instruction criminelle Paris. 1867. № 892, մեջբերումն ըստ **Лангух Н. В.**, նշվ. աշխ., էջ 26, **Калмыков В. Б.**, նշվ. աշխ., էջ 12:

⁷ Տե՛ս **Головко Л. В.** Новеллы УПК РФ: прогресс или институциональный хаос? // Апелляция, кассация, надзор: новеллы ГПК РФ и УПК РФ. Первый опыт критического осмысления. М., 2011:

⁸ Տե՛ս **Վ. Հովհաննիսյան**, Վերաքննիչ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի հստակեցումը և վերաքննության տեսակի օբյեկտային սահմանների հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու» /գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան, Եր., 2016, էջ 167:

նայման այս ատյանների գործառույթային դերի հստակեցման համար:

Այսպես, Սահմանադրության 171 հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, վճռաբեկ դատարանն է, որը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, ինչպես նաև վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները*: Սահմանադրության 172 հոդվածն էլ սահմանում է, որ *վերաքննիչ դատարաններն առաջին ատյանի դատարանների դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող դատական ատյան են*:

Նախ, անդրադառնալով Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական նոր կարգավիճակին՝ պետք է նշել, որ 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 92 հոդվածը սահմանում է, որ *Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը*: Քննարկվող նորմի վերոհիշյալ խմբագրությամբ պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանի գործունեության մեջ արդարադատության և օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթների հարաբերակցության հարցը տեսաբանների և պրակտիկ աշխատողների կողմից լայն քննարկման առարկա է դարձել⁹: Այս սահմանադրաիրավական նորմի վերլուծությունից բխում է, որ Վճռաբեկ դատարանը ՀՀ բարձրագույն դատական ատյանն է, հետևաբար, որպես դատական իշխանության մարմին, կոչված է իրականացնելու արդարադատություն: Սակայն միննույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ունի նաև օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու սահմանադրաիրավական առաքելություն: Եվ հստակ չէ, թե արդյոք Վճռաբեկ դատարանը արդարադատություն իրականացնելով է ապահովում օրենքի միատեսակ կիրառությունը, թե օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու եղանակով է վերջին հաշվով իրականացնում արդարադատություն: Վերոհիշյալ խնդիրն ավելի է խորացնում ՀՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 1-ին մասում տեղ գտած ձևակերպումը՝ համաձայն որի՝ Վճռաբեկ դատարանի գործունեության նպատակն է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը: Այդ առաքելությունն իրականացնելիս Վճռաբեկ դատարանը պետք է ձգտի նպաստելու իրա-

⁹ Տե՛ս **Ա. Ս. Ղամբարյան**, Դատական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում (համատեսական և մեթոդաբանական հիմնախնդիրներ), Եր., 2013, էջ 258-280, **Վ. Վ. Հովհաննիսյան**, ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի նորմերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրաիրավական խնդրի իրացումը քաղաքացիական դատավարությունում // «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Եր., 2016, № 1 (19), էջ 64-75:

վունքի զարգացմանը: Նշված բազմիմաստ կարգավորումները հիմնավորում են, որ Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի հստակեցումից է մեծապես կախված վճռաբեկության՝ որպես դատական ակտերի վերանայման ձևի համարժեք բովանդակային օրենդրական կանոնակարգումը:

Այսպես, օրինակ, օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու սահմանադրաիրավական գործառույթը հանգեցրել է այն բանին, որ եթե նախքան 2006 թվականի հուլիսի 7-ի օրենքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունները գործում էր վճռաբեկ բողոքարկման ազատության սկզբունքը, և օրենքով նախատեսված ձևական պահանջները բավարարող բողոքն անվերապահորեն ընդունվում էր վարույթ և դառնում Վճռաբեկ դատարանի քննարկման առարկա, ապա նշված օրենքով ներդրվեց դատական ակտերի բողոքարկման թույլատրական (դիսկրեցիոն) կարգ, որի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար այն պետք է համապատասխանի որոշակի բովանդակային չափանիշների: Նշված փոփոխությունը պայմանավորված էր նրանով, որ դատական իշխանության բարձրագույն մարմնի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման (իրավունքի զարգացում) գործառույթի իրականացումը պահանջում է վերջինիս ծանրաբեռնվածության նվազեցման համապատասխան մեխանիզմների մշակում, այդ թվում՝ բողոքը վարույթ ընդունելու և, ըստ այդմ, դատական ակտը վերանայելու հայեցողական լիազորությունների նախատեսում: Սակայն միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանի հստակ սահմանադրաիրավական կարգավիճակի բացակայության պայմաններում հարց է ծագում, թե արդյոք այս գործառույթի արդյունավետ իրականացումը պետք է դիտարկել որպես գերխնդիր և ապահովել դրա իրացումը նույնիսկ արդարադատության շահերի հաշվին, թե բոլոր դեպքերում կոնկրետ խնդրի լուծումը, այն է՝ վարույթ ընդունելու հիմքերի օրենսդրական կանոնակարգումը, պետք է իրականացնել այն հաշվով, որ բացառվի ընտրողական արդարադատության իրականացումն այն պարագայում, երբ խոսքը անձի հիմնարար իրավունքների և օրինական շահերին առնչվող դատական սխալների մասին է, այսինքն՝ երբ հնարավոր են դատական սխալի առկայության այնպիսի փաստեր, որոնք կապված չլինեն օրենքի միատեսակ կիրառության (իրավունքի զարգացման) ապահովման անհրաժեշտության հետ:

Ժամանակին ռուս նշանավոր դատավարագետ Ի. Յ. Ֆոյնիցկին բավական հետաքրքիր դիտարկում է արել առ այն, որ վճռաբեկության ինստիտուտը հետապնդում է երկու բնույթի խնդիրներ՝ դատական-քաղաքական և դատական-գործնական: Դատական-քաղաքական խնդիրը, նրա բնորոշմամբ, Վճռաբեկ դատարանին հաղորդում է դատական հսկողության բարձրագույն մարմնի բնույթ և նշանակություն, իսկ ինքնին վճռաբեկությունը դառնում է ի շահ օրենքի իրականացվող գործու-

նեություն՝ կտրված գործի էությունից: Դատավարագետի խոսքերով՝ դատական-գործնական խնդրի վրա է հիմնված վճռաբեկությունը՝ ի շահ գործի, երբ Վճռաբեկ դատարանի որոշումը սահմանափակվում է միայն այդ կոնկրետ գործի ճակատագիրը լուծելով¹⁰: Ըստ էության նույն դատական-քաղաքական և դատական-գործնական խնդիրներն են առանձնացնում այն դատավարագետները, որոնց համոզմամբ՝ դատական ակտերի վերանայման այս ձևը կոչված է համապատասխանաբար նպաստելու քրեական, քրեադատավարական և մյուս օրենքների ճիշտ մեկնաբանությանը և կիրառմանը (դատական պրակտիկայի ղեկավարմանը), աջակցելու քրեական գործերով միասնական դատական պրակտիկայի ձևավորմանը և ապահովելու մարդու ու քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը¹¹:

Դատական սխալների ուղղումը և ըստ այդմ մարդու ու քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն առհասարակ դատական վերանայման համակարգի առջև դրված հիմնական խնդիրներից է: Եվ այս խնդրի լուծման հարցում անմասն չի կարող մնալ նաև այդ համակարգը կազմող տարրերից մեկը՝ վճռաբեկությունը: Վերջին եզրահանգման օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ դատական վերանայման այս ձևը գործադրող մարմինը, որպես կանոն, երկրի բարձրագույն դատական ատյանն է և որպես դատական իշխանության բարձրագույն մարմին՝ կոչված է իրականացնելու արդարադատություն:

Դատական ակտերի վճռաբեկ վերանայումը կոչված է լուծելու դատական վերանայման մեկ այլ կարևոր խնդիր ևս, այն է՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովումը: Այս խնդրի կարևորությունն անվիճելի է այն իմաստով, որ միասնական իրավակիրառ չափանիշների մշակումն օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի, իրավունքի գերակայության, իրավական որոշակիության հիմնարար արժեքների ապահովման գործուն մեխանիզմ է¹²: Պետք է համաձայնել տեսական գրականության մեջ արտահայտված այն կարծիքին, որ բարձրագույն դատական ատյանների կողմից օրենքի միատեսակ մեկնաբանությունը և ըստ այդմ միասնական դատական պրակտիկայի ապահովումը օրյեկտիվ անհրաժեշ-

¹⁰ Տե՛ս **Фойницкий И. Я.** Курс уголовного судопроизводства. Том 2. СПб., 1910, էջ 520: file:///C:/Users/USER/Downloads/1foynitskiy_i_ya_kurs_ugolovno_sudoproizvo_dstva_tom_2.pdf

¹¹ Տե՛ս **Ковтун Н. Н.** Судебный контроль в уголовном судопроизводстве России. Монография. Н. Новгород, 2002, էջ 85, **Sarstedt W.**, Die Revision in Strafsachen. Essen, 1962, էջ 31, մեջբերումն ըստ **Лантух Н. В.**, նշվ. աշխ., էջ 81:

¹² Տե՛ս **Быстров А. Н.** Проблемы обеспечения единообразия в истолковании правовых норм судами общей юрисдикции и арбитражными судами (на примере Закона об ОСАГО). М., 2009. <http://cyberleninka.ru/article/n/problemy-obespecheniya-edinoobraziya-v-istolkovanii-pravovyh-norm-sudami-obshchey-yurisdikticii-i-arbitrazhnyimi-sudami-na-primere-zakona>, **Юревич И. В.** Роль Верховного суда Украины в обеспечении единства правопонимания // "Проблемы законности", № 116, 2011. <http://cyberleninka.ru/article/n/rol-verhovnogo-suda-ukrainy-v-obespechenii-edinstva-pravoponimaniya>:

տություն են՝ պայմանավորված այնպիսի գործոններով, ինչպիսիք են անընդհատ փոփոխվող օրենսդրությունը, որը հաճախ բարդ իրավական խնդիրներ է առաջացնում իրավակիրառ պրակտիկայում, օրենսդրական կարգավորման բացերին արագ արձագանքելու անհրաժեշտությունը, իրավական համակարգի աստիճանական համապատասխանեցումը իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և միջազգային իրավունքի նորմերին¹³: Այս խնդրի կարևորությունն ընդգծել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան)¹⁴: Իր նախադեպային իրավունքում Եվրոպական դատարանը արձանագրել է, որ բարձրագույն դատական ատյանների վրա է դրված ստորադաս դատարանների համար ուղղորդող նշանակություն ունեցող մեկնաբանություններ տալու պարտականությունը: Հակառակ պարագայում բարձրագույն դատական ատյանը դառնում է իրավական անորոշության աղբյուր՝ խաթարելով հասարակության վստահությունը դատական համակարգի նկատմամբ¹⁵:

Իրավական համակարգերի գլոբալացման արդի պայմաններում բարձրագույն դատական ատյանին իրավունքի զարգացման և միասնական իրավաքաղաքականության (օրենքի միատեսակ կիրառության) ապահովման գործառույթների վերապահումը և այս խնդրի արդյունավետ իրացման նպատակով Վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածության նվազեցմանն ուղղված համապատասխան մեխանիզմների ներմուծումը, կարծում ենք, իրավաչափ է, սակայն, այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը՝ որպես դատական իշխանության բարձրագույն մարմին, պետք է հնարավորություն ունենա իրականացնելու իր հիմնական՝ արդարադատության գործառույթը: Եվ ըստ էության հավասարակշռված կարգավորման այս գաղափարն է զարգացել 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 171 հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ Վճռաբեկ դատարանն ապահովում է *օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը*, վերացնում է մարդու իրավունքների և ազատություն-

¹³ Տե՛ս **Скитович В. В., Седельник В. В.** Правосудие и правоохранительная деятельность в евразийском пространстве. К вопросу об имплементации судебного прецедента в правовую систему Республики Беларусь. <http://www.eurasian-advocacy.ru/pravosudie-i-pravookhranitelnaya-deyatelnost-v-evrazijskom-prostranstve/1468-k-voprosu-ob-implementatsii-sudebnogo-pretседента-v-pravovuyu-sistemu-respubliki-belarus>: **Вишневский Г. А.** Единство судебного правоприменения как способ обеспечения верховенства права // <http://ecsosman.hse.ru/data/2012/01/06/1270397099/2-2011-4.pdf>, **Цвайгерт К., Кетц Х.** Введение в сравнительное правоведение в сфере частного права. В 2 т. Т. 1. М., 2000, էջ 403 // <http://www.twirpx.com/file/139935/> **S. Պորոսյան**, Իրավունքի աղբյուրները գլոբալացման պայմաններում, Օրինականություն, № 72, 2012, էջ 63:

¹⁴ Տե՛ս **S.W. v. the United Kingdom**, 1995 թվականի նոյեմբերի 25-ի վճիռ, գանգատ թիվ 20166/92, կետ 36, **C.R. v. the United Kingdom**, 1995 թվականի նոյեմբերի 22-ի վճիռ, գանգատ թիվ 20190/92, կետ 34:

¹⁵ Տե՛ս **Beian v. Romania**, 2007 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռ, գանգատ թիվ 30658/05, կետ 39, **Pérez Arias v. Spain**, 2007 թվականի հունիսի 28-ի վճիռ, գանգատ թիվ 32978/03, կետ 27:

ների **հիմնարար խախտումները**: Եվ այս սահմանադրական կարգավորմանը համահունչ ներկայումս շրջանառության մեջ գտնվող ՀՀ նոր դատական օրենսգրքի նախագծի¹⁶ 32 հոդվածի 1-ին մասը, մասնավորապես սահմանում է, որ Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները: Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը համապատասխանաբար առավել ընդհանուր գծերով բացահայտում են այս գործառույթների բովանդակությունը՝ սահմանելով, որ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է վերանայվող դատական ակտով կիրառված օրենքը կամ այլ նորմատիվ իրավական ակտը մեկնաբանելով, որը կիրառվել է հակասական մեկնաբանությամբ, կամ որի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, իսկ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու նպատակով Վճռաբեկ դատարանը վերանայում է այն դատական ակտերը, որոնք կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու հիմնական իրավունքները, ազատությունները և արդարադատության բուն էությունը խաթարող նյութական կամ դատավարական իրավունքի խախտումներ: Քննարկվող սահմանադրական նորմը և դրա ինկորպորացմանն ուղղված՝ ՀՀ դատական նոր օրենսգրքի նախագծի վկայակոչված կարգավորումները, բնականաբար, առավել մանրակրկիտ կարգավորում պետք է գտնեն ճյուղային դատավարական օրենքներում:

Այս առումով հարկ ենք համարում նշել, որ Վճռաբեկ դատարանի գործունեության մեջ օրենքի միատեսակ կիրառության և արդարադատության իրականացման գործառույթների ողջամիտ հավասարակշռության ապահովման տեսանկյունից համաչափ օրենսդրական կարգավորումներ են նախատեսված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում, որոնց համաձայն՝ պետք է շարունակի գործել բողոքը վարույթ ընդունելու հայեցողական կարգ որպես օրենքի միատեսակ կիրառության արդյունավետ իրականացման երաշխիք, և մինչև նույն ժամանակ, հստակ սահմանված դատական կոպիտ սխալների առկայության դեպքում բողոքը պետք է պարտադիր վարույթ ընդունվի՝ անկախ օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու անհրաժեշտության առկայությունից կամ բացակայությունից: Դրան հակառակ՝ գործող օրենսդրական կարգավորումները, հատկապես «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-48-Ն օրեն-

¹⁶Տե՛ս <https://www.e-draft.am/projects/469/about>

քով կատարված փոփոխությունների և լրացումների ինկորպորացման արդյունքում ստեղծված վիճակը, երբ դատական սխալի իմաստով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը նույնացվում են վերաքննիչ վերանայման արդյունքում դատական ակտի բեկանման և փոփոխման հիմքերի հետ, չի բխում Վճռաբեկ դատարանի սահմանադրական նոր կարգավիճակից: Առկա կարգավորումների տառացի մեկնաբանությունից բխում է, որ ցանկացած դատական սխալի հիմքով բերված վճռաբեկ բողոք պետք է պարտադիր վարույթ ընդունվի և ըստ էության քննության առարկա դառնա: Իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի ծանրաբեռնվածության և դատավորների սահմանափակ թվի պայմաններում բոլոր բողոքները վարույթ ընդունելու և ըստ էության քննության առնելու պարագայում որակյալ դատական նախադեպեր ստեղծելու հնարավորությունը, ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկայի վիճակագրությունը, առավել քան կասկածելի է: Այսպես, օրինակ, ՀՀ դատական դեպարտամենտից 2016 թվականի ապրիլի 13-ին ստացված թիվ Ե-2360 տեղեկանքի համաձայն՝ 2010-2015 թթ. ընթացքում Վճռաբեկ դատարան ներկայացված բողոքների թիվը տատանվել է 1043-1455-ի սահմաններում, այսինքն՝ միջինը գերազանցել է տարեկան 1000-ը¹⁷: Ասվածը, իհարկե, չի նշանակում, որ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի շրջանակից պետք է բացառվեն անձի հիմնարար իրավունքներին և ազատություններին առնչվող դատական սխալի դեպքերը, քանի որ դրանց քննությամբ ապահովվելու է Վճռաբեկ դատարանի կողմից արդարադատության իրականացումը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի նոր սահմանադրական կարգավիճակին, ապա հարկ է նշել, որ Սահմանադրության արդեն իսկ հիշատակված հոդվածների համակարգային վերլուծության միջոցով պրոֆեսոր Վ. Հովհաննիսյանը իրավաչափորեն դիտարկում է անում առ այն, որ Հայաստանի Հանրապետությունում դատական վերանայման գործառույթ իրականացնող հիմնական դատական ատյանը վերաքննիչ դատարանն է, քանի որ Վճռաբեկ դատարանի կողմից քննության առարկա կարող են դառնալ ողջամտորեն սահմանափակ գործեր, ինչը բացառապես պայմանավորված է նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության ու մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումների վերացման անհրաժեշտությամբ¹⁸:

Վերաքննության՝ որպես դատական ակտի վերանայման ձևի տարբերիչ առանձնահատկությունը, ինչպես արդեն նշել ենք, գործով ապացույցներ հետազոտելու և ըստ այդմ գործի փաստական կողմին

¹⁷ Նշված վիճակագրական տվյալների մասով տե՛ս նաև ՀՀ դատարանների գործունեության վերաբերյալ ըստ տարիների համեմատական վիճակագրական վերլուծությունները http://www.court.am/files/news/3788_am.pdf// http://www.court.am/files/news/3388_am.pdf// http://www.court.am/files/news/2864_am.pdf// http://www.court.am/files/news/2457_am.pdf// http://www.court.am/files/news/2151_am.pdf

¹⁸ Տե՛ս Վ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 168:

անդրադառնալու հնարավորությունն է, որով այն տարբերվում է դատական ակտերի վերանայման մյուս ձևերից, այդ թվում նաև վճռաբեկությունից: Եվ Սահմանադրության վկայակոչված հոդվածների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ դրանցում փորձ է արվել արտացոլելու վերաքննության վկայակոչված առանձնահատկությունը և զարգացնելու այն գաղափարը, որ փաստի հիմքով վերջնական դատական ակտ կայացնելու լիազորությունը վերապահված է Վերաքննիչ դատարանին, իսկ Վճռաբեկ դատարանը հանդես է գալիս բացառապես որպես իրավունքի դատարան: Սահմանադրական այս նոր կարգավորումների համատեքստում Վերաքննիչ դատարանի՝ որպես երկրորդ աստիճանի դերակատարումն էլ ավելի է կարևորվում: Եվ այս տեսանկյունից քննարկման կարիք ունի այն հարցը, թե որքանով են վերաքննության գործող օրենսդրական կարգավորումները համահունչ Վերաքննիչ դատարանի սահմանադրական առաքելությանը, և արդյոք դրանք բավարար իրավական հիմքեր են ստեղծում Վերաքննիչ դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Այս առումով թերևս ոչ իրավաչափ է թվում գործող օրենսդրական այն կարգավորումը, երբ Վերաքննիչ դատարանը լիազորված է իրականացնելու նաև վճռաբեկության կարգով գործերի քննություն: Դա ոչ իրավաչափ շեղում է վերանայման տարբեր աստիճանների գործառնության (ֆունկցիոնալ) դերի հստակ տարանջատման կարևորագույն պահանջից և ակնհայտ հակասության մեջ է մտնում Վերաքննիչ դատարանի նոր սահմանադրական կարգավիճակի հետ: Խոսքը, մասնավորապես, ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 390 հոդվածի 1-ին մասում առկա կարգավորման մասին է, համաձայն որի՝ Վերաքննիչ դատարանում գործերի քննությունը կատարվում է վերաքննության կանոններով, ինչպես նաև Վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով: Այս նորմին ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Գ. Հախնազարյանի վերաբերյալ գործով 2009 թվականի հունիսի 29-ի որոշմամբ տրված դատական մեկնաբանությունը հանգեցրել է Վերաքննիչ դատարանում բողոքի քննության երկու գուգահեռ իրավական ռեժիմների՝ վերաքննության և վճռաբեկության առկայությանը, որոնց որակական տարբերությունը՝ կապված, օրինակ, կողմերի պարտադիր մասնակցության, նոր ապացույցներ հետազոտելու հնարավորության հետ, ակնհայտ է: Թեև այդ նույն որոշմամբ փորձ է արվել սահմանելու նաև այս ռեժիմներից յուրաքանչյուրի ընտրության որոշակի չափանիշներ, այդուհանդերձ, անկախ այդ պայմաններից, Վերաքննիչ դատարանի կողմից վճռաբեկության կանոններով գործի քննությունը ինքնին հակասության մեջ է մտնում այս դատարանի բուն առաքելության հետ:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք փաստել, որ 2015 թվականի

դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունների շնորհիվ էապես հստակեցվել է վերաքննիչ և վճռաբեկ ատյանների սահմանադրահրավական կարգավիճակը, և երկրի հիմնական օրենքի մակարդակով ամուր սահմանադրական հիմքեր են ստեղծվել վերաքննության և վճռաբեկության գործառական կրկնությունը բացառելու և վերանայման այս ձևերից յուրաքանչյուրը, դրանք գործադրող դատարանների սահմանադրական առաքելությանը համապատասխան ճյուղային օրենսդրական կարգավորման ենթարկելու համար:

Բանալի բառեր – *վերաքննություն, վճռաբեկություն, Վերաքննիչ դատարան, Վճռաբեկ դատարան, օրենքի միատեսակ կիրառություն, դատական սխալների ուղղում, վերաքննության ռեժիմ, վճռաբեկության ռեժիմ*

TATEV СУДЖЯН – Уточнение функциональной роли апелляционной и кассационной инстанций в свете нового конституционно-правового статуса. – В статье рассмотрено неоднозначное толкование законодательного регулирования апелляции и кассации в качестве форм пересмотра судебных актов, обусловленное отсутствием их чёткой функциональной роли. Проанализирован новый правовой статус судов апелляционной и кассационной инстанций и сделан вывод о возможном урегулировании отраслевых процессуальных законов.

Ключевые слова: *апелляция, кассация, Апелляционный суд, Кассационный суд, единообразное применение закона, исправление судебных ошибок, режим апелляции, режим кассации*

TATEV SUJYAN – Clarification of the Functional Role of Appellate and Cassation Instance in the Light of the New Constitutional-legal Status. – The issues of ambiguous interpretation of the legislative regulations of appeal and cassation as forms of the judicial review, due to the lack of clear differentiation of the functional role of appeal and cassation, are discussed in the article presented. The article analyzes the new legal status of the Appellate and Cassation Courts and as a result of the analysis conclusions are made in regard to the possible legislative regulations in procedural laws aimed to guarantee the functional role of appeal and cassation.

Key words: *appeal, cassation, Appeal Court, Cassation Court, uniform application of law, correction of judicial errors, appeal regime, cassation regime*

**ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ**

ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Քաղաքացիական դատավարության կարգով սուբյեկտիվ իրավունքների արդյունավետ պաշտպանությունը ենթադրում է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովում, ինչը երաշխավորվում է հայրենական իրավական համակարգով կանխորոշված ժամանակահատվածում վիճելի նյութական կամ այլ իրավահարաբերությունը կարգավորող դատական ակտի կայացմամբ՝ դրանով իսկ բացառելով անձի քաղաքացիաիրավական վիճակի անորոշությունը, ինչպես նաև գործնականում իրացնելով «իրավական որոշակիության» սկզբունքի հրամայականներն ու պահանջները¹: Ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքը, արդար դատաքննության իրավունքի գործառական տարր լինելով, նպատակ ունի շահագրգիռ անձին պաշտպանել երկարատև անորոշ վիճակից և ապահովել արդարադատության իրականացումն առանց ձգձգումների, ինչը կարող է վտանգել գործի քննության արդյունավետությունն ու վստահելիությունը²: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի»³ (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6 հոդվածը, ՀՀ Սահմանադրության⁴ 63 հոդվածի 1-ին մասը, արդար դատաքննության իրավունքի բովանդակության մեջ առանձնացնելով ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքը, իրավական համակարգում այն ապահովելու ուղղակի պարտականություն են սահմանում պետության համար: Այս առումով հատկանշական է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) դիրքորոշումն առ այն, որ Կոնվենցիան պայմանավորվող պետություններին պարտավորեցնում է իրենց իրավական համակարգերը կազմակերպել

¹ Տե՛ս **Нешатаева Т. Н.** Уроки судебной практики о правах человека: европейский и российский опыт. М., 2007, էջ 83-101, **Nuala Mole and Catharina Harby.** The right to a fair trial. A guide to the implementation of the article 6 of European Convention on Human Rights // Human rights handbooks, № 3. Directorate General of Human Rights Council of Europe. 2006, էջ 25-27:

² Տե՛ս **Հ. Մ. Տեր-Վարդանյան,** Արդար դատաքննության իրավունքի սահմանադրաիրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2009, էջ 111:

³ Ընդունվել է 4-ը նոյեմբերի, 1950 թ., Հռոմ: ՀՀՊՏ 2002.06.05/17(192), հոդ. 367:

⁴ Ընդունվել է 06.12.2015 թ. հանրաքվեով: ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, հոդ. 1118:

այնպես, որ դատարանները կարողանան ապահովել 6 հոդվածի 1-ին կետի պահանջները՝ ներառյալ ժամկետների ողջամտությունը, և որ ներպետական դատարանների ժամանակավոր ծանրաբեռնվածությունը չի հանգեցնում պետության պատասխանատվության, եթե պետությունը ձեռնարկում է նման իրավիճակը շտկելուն ուղղված անհապաղ արդյունավետ գործողություններ⁵: Սրանից հետևում է, որ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը խախտելու համար պատասխանատվությունն ամբողջապես կրում է պետությունը, որից վերջինս կարող է ազատվել միայն, եթե *անհապաղ* ձեռնարկել է հետագա խախտումները բացառելուն ուղղված *արդյունավետ* միջոցներ, որպիսին գնահատելու իրավասությունը վերապահված է Եվրոպական դատարանին:

Ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի վերաբերյալ կոնվենցիոն և սահմանադրաիրավական դրույթներն ամրագրվել են նաև ճյուղային օրենսդրության մեջ նախատեսվող փոփոխություններով՝ միաժամանակ արտահայտելով նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի և իրավակիրառ դատական պրակտիկայում այս հարցի վերաբերյալ տեղ գտած հիմնական մոտեցումներն ու իրավական դիրքորոշումները⁶: Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի նախագծի 12 հոդվածի համաձայն, եթե գործի քննության և լուծման համար օրենքով սահմանված է որոշակի ժամկետ, ապա այն պետք է քննվի և լուծվի այդ ժամկետում, որի երկարաձգումը թույլատրվում է բացառապես օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Եթե գործի (հարցի) քննության և լուծման համար օրենքով սահմանված չէ որոշակի ժամկետ, ապա գործի քննությունն իրականացվում է ողջամիտ ժամկետում: Դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում գործի կոնկրետ հանգամանքները՝ ներառյալ իրավական և փաստական բարդությունը, դատավարության մասնակիցների վարքագիծը և դատավարության մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները, հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի գործողությունները և դրանց արդյունավետությունը, գործի քննության ընդհանուր տևողությունը և Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված՝ գործի քննության միջին ուղենիշային տևողությունը:

Քաղաքացիական դատավարությունում ողջամիտ ժամկետում

⁵ Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի մեկնաբանություն: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը». գիտական խմբագիր Գ. Հարությունյան, Եր., 2005, էջ 212-214:

⁶ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Տումիլովիչն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության 22.06.1999 թ. վճիռ, Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության 06.04.2002 թ. վճիռ, ՀՀ Սահմանադրական դատարանի 24.06.2007 թ. թիվ ՍԴՈ- 710 որոշում, «Գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման մասին» ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 13.05.2006 թ. որոշում և այլն:

գործերի քննության իրավունքի ապահովման հիմնահարցերը Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում համակողմանի վերլուծության են ենթարկվել, սակայն պետք է արձանագրել նաև, որ այս իրավունքի վերաբերյալ հայրենական իրավագիտության մեջ առկա է գիտական ուսումնասիրությունների, իրավակիրառ միասնական պրակտիկայի պակաս, ինչն իր հերթին խնդրահարույց է դարձնում արդար դատաքննության իրավունքի գործառական տարրի լիարժեք իրացման համար անհրաժեշտ իրավական նախադրյալների ապահովումը, մեկնաբանումն ու ճիշտ կիրառությունը:

Առաջին հերթին որոշակի տարբերություն է նկատվում այս իրավունքի ապահովման՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված չափանիշների և ՀՀ դատական օրենսգրքի նախագծով ամրագրված դրույթների միջև, ինչը պայմանավորված է առավելապես Եվրոպական դատարանի արձանագրած համընդհանուր իրավական պահանջների և անդրազգային սկզբունքների կիրառման հրամայականներով: Ողջամիտ ժամկետի պահպանման չափանիշների շարքում Եվրոպական դատարանն առանձնացնում է առաջին հերթին գործի քննության ընդհանուր տևողությունը, որը ներառում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը լրացնող այնպիսի փուլեր, ինչպիսիք են դատական ակտի հարկադիր կատարման վարույթի և պետական տուրքի վճարահաշվարկային հարաբերությունների տևողությունը⁷: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում գերակայությունը տրվում է սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության այնպիսի բովանդակային տարրերի վերլուծությանը, որը ներառում է նաև պաշտպանության ենթակա իրավունքի փաստացի իրացման համար անհրաժեշտ կառուցակարգերի ապահովումը: Ընդ որում՝ դատական ակտի հարկադիր կատարումը Եվրոպական դատարանի պրակտիկայում դիտարկվում է դատական պաշտպանության իրավունքի բովանդակության և արդյունավետ միջոցների շրջանակներում, առանց որի դատական ամբողջ գործունեությունը կարող է հավասարվել ոչնչի⁸: Հետևաբար, Եվրոպական դատարանը կարևորում է պայմանավորվող պետությունների կողմից իրենց իրավական համակարգերում այնպիսի կառուցակարգերի ապահովումը, որոնք կերաշխավորեն դիմողին դատարան հայց հարուցելուց մինչև գործով կայացվող վերջնական դատական ակտի կատարման համար անհրաժեշտ ժամկետների ողջամիտ տևողությունը: Մինչդեռ ՀՀ դատական օրենսգրքի 12 հոդվածում խոսվում է գործի քննության ընդհանուր, այդ թվում՝ վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում տևողության մասին: Նախագիծը մշակողները հավանաբար հիմք են ընդունել այն

⁷ Տե՛ս **Piter van Dijk, Fried van Hoof, Arjen van Rijn, Leo Zwakk**, Theory and practice of the european convention on human rights, Intersentia, Antwerpen, Oxford, 2006, էջ 604-606:

⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ» (ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի), Եր., 2010, էջ 210:

հանգամանքը, որ դատական ակտի հարկադիր կատարման վարույթը դուրս է դատական գործունեության շրջանակներից, և բավարարվել են միայն ողջամիտ ժամկետներում գործի դատական քննության կամ վերջնական դատական ակտի կատարման իրավունքը խախտելու դեպքում արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը ճանաչելու և պատճառված ոչ նյութական վնասը հատուցելու պահանջ ներկայացնելու օրենսդրական հնարավորության ամրագրմամբ (նախագծի հոդված 12, մաս 4): Հետևում է, որ «*Դատական ակտերի հարկադիր կատարման մասին*» ՀՀ օրենքում կատարողական վարույթի ողջամիտ տևողությունը գնահատելու չափանիշներ ևս պետք է ներդրվեն, և համապարփակ իրավակարգավորման ենթարկվեն հատուցման պահանջ ներկայացնելու հետ կապված հարցերը, ինչպես արվել է, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում: Մասնավորապես, Եվրոպական դատարանը Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով կայացած № 2 (№ 33509/04), 15.01.2009 թ. վճռի եզրափակիչ մասով պատասխանող պետությանն ուղղակիորեն պարտավորեցրել էր վեցամսյա ժամկետում դատարանի նախադեպային պրակտիկայում ձևավորված՝ կոնվենցիոն սկզբունքների մեկնաբանությունների հիման վրա իրավունքների պաշտպանության ներպետական այնպիսի միջոցներ կամ դրանց համադրման կառուցակարգեր ներդնել, որոնք ազգային դատարանների վերջնական դատական ակտերը չկատարելու կամ ոչ ժամանակին կատարելու պարագայում կողմերի համար համարժեք և բավարար հատուցում կապահովեն: Ուստի 30.04.2010 թ. ընդունվեց «Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի կամ ողջամիտ ժամկետում դատական ակտի կատարման իրավունքի խախտման համար փոխհատուցման մասին» № 68-ՓՅՌԴ օրենքը, որը, սակայն, նույնպես չապահովեց քննարկվող իրավունքների պաշտպանության արդյունավետությունը: Մասնավորապես, Եվրոպական դատարանն Իլյուշկինը և ուրիշներն ընդդեմ Ռուսաստանի, Կալինկինն ընդդեմ Ռուսաստանի վճիռներով ուղղակիորեն արձանագրեց, որ դաշնային օրենքն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ չի նախատեսում, քանի որ թույլ է տալիս փոխհատուցում տրամադրել միայն Ռուսաստանի Դաշնության բյուջետային համակարգի միջոցների բռնագանձման մասով դատական ակտերի կատարման իրավունքի խախտման պարագայում, և փաստացի անտեսել է դատական ակտերի այն շրջանակը, որոնց կատարումը պետությունը պարտավոր է ապահովել «բնեղենով»⁹:

Կարող ենք փաստել, որ Եվրոպական դատարանը կարևորում է ոչ թե ազգային իրավական համակարգում ողջամիտ ժամկետում գործի քննության կամ դատական ակտի կատարման իրավունքի ապահովման կառուցակարգերի առկայությունը, այլ դրանց արդյունավետությունը,

⁹ St' u Case Ilyushkin and Others v. Russia, judgment №№ 5734/08, Kalinkin and Others v. Russia, жалобы №№ 16967/10 judgment 17.04.2012 թվականին հրապարակված վճիռներ:

իսկ պատասխանող պետությունը կարող է ազատվել պատասխանատվությունից միայն վիճակը շտկելուն ուղղված անհետաձգելի և անհրաժեշտ գործողությունների կատարման պարագայում: Արդարադատության հիմնական նպատակը մարդու իրավունքների և ազատությունների՝ որպես հիմնական սոցիալական արժեքի պաշտպանությունն է, որը օրենքի ձևական իրացմամբ կարող է չիրականանալ: Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայից բխում է, որ Եվրամիության և Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները կաշկանդված են մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների գերակայության սկզբունքով, ուստի ազգային դատարանը գործի քննության ընթացքում պետք է անդրադառնա իրավունքի գերակայության սկզբունքի և կիրառվող օրենսդրության համատեղելիությանը՝ նախապատվությունը տալով իրավունքի գերակայությանը¹⁰: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն իր DH (97) հանձնարարականում ընդգծել է, որ «արդարադատության իրականացման չափազանց ձգձգումը լուրջ վտանգ է իրավունքի գերակայության համար»: Հետևաբար, իրավաբանական գրականության մեջ տեղ գտած այն մոտեցումը, որ եթե դատավարական ժամկետները սահմանված են օրենքով, ապա դրանք արդեն իսկ ողջամիտ են¹¹, նախադեպային իրավունքում կարող է և հաշվի չառնվել: *Մենք կարող ենք առաջնորդվել օրենքով սահմանված ժամկետների ողջամտության կանխավարկածով, բայց ոչ ավելին*: Այստեղից հետևում է, որ **ողջամիտ պետք է լինեն նաև օրենքով սահմանված ժամկետները**:

Քննադատության չեն դիմանում նաև Ա. Ն. Գունի և Ա. Ա. Մոխովի այն մեկնաբանությունները, որ ողջամիտ ժամկետում գործի քննության տևողության մեջ չպետք է հաշվարկել դատարանի աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ և վերադաս դատական աստիճաններում գործի քննության ժամանակահատվածները, եթե օրենքով նախատեսված դատավարական ժամկետները չեն խախտվել¹²: Մեր կարծիքով՝ արդարադատության հիմնական նպատակը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն է, որը պետության կողմից երաշխավորվում է դատարանի դիմողի համար ողջամիտ ժամկետում իրավական (օրինական և հիմնավորված) վերջնական դատական ակտ ստանալու և հարկադիր կատարման իրավունքների լիարժեք ապահովման միջոցով: Գործի քննության ժամկետի ողջամտությունը գնահատելիս թերևս կարելի է չհաշվել միայն դատավորի բացարկի կամ ինքնաբացարկի դեպքում վերջինիս փոխարինման ժամանակահատվածը, երբ գործի քննությունը պետք է սկսվի սկզբից:

¹⁰ Տե՛ս **Нешатаева Т. Н.** նշվ. աշխ., էջ 53, ինչպես նաև՝ **Микеле де Сальвиа.** Прецеденты Европейского суда по правам человека. СПб., 2004, էջ 53:

¹¹ Տե՛ս **Гуев А. Н.** Комментарий к ГПК РФ. Специально для системы ГАРАНТ, 2010:

¹² Տե՛ս «Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Научно-практический комментарий (постатейный)». М., 2011:

Եվրոպական դատարանը ժամկետի ողջամտության գնահատման չափանիշ է դիտում գործի բարդությունը, դիմողի և իշխանությունների վարքագիծը, որոնք գործի քննության ձգձգման պատճառ են հանդիսացել, դիմողի համար այն արժեքի կարևորությունը, որին վերաբերում է դատաքննությունը¹³: Ընդ որում՝ ՀՀ դատական օրենսգրքի նախագիծն ամբողջովին ներառել է նախադեպային իրավունքում ձևավորված գնահատման չափորոշիչները՝ շեշտը դնելով գործի կոնկրետ հանգամանքների՝ ներառյալ իրավական և փաստական բարդության, դատավարության մասնակիցների վարքագծի և դատավարության մասնակցի համար գործի տևական քննության հետևանքների, հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կողմից կատարված գործողությունների և դրանց արդյունավետության վրա: Եթե Եվրոպական դատարանը կարևորում է իշխանությունների վարքագիծը, որը ներառում է հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կողմից կատարված գործողությունները և դրանց արդյունավետությունը, ինչպես նաև ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի հետագա խախտումները բացառելուն ուղղված անհապաղ արդյունավետ միջոցառումները, ապա քաղաքացիական դատավարությունում առավելապես կարևորվում է դատավարության մասնակիցների վարքագծի և սեղմ ժամկետում քաղաքացիական գործի քննության ու ճիշտ լուծման համար պատասխանատու դատարանի գործողությունների նպատակահարմարությունն ու իրավաչափությունը: Կամ՝ եթե Եվրոպական դատարանը շեշտը դնում է դիմողի համար իրավական պաշտպանության ենթակա արժեքի վրա, ապա քաղաքացիական դատավարությունում կարևորվում են դատավարության մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները, քանի որ իրավական պաշտպանության են ենթակա սուբյեկտիվ իրավունքի խախտման բացասական հետևանքները վերացնելուն ուղղված կամ, այսպես կոչված, փոխհատուցման պահանջները: Ընդ որում, որպես ելակետ պետք է ընդունել այն հանգամանքը, որ քաղաքացիական դատավարությունում թե՛ դատարանը, թե՛ դատավարության մասնակիցները կարող են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք սահմանված են օրենքով: Իրավական նորմերով չնախատեսված գործողությունները դատավարական հարաբերություններում հետևանքներ առաջացնել չեն կարող: Ուստի ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի իրացմանն ուղղված վարքագծի կանոնների և արդյունավետ կառուցակարգերի ապահովման պարտականությունը կրում է պետությունը:

Մեր կարծիքով՝ թե՛ իրավակիրառ պրակտիկայում, թե՛ իրավա-

¹³ Տե՛ս **Моул Н., Харби К., Алексеева Л.** Европейская конвенция о защите прав человека и основных свобод, статья 6: право на справедливое судебное разбирательство, прецеденты и комментарии. М., 2001, էջ 37- 40:

բանական գրականության մեջ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի էությունը և իրավաբանական բնույթը բացահայտելու հիմքում դնում են այնպիսի չափանիշներ, որոնք չպահպանելը հանգեցնում է այս իրավունքի խախտման: Այսինքն՝ հիմնականում քննարկվում է, թե որ դեպքերում կարող ենք արձանագրել իրավունքի խախտումներ: Միչդեռ խնդրո առարկային պետք է մոտենալ բոլորովին այլ տեսանկյունից: Անհրաժեշտ է ձևակերպել ողջամիտ ժամկետում գործի քննության կամ դատական ակտի կատարման իրավունքի հասկացությունը և սահմանել իրավական շրջանակ, որից դուրս անհնար է ապահովել քննարկվող իրավունքների իրացումը: Կարծում ենք, որ **ողջամիտ ժամկետում գործի քննության և դատական ակտի կատարման իրավունքները ենթադրում են պետության կողմից (դատարանի կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով) քաղաքացիական գործի քննության և լուծման կամ դատական ակտի հարկադիր կատարման այնպիսի տևողություն և ժամանակահատված, որի ընթացքում դիմողի համար առավելագույնս կապահովվի պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքի սկզբնական նշանակությունը**: Ճիշտ է, հնարավոր են դեպքեր, երբ քաղաքացիական գործի երկարատև քննության պատճառով դիմողի համար պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքը չկորցնի իր սկզբնական նշանակությունը, սակայն ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը խախտվի դատավարության մասնակիցների վարքագծի և հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կողմից կատարված գործողությունների անարդյունավետության հետևանքով¹⁴: Այս պարագայում արդար դատաքննության իրավունքի խախտումը գնահատվում է օրենսգրքով սահմանված ընդհանուր չափանիշների կիրառմամբ:

Բացի այդ, ընդհանուր իրավական շրջանակ սահմանելը ոչ միայն հնարավորություն կտա առավելագույնս բացահայտելու գործի քննության ժամկետի ողջամտության բովանդակությունը, այլև կհեշտացնի այս իրավունքի խախտումների համարժեք գնահատումը: Ընդ որում, անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ ողջամիտ ժամկետում գործի

¹⁴ Հարկ է նշել, որ գործի տևական քննության հետևանքով վիճելի սուբյեկտիվ իրավունքի նշանակությունն ու արժեքը կարող են ենթարկվել ինչպես բացասական, այնպես էլ դրական փոխակերպման: Բացասականի պարագայում անհրաժեշտություն է առաջանում վերացնել դատարանի դիմողի՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման նյութական և ոչ նյութական հետևանքները: Դրականի պարագայում նյութական հետևանքների հատուցման անհրաժեշտություն չկա, քանի որ գործի տևական քննության արդյունքում պաշտպանության ենթակա իրավունքի նշանակության և արժեքի ավելացման բացասական հետևանքներն ընկնում են պատասխանողի վրա: Հետևաբար, պատասխանողը որպես իրավունքի ենթադրյալ խախտող և վիճելի պարտականության կրող, հայցային պահանջները բավարարող դատական ակտի կայացման պարագայում պետք է կրի նման ոչ բարենպաստ հետևանքների ռիսկը, եթե, իհարկե, արդյունավետ միջոցներ չի ձեռնարկում իրավունքի խախտումները ժամանակին վերացնելու ուղղությամբ:

քննության գնահատումը կարող է իրականացվել բացառապես ՀՀ դատական օրենսգրքի նախագծի 12 հոդվածով սահմանված չափանիշների համակցմամբ և դրանց միասնականության մեջ:

Վերոնշյալ համատեքստում հատկանշական է այն հանգամանքը, թե քաղաքացիադատավարական օրենսդրությունը և դրանում նախատեսվող փոփոխություններն ինչ արդյունավետ կառուցակարգեր են պարունակում ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի իրացման, ապահովման և պաշտպանության համար: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՔԴՕ) նախագծով քաղաքացիական դատավարության տարբերակված ձևերով սահմանվել են գործերի քննության կոնկրետ ժամկետներ, ինչպես նաև լրացուցիչ իրավական երաշխիքներ են ամրագրվել դատական ատյաններում գործերի քննության ժամկետների ապահովման համար, այն է՝ ի տարբերություն գործող իրավակարգավորման, ոչ միայն հայցադիմումը կամ բողոքը վարույթ ընդունելու և դրանց արդյունքում կայացված ժխտողական ակտերը բողոքարկելու ժամկետներ են նախատեսվել, այլև հստակ ժամանակահատված կամ իրադարձային և փաստական ժամկետ է սահմանվել նախնական դատական նիստ նշանակելու և հրավիրելու, վճիռը կայացնելու և հրապարակելու համար, դատավարության հնարավոր տևողությունը երկարաձգող առանձին քաղաքացիադատավարական գործողություններ կատարելու մասով ներդրվել է դատավարական իրավունքների չարաշահման ինստիտուտը, որը թույլ է տալիս դատարանին վերահսկել դատավարության տևողությունը և բացառել իրավունքի չարաշահման հետևանքով կատարված դատավարական գործողությունների այնպիսի իրավական հետևանքների առաջացման հնարավորությունը, որոնք կարող են հանգեցնել դատավարության ընթացքի երկարաձգման և ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման¹⁵: Հարկ է ընդգծել նաև Բարձրագույն դատական խորհրդի կողմից՝ գործի քննության միջին ուղենիշային տևողություն սահմանելու հնարավորությունը:

Ինչ վերաբերում է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի պաշտպանությանը, ապա ՀՀ ՔԴՕ նախագիծը դրա վերաբերյալ որևէ կառուցակարգ չի նախատեսում, իսկ ՀՀ դատական օրենսգրքի նախագծի 12 հոդվածի 4-րդ մասով ամրագրվել է շահագրգիռ անձի կողմից արդար դատաքննության իրավունքի փաստը հաստատելու և պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջով դատարան դիմելու իրավունքը: Հարկ է նշել, որ դատավարության օրենսգրքով դատական ակտի բողոքարկման միջոցով ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի պաշտպանության կառուցակարգի բացակայությունը տրամաբանական է: Մասնավորապես, ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման փաստը կարող է արձանագրվել միայն վերջնա-

¹⁵ Տե՛ս ՀՀ ՔԴՕ նախագծի 15, 65, 94 – 100, 140, 163 հոդվածներ և այլն:

կան դատական ակտի կայացումից հետո: Ընդ որում, իրավաբանական գրականության մեջ բազմիցս քննարկվել են գործի քննության ընթացքում դատարանի գործողությունների դանդաղության և ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը խախտող վարքագծի դեմ բողոք բերելու կամ դրանք վիճարկելու իրավակարգավորման առանձնահատկությունները¹⁶, որոնք, սակայն, մեր կարծիքով, կարող են խախտել դատավորների անկախության սկզբունքը և խոչընդոտել կոնկրետ քաղաքացիական գործով դատավորի կողմից ներքին համոզմունքի ձևավորումը:

Հետևաբար, եթե կայացվել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ապա ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման հիմքով դատական ակտը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն ավելի կխորացնեն իրավունքի խախտումը, կձգձգեն վարույթը, կհակասեն քաղաքացիական դատավարության տրամաբանությանն առ այն, որ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը ձևական նկատառումներով բեկանել չի կարելի:

Բացի այդ, խնդրահարույց է նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ճանապարհով ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի պաշտպանությունը¹⁷: Նման իրավական կառուցակարգը միանշանակորեն կարող է կանխարգելող նշանակություն ունենալ, սակայն իրավունքի խախտումը վերացնելու կամ իրավունքը վերականգնելու արդյունավետ միջոց լինել չի կարող, քանի որ դատավորին իր սահմանադրաիրավական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթը բոլորովին այլ խնդրային նշանակություն ունի, իսկ քննարկվող վարույթի արդյունքում էլ այս հիմքով պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը դատական ակտի վերանայման և բեկանման համար նոր հանգամանք դառնալ չի կարող այն պարզ պատճառով, որ իրավական նորմի խախտումը, այդ թվում՝ նոր հանգամանքը հանգեցնում են դատական ակտի բեկանման, եթե ազդել կամ կարող էին ազդել գործի ելքի վրա:

Վերոգրյալի հիման վրա կարող ենք փաստել, որ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը ենթադրում է ՀՀ իրավական համակարգում քաղաքացիատատարական այնպիսի կառուցակարգերի առկայություն և գործադրում, որոնք ուղղված են հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կողմից կատարվող արդյունավետ գործողությունների ապահովմանը, այդ թվում՝ դատավարության հնարավոր ընթացքը ձգձգող դատավա-

¹⁶ Տե՛ս **Жмурко С. Е.** Поправки в процессуальное законодательство: Федеральным законом от 30.04.2010 № 69-ФЗ «О внесении изменений в отдельные законодательные акты Российской Федерации в связи с принятием Федерального закона «О компенсации за нарушение права на судопроизводство в разумный срок или права на исполнение судебного акта в разумный срок». advokat.ru/grazhdanskiy-processrazumnyy-srok-razbiratelstva:

¹⁷ Տե՛ս **Հ. Մ. Տեր-Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 119-120:

ըության մասնակիցների ոչ իրավաչափ վարքագիծը կանխելուն, ինչպես նաև սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության այնպիսի տևողություն, որ վերջնական դատական ակտով հաստատված իրավունքը դիմողի համար հնարավորինս չկորցնի իր սկզբնական նշանակությունը:

Բանալի բառեր – *ողջամիտ ժամկետներ, գործի քննություն, դատաքննություն, գնահատման չափանիշ, արդար դատաքննության իրավունք, իրավունքի խախտում, փոխհատուցման պահանջ*

ВАГЕ ОГАННИСЯН – Проблемы реализации права на судебное разбирательство в разумные сроки в гражданском процессе в свете конституционных реформ РА. – Право на судебное разбирательство в разумные сроки – это элемент права на справедливое разбирательство. Критерии разумности были внедрены в правовую систему РА недавно, поэтому возможны проблемы с закреплением гарантирующих её процессуальных норм, а также с их правильным толкованием и применением. С учётом подходов ЕСПЧ к понятию разумных сроков в статье раскрывается сущность названного права в гражданском процессе, определены рамки его реализации, а также критерии оценки. Определение рамок действия права не только позволит указать разумные сроки, но и облегчит адекватную оценку их нарушения.

Ключевые слова: *разумные сроки, разбирательство дела, критерии оценки, право на справедливое судебное разбирательство, требование о компенсации*

VAHE HOVHANNISYAN – Issues of Realization of the Right to Fair and Public Hearing in Reasonable Time in Civil Procedure in the Light of Constitutional Reforms. – The right to fair and public hearing (case examination) in reasonable time that is being deemed as an element to the right to fair trial and criteria of evaluation of reasonableness have been recently introduced to the legal system of the Republic of Armenia (the RA). The lack of scientific analyses in domestic jurisprudence and judicial precedent for the subject matter should be noted, which may cause problems for reserving the procedural norms guarantying this right, correct interpretation and implementation of provisions stipulated by the RA Constitution and international treaties. As a result of scientific analysis of approaches which are formed in ECHR’s precedent law regarding the right to case examination in reasonable time, the author has elaborated suggestions directed towards revealing the very essence of this right in civil procedure, has established legal framework for its realization and preservation, as well as its evaluation standards. Moreover, establishment of civil-procedural frame for the action of the right not only will entail the maximum discovery of the substance of reasonableness of the case examination term, but also will make it easy to evaluate the violations of this right adequately.

The author has concluded, that the rights to litigation and execution of judicial act in reasonable time assume such duration and timeframe provided by the state (via the court or the Compulsory Enforcement Service), during which the initial meaning of the applicant’s subjective right (that is subject to protection) will be guaranteed in maximum.

Moreover, it has been specially emphasized, that the timeframes established by the law shall also be reasonable and the evaluation of whether the case has been examined in reasonable time may be carried out with collation and unity of standards established exclusively by the Code.

Key words: *Reasonable time, case examination, litigation, evaluation standard, right to a fair trial, violation of right, compensation claim*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **Արթուր Վաղարշյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ
Артур Вагаршян – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права ЕГУ
Artur Vagharshyan – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of Theory and History of State and Law, YSU
Էլ. փոստ՝ avagharshyan@ysu.am
2. **Վահե Ստեփանյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ
Ваге Степанян – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой европейского и международного права ЕГУ
Vahe Stepanyan – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of European and International Law, YSU
Էլ. փոստ՝ vstepanyan@ysu.am
3. **Գևորգ Դանիելյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ
Геворг Даниелян – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой конституционного права ЕГУ
Gevorg Danielyan – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of Constitutinal Law, YSU
Էլ. փոստ՝ gdanielyan@ysu.am
4. **Գագիկ Դազինյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ղեկան
Гагик Казинян – доктор юридических наук, профессор, академик НАН РА, декан юридического факультета ЕГУ
Gagik Ghazinyan – Sc. D. in Legal Sciences, Professor, Academician of RA NAS, dean of the faculty of Law, YSU
Էլ. փոստ՝ gghazinyan@ysu.am
5. **Տաթև Սուջյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ
Татев Суджян – кандидат юридических наук, ассистент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ
Tatev Sujyan – PhD in Legal Sciences, Assistant of the Chair of Criminal Procedure and Criminalistics, YSU
Էլ. փոստ՝ tatevsujyan@ysu.am
6. **Վահե Հովհաննիսյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ
Ваге Оганнисян – доктор юридических наук, доцент кафедры гражданского процесса ЕГУ
Vahe Hovhannisyanyan – Sc. D. in Legal Sciences, Associate Professor, Chair of Civil Procedure, YSU
Էլ. փոստ՝ vahehovhannisyanyan@ysu.am

**«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՆԴԵՍԻ 2017 Թ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

№ 1

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Վահե Ստեփանյան – Խորհրդարանի կայունության երաշխավորման հիմնախնդիրները ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում..... **3**

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Սերգեյ Մեղրյան – Հեռակա դատաքննության ինստիտուտը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծում **11**

Վահե Հովհաննիսյան – Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումը որպես դատական ակտը նոր հանգամանքով վերանայելու քաղաքացիադատավարական հիմք **26**

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Վահրամ Ավետիսյան – Բանկ հանդիսացող բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի համախմբման առանձնահատկությունները..... **40**

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Աննա Մարգարյան – Անչափահասների նկատմամբ պատժի և քրեաիրավական ներգործության այլ միջոցների նշանակման առանձնահատկությունները..... **55**

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Օլիմպիա Գեղամյան – Էկոլոգիական տեղեկատվության տրամադրման սահմանափակման որոշ հիմքերի իրավական կարգավորումը ՀՀ-ում **62**

№ 2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Արթուր Վաղարշյան – «Իրավունքի կիրառում» հասկացության հիմնահարցերը..... **3**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գևորգ Դանիելյան – Սահմանադրական իրավունքների իրացման իրավական մշակույթը..... **18**

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արսեն Հայկյանց, Մովսես Խաչատրյան – Անարդար պայմանները ապահովագրության պայմանագրում..... 33

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գևորգ Պետրոսյան – Աշխատանքային իրավունքների չարաշահման խնդրի շուրջ (ՀՀ աշխատանքային օրենսգրքի գիտագործնական մեկնաբանություններ)..... 44

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մամվել Դիրանդյան, Տաթև Սուջյան – Վճռաբեկ բողոքարկման սուբյեկտները..... 54

ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ

Աննա Մարգարյան – Անչափահասների հանցավորության վիճակը Հայաստանի Հանրապետությունում (1993-2016 թթ.) 71

№ 3

ՀԱՄԱՐԸ ՆՎԻՐՎԱԾ Է ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ

Արթուր Վաղարշյան – Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն) 3

Վահե Ստեփանյան – Նախագահի իրավական կարգավիճակը ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում..... 17

Գևորգ Դանիելյան – Մտքի, խղճի և կրոնի ազատության կառուցակարգային և իրավական երաշխիքները ՀՀ Սահմանադրությունում..... 25

Գագիկ Ղազինյան – Դատական իշխանության անկախության ապահովման սահմանադրական հիմքերը..... 42

Տաթև Սուջյան – Վերաքննիչ և վճռաբեկ ատյանների գործառնության դերի հստակեցումը սահմանադրաիրավական նոր կարգավիճակի լույսի ներքո..... 56

Վահե Հովհաննիսյան – Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի իրացման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում ՀՀ սահմանադրական բարեփոխումների լույսի ներքո..... 67

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

Համարը նվիրված է սահմանադրական նոր կարգավորումներին Номер посвящается новым конституционным урегулированиям The Issue is Devoted to the new Constitutional Regulations

- Արթուր Վաղարշյան* – Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն) 3
- Артур Вагаршян* – Конституционные нововведения в механизмах реализации и ограничения прав и свобод человека (системное и формально-юридическое толкование)
- Artur Vagharshyan* – Constitutional Innovations in the Mechanisms of Implementation and Limitation of Human Rights and Freedoms (Systemic and Formal Legal Interpretation)
- Վահե Ստեփանյան* – Նախագահի իրավական կարգավիճակը ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում..... 17
- Ваге Степанян* – Правовой статус президента в системе парламентского правления РА
- Vahe Stepanyan* – The Legal Status of the President in the RA System of Parliamentary Government
- Գևորգ Դանիելյան* – Մտքի, խղճի և կրոնի ազատության կառուցակարգային և իրավական երաշխիքները ՀՀ Սահմանադրությունում..... 25
- Геворг Даниелян* – Институциональные и правовые гарантии свободы мысли, совести и религии в Конституции РА
- Gevorg Danielyan* – The Institutional and Legal Guarantees of Freedom of Thought, Conscience and Religion in the Constitution of the RA
- Գագիկ Ղազինյան* – Դատական իշխանության անկախության ապահովման սահմանադրական հիմքերը 42
- Гагик Казинян* – Конституционные основы обеспечения независимости судебной власти
- Gagik Ghazinyan* – The Constitutional Bases for Securing the Independence of the Judiciary
- Տաթև Սույան* – Վերաքննիչ և վճռաբեկ ատյանների գործառնության դերի հստակեցումը սահմանադրաիրավական նոր կարգավիճակի լույսի ներքո..... 56
- Татев Суджян* – Уточнение функциональной роли апелляционной и кассационной инстанций в свете нового конституционно-правового статуса
- Tatev Sujoyan* – Clarification of the Functional Role of Appellate and Cassation Instance in the Light of the New Constitutional-legal Status

Վահե Հովհաննիսյան – Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի իրացման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում ՀՀ սահմանադրական բարեփոխումների լույսի ներքո.....	67
Vage Oghannisyan – Проблемы реализации права на судебное разбирательство в разумные сроки в гражданском процессе в свете конституционных реформ РА	
Vahe Hovhannisyan – Issues of Realization of the Right to Fair and Public Hearing in Reasonable Time in Civil Procedure in the Light of Constitutional Reforms	
Տեղեկություններ հեղինակների մասին	77
Сведения об авторах	
Information about the Authors	
«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» հանդեսի 2017 թ. բովանդակությունը.....	78
Содержание журнала "Вестник Ереванского университета: Правоведение" за 2017 г.	
The annual contents of the "Bulletin of Yerevan University: Jurisprudence" in 2017	

«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал "Вестник Ереванского университета. Правоведение" выходит три раза в год. Издаётся с 2010 года. Правонаследник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".

The "Bulletin of Yerevan University. Jurisprudence" is published thrice a year. It has been published since 2010. It is the successor of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Սանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Կայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 22. 12. 2017:
Տպաքանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ: